

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԿԿ

№ 1

JANVIER

1930

PARIS (France)



«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## 1929 - 30

Այս տարին էլ անցաւ դժգոյն եւ առանց ցայտուն բովանդակութեան: 1929 թւականը անմիջապէս շարունակութիւնը եղաւ նախորդ տարիներէ, միեւնոյն կարգի երեսոյթներով, միեւնոյն արտայայտութիւններով, առանց ուրոյն տեղ գրաւելու պատմութեան էջերում: Անցեալ տարիներէ պէս՝ այս տարի էլ Արեւմուտքը քրտնաթոր առաջ տարաւ «խաղաղութեան դործը», Արեւելքում շարունակեցին ներքին խմորումները եւ արտաքին ուժերի բախումները նրանց շուրջ:

«Պաղատութիւնը ամբողջով» ազդակներէ շար եւ առաջ պէտք է յիշել ընկերվարական շարժման ծաւալումը Եւրոպայում եւ ընկերվարական կուսակցութեանց յաղթանակները մի շարք երկրների մէջ: Անգլիական Աշխատանքական Կուսակցութեան երկրորդ անգամ իշխանութեան գլուխ գալը, գերման Սոցիալ-Դեմոկրատիայի կուսակցութեան մասնակցելը, սկանդինաւեան, բելգիական, չեխ, աւստրիական ընկերվարականների յաջողութիւնները զուտ անդակակն կարեւոր երեսոյթներ լինելուց բացի՝ նաեւ միջազգային խոշոր փաստեր են, որոնք աշաքին ազդեցութիւն ունեն ժամանակակից մարդկութեան կեանքի ընթացքի վրա: Անգլեամերիկեան մրցակցութեան մեղմացումը եւ ծովային սպառազինութեան սահմանափակման ճիգերը անմիջական արդիւնք են աշխատանքական կուսակցութեան քաղաքականութեան: Փրանսեզերման մերձեցման փաստը, խաղաղասիրական տրամադրութեան քաղաքացիական շովինիզմի կրակին ճարակ վարձած ժողովուրդների մէջ բացատրում են մեծապէս գերման ընկերվարականների թափած ջանքերով: Եւ, վերջապէս, Լահէի Պորճրգափողոյթը իր բոլոր հետեանքներով՝ գերմանական հատուցումների առևտրականացման ծրագիրը, Ռուսիի պարպումը դաշնակից ուժերից, Երնդի ծրագրի վաւերա-

ցումը շահազրգուած պետութիւնների կողմից եւ այս ձևով եւրոպական ժողովուրդների համերաշխութեան ուժեղացումը չէին կարող տեղի ունենալ, եթէ Լամանչի ա'յն ու այս կողմերում ընկերվարականները հեռու մնային իշխանութիւնից: Փաշիզմն այլևս անդորրութեան սպառնալիք չէ, ինչպէս չորս-հինգ տարի առաջ, բոլշևիզմը հաշի առնելիք լուրջ երեսոյթ չէ Եւրոպայի ներքին կեանքում: Արդի բուժութեան հասարակակարգի կայունացումը անվիճելի փաստ է այսօր, եւ ինչ որ ուշագրաւ է: Գրեթէ ամէն տեղ ընկերվարականներն էլ հարկադրուած են աջակցել այդ կայունացման՝ գտնելով վաղաժամ, դեռ անհնարին ընկերային յեղաշրջումն ու ընկերվարական հասարակակարգի հաստատումը աշխարհում:

Մինչդեռ Եւրոպան եւ Ամերիկան ամուր քայլերով ընթանում են կայունացման ճանապարհով, ասիական երկրները շարունակում են դեռ տատանել խաղաղութեան եւ խոտովութեան միջև՝ աւելի եւ աւելի հակելով դէպի ներքին տարածք ուժերի զսպումն ու խաղաղութիւնը: Հնդկաստան, Ալանիստան, Չինաստան՝ գլխաւոր հնցները ներքին եւ միջազգային բախումների՝ անցած տարւայ ընթացքում զգալի չափով յտաճացան խաղաղութեան ուղիներով եւ այլևս համաշխարհային փոթորիկների հրձիգներ չեն: Մանաւանդ Չինաստանը, որ բաւական երկար բոլշևիկեան քաօսում գայարելուց յետոյ՝ ինքնամփոփման եւ ազգային ուժերի համախմբման ու կազմակերպման աշխատանքն է կատարում:

Ամփոփման են ազգային-բարեփոխութեան շրջանը շարունակուած է եւ Թիւրքիայում, բայց զուգընթացաբար արդէն երեւան են գալիս եւ այնպիսի երեսոյթներ, որոնք աւելի շուտ, ապացոյց են քայքայիչ ուժերի զարգացման: Որպէս ախտանիշ, կարելի է ցոյց հարկ թիւրքական դրամի արժէքի թաւալըրը

անկումը, անցեալ տարւոյ վերջերին, հարկերի տարապայման ծանրութիւնը, պետական էլեւտացոյցի թերութիւնները, առեւտրական հաշիկշտի կրտսորականութիւնը, ժողովրդական տնտեսութեան աղաղակող բացերը, օտար դրամագլխի չափից աւելի կասկածամիտ ու վերապահ դիրքը: Արքան ամուր էր Թիւրքիայի միջազգային քաղաքական դիրքը — մի կողմից բարեկամական դաշնադրի վերականգնում Սորձրդ. Միութեան հետ, միւս կողմից՝ յամառ ճիգեր՝ մտցնելու Ազգերի Լիգայի մէջ — նոյնքան մտահոգիչ ներքին վիճակը:

Տնտեսական թերւոյթներից զատ շարունակում են գործել Թիւրքիայի տկարացնող եւ ուրիշ ազգականներ: Հակառակ երեւութեան անդորութեան՝ Թիւրք գանգաձանների խորքում դժգոհութիւնը շարունակում է ազդել ու զարգանալ: Դժգոհութիւն անասնելի հարկերից, դժգոհութիւն ապրուստի միջոցների սղութիւնից, դժգոհութիւն բեմախկան սակաւարեւութեան սանձարձակութիւններից, դժգոհութիւն իշխանութեան եւ պետական կարկանդակների չուրջ, դժգոհութիւն կրօնական եւ ազգային հոգի վրա:

Վերջին տեսակետից, իբրև դամոկրեան սուր Թիւրքիայի դիլիւն, շարունակում է կախւած մնալ քրդական սպառնալիքը: 1929-ի ընթացքում քրդական շարժումը ընդհանուր ծաւալ, արտաքին աշխարհի ուշադրութիւնը գրաւելու շափ ուժգնութիւն չունեցաւ, բայց ներքենապէս անպայման տարածեց, խորացաւ եւ աւելի կազմակերպւած ու համաչափ պայքարի ձեւեր ստացաւ: Թշնամանքը քիւրդերի եւ Թիւրքերի միջեւ սաստկացաւ: Քիւրդերի ինքնահաւաքման եւ զանազան ցեղերի միացման աշխատանքը աւելի իրական արդիւնքների հասաւ: Եփրատից դէպի արևելք եւ Տարսուսի երկու փեշերի վրա, ամբողջ տարածութիւնը մինչեւ պարսից սահմանը ու մինչեւ Արաքստ, Հայաստանի ու Քիւրդիստանի բոլոր մասերում ընդհանուր անխղաղութիւն է տիրում, եւ Թիւրք կառավարութիւնը ստիպւած է խոչոր ուժեր պահել «հանրային անդորրութեան» ապահովութեան համար: Թիւրք — քրդական պայքարը հետզհետէ ստանում է չէթայական կախիների բնոյթ: Խաղաղարեւութեան փորձից յայտնի է, թէ որքան՝ դժուար է յաղթանակը, երբ ամբողջ երկիրը ապստամբ՝ խմբական կռիւ է մղում, եւ կառավարութիւնը, զուրկ տեղական յենարաններից, միայն բանակի ուժին է ապահինած: Քիւրդական հարցը Թիւրքիայի ամենավիրավոր կողմն է այսօր եւ այնքան էլ հեշտ չի լինելու նրա կարգադրութիւնը: Նա այն խնդիրներից է, ինչպէս եւ հայկական հարցը, որոնք սպասում են իրենց լուծման միջազգային միջոցներով եւ մինչեւ չլուծւեն, Թիւրքիան հանգստութիւն չի տանի:

Հայերիս համար մասնաւոր կարեւորու-

թիւն է ներկայացնում հայկական բեկորների վտարումը Թիւրքիայից: Նախ եւ առայ տնտեսական պատճառներով պէտք է բացատրել այդ քայլը. անհաշիւ «յոթնալ դոյրքեր» լափկուց յետոյ, Քեմալի իշխանութիւնը պէտք ունի նոր աւարի, եւ հայերին քշելով՝ յափշտակում է նրանց ստացւածքը: Անշուշտ, հայերին կր յայրող են եւ միւս ոչ-Թիւրք տարրեր: Մեծ ճանապարհի աւազակներին յատուկ այս թաւանը կատարում է օրը ցերեկով, «քաղաքակիրթ» ժողովուրդների աչքի առջեւ, եւ ոչ ոք բողոքի ծպտուն անգամ չի հանում: Այսպէս է յետպատերազմեան աշխարհը...

Հայերի վտարումը ունի, անշուշտ, եւ քաղաքական առատ. միատարր, Թիւրք օլլու Թիւրքերից կազմած պետութիւն — ահա քեմալայպետութեան տենչը, որ կանաչ-կարմիր գոյներով փթթեց եւ 1929-ի ընթացքում Անատոլիայից սկսած մինչեւ Ազրբէյան եւ մինչեւ Ամու-Դարիայի ու Վոլգայի եզերքները: Քեմալական այս տենչերը ջերմ արձագանք են գտնում եւ կարմիր գծից այն կողմ, «սոցիալիզմի կառուցումով» զբաղւած համաթիւրքականների մէջ:

Միակ «յոզափոխական» վայրը երկրագնդի երեսին 1929-ին էլ շարունակեց մնալ Սորձրդ. Միութիւնը: Մարդիկ այնտեղ դեռ հուսատացնել են ձեւացնում, թէ համաշխարհային յեղափոխութեան գործն են հետապնդում եւ ինչ որ «նոր աշխարհ» կառուցանում է: Բայց այնտեղ էլ նախկին թափը կոտորած է արդէն. հաւատ ու ուղեւորութիւն չկայ: Ինչ որ արւում է՝ արւում է որպէս պարտականութիւն: Ընկերվարութիւն, աշխատաւոր մարդկութեան իղէլալ, յեղափոխական անձնագոհութիւն — ոչ մէկը չի մնացել այդ զաղափարներից: Ներքին ճակատում ստեղծւում է այլանդակ, աշխատաւորութեան ահուկ շահագործման վրա հիմնւած, դիշատիք մի անտեսութիւն, արտաքին ճակատում՝ մերկ աշխարհակալութիւն: Իսկ բոլորի համագումարը՝ իշխանութեան անյաղ տենչ եւ նիրական գաղափարների սրբապղծում:

1929 թւականը խորձրային իշխանութեան համար եղաւ նորանոր դժարութիւնների եւ հիտաթափութիւնների տարի: Արտաքին վիճակը էական փոփոխութեան չենթարկեց. ուր որ էր 1928-ին, նոյն տեղը մնաց եւ 1929-ին: Ընչու է, անդլեւխորձրային խզւած յարաբերութիւնները վերականգնւեցին, բայց այնպիսի պայմաններով, որ, թերեւ, աւելի ավել լինէր չվերականգնէին: Արեւելեան մանջուրական երկաթուղու վէճը հարթեց արտաքինապէս «պատուաւոր» կերպով, բայց Չինաստանը ըրրորովին հեռացաւ Մոսկուայի ապրեցութեան ջրջանից: Բոլշեւիկների ձեռքից դուրս ելաւ եւ Աւղանիստանը, որի գահի վրա բազմեց «արեւ-

մտեան հակումները» տէր նազիր Խանր: Միակ շօշափելի «նւաճում»-ը կարախանի կնքած դաշնագիրն է Անգորայում, որով թիւրքիան մի որոշ ժամանակ էլ մնում է «բարեկամ ու դաշնակից» Խորհրդ. Միո թեան: Ամերիկայի ճանաչման հարցը մնում է մեռելու կէտի վրայ. յարաբերութիւնները Յրանսիայի հետ ո՛չ մի բարելավման նշան ցոյց չեն տալիս: Գերմանիան արմատապէս բուժւեց իր «արեւելեան» մոլութիւնից: Անգլիական ճանաչումը անաչր ամուսնութեան տպաւորութիւն է թողնում. բարի պտուղ չեն անկալում երկու կողմերն էլ: Այսպիսի պայմաններում խօսել ինչ որ «նւաճումները» մասին՝ նշանակում է պարզապէս՝ դադարած սրտի մխիթարանք: Խորհրդ. Միութիւնը արտաքին յարաբերութիւնների տեսակէտից անցած տարի էլ մնաց անել փակուղիի մէջ:

Եթէ, սակայն, արտաքին քաղաքականութեան բնագաւառում արձանագրելիք աչքի ընկնող երեւոյթներ քիչ կան, ներքին կեանքում տեղի ունեցան մի շարք առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող դէպքեր: Ամենից առաջ «վերջնականապէս» հաշտարարի ենթարկւեց «ձախ վտանգը», որի պարագլուխ Տրոցկին հանւեց քաղաքավայրից եւ քուեց Մարմարայի կղզիները: Ապա, նոյնպէս «վերջնականապէս» ջախջախեց «աջ վտանգը», որի գաղափարախօսներ Ռրեդով, Բուխարին ու Տոմսկի՝ մեղայի եկան Ստալինի կրօնկներու տակ: 1929-ի վերջերիս այլեւ ոչ «ձախերը» կային, ոչ «աչերը», Պոլիտբիւրօն փաստօրէն դադարեց գոյութիւն ունենալուց, եւ հաստատուեց Ստալինի անձնական միաձեծանութիւնը: Այլեւս իշխողը Ստալինի մեղի բունեցն է: Տարիներէն սարդանափայլեան շքեղութեամբ տունեց Ստալինի ծննդեան յիսնամեակը եւ կրեմլի բարձունքներից աւետեց ի լուր աշխարհի, որ յօրեկարր «ճամաշխարհային բանտրութեան պետն է» «Լեւինի ճանճարեղ աշակերտը», «կուսակցութեան եւ բանտր դասակարգի պետը»... Իրերի տրամաբանութիւնը անողոք է. վերջապէս ծառան գտաւ իր տէրը. Կոմկուսը ունեցաւ իր պետը...

Ստալինի անձնական սեփմի պաշտօնական ճանաչումը, ի հարկէ, չի մնաց անհետեանք, եւ կրքերն ու կոխը իշխանութեան համար կը սրեն է՛լ աւելի: Ընդդիմախիւրների դաւաճան պետերի տեղ զանգաւածների միջից նոր Տրոցկիներ ու Բուխարիներ գուրս կը գան՝ աւելի հաւատարմոր ու վճառական, որոնց զայրոյթի առջև չի դիմանայ ո՛չ մի բունապետ:

Իշխանութեան կուրց ոչ պակաս սրած են եւ տնտեսական փոխարարութիւնները: «սոցիալիզմի կառուցումը» այլեւս անհանգստորթի ձեւերի է հասել: Կատաղի պայքար «կուլակի» դէմ, հաւաքական տնտեսութիւն-

ների ըռնի կազմակերպում գիւղում, արհեստական ճարտարաբանագում, աշխատանքի անընդհատ շարաթ, անտեսութեան «Տնտեսաբան ծրագիր» իր շարարատիկ հետեւանքներով — այս ամենը անտեսել չիթթ ու խառնափնթորութիւն է առաջ բերել խորհրդային տնտեսութեան մէջ: Գործազրկութեան աճում, ցանքերի սպառնալի կրճատում, քաղաքի եւ գիւղի յարաբերութիւնների անասման յարում, ապրուստի յուսահատական պայմաններ, անվերջ պոչեր պետական խնտութիւնների եւ կօսպերատիւների առջև, համատարած թշտութիւն, ժողովրդական զանգաւածների խուլ յուզում ու դժգոհութիւն եւ, իբրեւ անխուսափելի հետեւանք, զազանային դաժանութիւններ կառավարութեան կողմից, վայրագ հալածանք, ձերբակալութիւն, աքսոր, զնդակահարութիւն — այս էր խորհրդային իրականութիւնը 1929-ի ընթացքին: Ռազմական կոմունիզմի սեւ օրերը յիշեցնող գոյափիճակ...

Մասնաւորապէս դժոխային էր Հայաստանի դրութիւնը, որը, իբրեւ ծայրագաւառ, աչքից հեռու՝ սրտից հեռու, թողնւած էր իր քախտին, լքւած եւ անօղնական: Հայաստանի Կոմկուսն ու կառավարութիւնը ամբողջ տարի ցրադւած էին ներքին վէճերով, փոխադարձ ամբաստանութիւններով եւ աթոռակուտով. երկրով զբաղւելու ժամանակ չկար: Խորհրդային տնտեսութեան մէջ ախրում էր քսօս. գիւղը դարձել էր խաղայիք «հարաւային կարգով» «կոյտնտեսութիւն» կառուցող կոմսոմունների ձեռքին: Մշակոյթի ասպարէզում շարունակուեցին «պոլիտքրական» ճամարտակցութիւնները եւ «իդէոլոգիական պայքարը» երկրի կենդանի ստեղծագործական արտայայտութիւնների դէմ: Կապը Հայաստանի եւ գաղութանայ զանգաւածների միջև աւելի եւս թուլացաւ: Արտագաղթը շարունակեց անընդհատ: Եւ ամենատրամափելին՝ այն բարոյական, գաղափարական արտագաղթը, որ աւելի եւ աւելի ուժեղանում է գաղութներում:

Գաղութների համար 1929 թւականը շօշափելի բարիք չբերեց. շարունակեց ցրւած աշխատանքը աղգային ուժերի հուարման ու կազմակերպման եւ աղգային մշակոյթի գարգացման: Ամէն հաւատած, ամէն գաղութ, ամէն յարանաւտութիւն, ամէն կուսակցութիւն շարունակեց քայլել ասանձին-ասանձին, յաճախ, ներհակ ուղիներով, անհաս պայքարելով իրար դէմ: Իւրաքանչիւր վայրում որոշ աշխատանք կատարեց եւ որոշ արդիւնքներ ստացուեցին, բայց հաւաքական գործ, ընդհանուր ծրագրով, ընդհանուր նպատակներով եւ համերաշխ ձիգրելով՝ անցեալ տարի էլ գլուխ չեկաւ: Գաղութների ինքնապաշտպանութեան ամենազրու միջոցը՝ համագաղային կազմակերպութեան պահանջը մնում է չզոնացած եւ

հերթական ինդիքը եւ, որպէս այդպիսին, անցնում է ժառանգութիւն 1930 թւականին:

Գաղութահայ կեանքի ամենաքննարկող երեւոյթներէից մէկը պէտք է համարել նոր սերնդի գործօնութիւնը: Սկսում է հասարակական բեմի վրա երեւալ յետպատերազմեան սերունդը, մասնաւոր որբութիւնը, որ հասակ առած՝ դալիս է իր խօսքը ասելու, իր մասնակցութիւնը բերելու ազգային բազմատեսակ միութիւնների, ձեռնարկների եւ համախմբումների մէջ: Ազգային այդ դերը լինելու է աւելի աչքատու եւ բարերար մեր կեանքի համար:

Մեր կուսակցական կեանքի գլխաւոր երեւոյթը 1929-ին, ի նորից, 11րդ Ընդհանուր Ժողովի գումարումն էր: Ժողովի յայտարարող հրատարակի վրա է, ամենքին մատչելի: Մեզ մնում է արձանագրել միայն, որ նա նոր թափ եւ պորձունէութեան նոր ոգի աւելցնելու եւ արտադասմանի մեր բնկերներին եւ մարմիններին: Հ. Յ. Դաշնակցութիւնը շարունակում է մնալ հայ հաւաքական կեանքի գլխաւոր երեւոյթը, ազգային ամենազօրաւոր մղիչ ոյժը: Հայ աշխատաւորութեան ճնշիչ մեծամասնութիւնը, գործօն երիտասարդութիւնը համարեա ամբողջապէս նրա մէջ են կամ նրա հետ: Եւ այդ պատահականութիւն չէ. Դաշնակցութիւնը շարունակում է խտացնել իր մէջ եւ ազգային-ազատագրական իղձերը, եւ երիտասարդութեան խանդավառող զաղափարները եւ հայ աշխատաւորութեան քաղաքական ու դասակարգային տենչերը:


Դաշնակցութեան դերը գաղութներում ամենքի աչքի առջև է: Որ երկրում էլ նա պատկառելի գործօն է, ցոյց է տալիս այն անզուսպ, կատաղի պայքարը, որ կոմիւնսն ու Հայաստանի կառավարութիւնը վարում են նրա դէմ: Սորհրդային հայ եւ օտար մամուլը, բեմերը, դրականութիւնը, ոստիկանութիւնը,

կառավարական մարմինները — ամենքը ամէն օր սնրնդհատ պատգամ են Դաշնակցութեամբ: Չեքրակալութիւններն ու քարտրները չեն վերջանում. Հայաստանի բանտերը, Մեռելար, Ռուսաստանի ու Սիբիրի աքտորավայրերը, Սոբովկի կոչած դժոխքը լիքն են դաշնակցականներով կամ դաշնակցական անունով բռնաւաճներով: Բաղմաթիւ անգամներ յայտարարեց, որ Դաշնակցութիւնն այլևս չկայ, մեռած է, «լիւլիւղացիայի է ենթարկւած», եւ, սակայն, Դաշնակցութիւնը կայ ու կայ. նրա ուրակները հանգիստ չի տալիս Հայաստանի եկտր մարդպաններին:

Եթէ միայն կուսակցական մտահոգութիւններով չափելինք երեւոյթները, 1929 թւականը մենք պէտք է համարէինք գոհացուցիչ. Դաշնակցութեան համար վերելքի տարի էր անցած տարին: Բայց կուսակցութիւնը մեզ համար միջոց է միայն, գէնք՝ ծառայելու համար հայ աշխատաւոր Ժողովրդի նպատակներին: Այս նպատակների իրագործման տեսակէտից 1929 թւականը անցաւ գրեթէ անպտուղ: Ազգային եւ միջազգային կեանքը կեցաւ այնտեղ, որտեղ որ էր: Եւ հասունացող ինդիքների լուծումը մնաց 1930 թւականին:

Ի՞նչ կարելի է սպասել 1930 թւականից: Հիմք կա՞յ նոր սպասելիքներ:

Անցած տարւայ կեանքի վերլուծութիւնը իրաւունք է տալիս ենթադրելու, որ նոր զէպքերի համար ա՛յս տարի աւելի հաւանականութիւն կայ, քան թէ անցեալում: Ընկերային երեւոյթների լարումն էլ որոշ սահմաններ ունի, որից անդին անխուսափելի է կամ լարերի թուլացումը, կամ պայթիւնը: Մեզ մնում է, կատարելով կեանքի անմիջական թելադրանքները, հետեւել երեւոյթների զարգացմանը աշարջորէն եւ կազմ ու պատրաստ դիմաւորել զալիք զէպքերին:



# Մտածումներ Հ. Յ. Դաւնակցութեան մասին

Մեր կուսակցութիւնը «Նայ» յեղափոխական գաշնակցութիւն կոչուելով՝ այդ հայ բառի մէջ դնում է և մի ուրիշ բովանդակութիւն: Նա հայ կազմակերպութիւն է ոչ միայն ուրիշ ազգերի նակզրութեամբ, իբր նրանցից անջատ ու տարբեր մի ուրոյն ազգի կազմակերպութիւն, այլ և իսկ է ինքն իր ազգային հաւաքականութեան մէջ՝ իբր հակադրութիւն ներքին հասարակական բաժանումներին: Նա Խուսաստանի հայոց կուսակցութիւնն է և ոչ Տաճկաստանի հայութեան, այլ հայոց ազգի կուսակցութիւնն է: Նրա համար չկայ հպատակութեան խնդիր, այլ ցեղակցութեան: Առաւել ևս նա Դաքայազցու կուսակցութիւնն չէ կամ Սեբաստացու: Նա հայութեան քաղաքական ազդակն է, անկախ նրա քնակալայրից: Իր անդամների հպատակութեան կամ տեղացիութեան պիտակը չէ, որ արժէք ունի, այլ նրանց հայ լինելու հանգամանքը: Ամէն մի հայ, ս'ը անդացի և լինի, Դաւնակցութեան անդամ է, եթէ գոհացում է տալիս Կանոնադրի չինգ պահանջներին: Դաւնակցութիւնը չի ճանաչում քաղաքական սահման կամ աշխարհադրական բաժանում, այլ ցեղակցական տարբերութիւն միայն: Նրան անդամակցում է ամերիկացի և լինի, Դաւնակցութեան անդամ է, եթէ գոհացում է չնմխական հարեանից և ձեռք է մեկնում հեռաւոր ցեղակցին:

Միաժամանակ Դաւնակցութիւնը խորի չի դնում յարանանդութեանը միջև: Նրա համար նոյնարժէք են լուսաւորչականը, կաթոլիկն ու բողոքականը, բաւական է, որ նրանք հայ են ծագումով և յեղափոխական իրենց տիպարով ու մտայնութեամբ: Դաւնակցութիւնը դաւանական կազմակերպութիւնն չէ, այլ ազգային-քաղաքական կուսակցութիւնն է: Այս երկու հանգամանքերը Դաւնակցութեանը ստոյլն են համապատասխան ընդթիւն և նրա հետևորդների մտայնութեանը՝ ազգային գոնաւորում: Դաւնակցականն ամենից ատալ իր մէջ հայն է դրում, յետոյ միայն տեղացին և յարանունը: Նա հայութեան շնորհիւ է, որ ընկեր է միւս հոյակերն մի և նոյն կուսակցութեան մէջ, բայց իբր անդացի, նա անո՞ւմ կատարէ է լինել իր հայրենակցական միութեան և իբր դաւանող՝ իր եկեղեցու: Դաւնակցութիւնը նրա հայութեան է իր կոչն ուղղում և ոչ նրա հայրենակցութեան կամ դաւանանքին: Իր քաղաքական ծրարները պիտարբերում են բովանդակ հայութեան և Հայաստան աշխարհին, ոչ թէ նրա այս ու այն հատուածին կամ այս ու այն գաւառին: Գաւառ ու հատուած նրա համար արժէք ունեն համազգային ազգային տեսակէտով և բովանդակ ազգի ճիշդերն է աշխատում կազմակերպել համազ-

գային քաղաքական ազգային հասնելու համար: Երբ միջմուխ է լինում Հայ-Թաթարական ընդհարումներին կամ Մասունի ապստամբութեան՝ նրան մտահոգում է հայ տարրի պաշտպանութիւնն անհասարակ, որովհետև իր Մրաղիքն այդ տարրի բարեկեցութեան համար է և այդ տարրն ունի իբր չի՞ք պայքարէ և դործի: Հայ տարրի գոյութիւնն առաջին պայմանն է հայի բարեկեցիկ գոյութեան, ուստի համազգային ինքնապաշտպանութեան գործը առաջին մտահոգութիւնն է Հ.Յ.Դաւնակցութեան, լինի այդ ինքնապաշտպանութիւնը նրա թական թէ ոչական, այսինքն կենդանական գոյութեան թէ մշակութային կերպարանքի պահպանութեան համար:

Դարեր շարունակ հայութիւնը չի ունեցած մի կազմակերպութիւն, որ համայն հայութեան քաղաքական շահերն ունենար իբր մտահոգութեան նպատակ: Եկեղեցին, որ մի ժամանակ կատարում էր այդ պաշտօնը, անչքացաւ այն օրանից, երբ տարբեր դաւանանքներ բուն դրին հայութեան ծոցում: Յիստոնական թերից հայ մտաւորական դասի գլխակցութեան մէջ ազգ և եկեղեցի գատեցին իրարից և երկուսը նկատուցին իբր տարբեր գոյացութիւններ՝ ոչ թէ ազգ ու եկեղեցի՝ նոյնացած իրար, այլ եկեղեցին իբր ուրոյն դաւանական համայնք՝ միևնոյն հայ ազգի ծոցում: Բողոքականն ու կաթոլիկը, որ հայոց պատմական եկեղեցուն չէին պատկանում, դրանով չէին դադարում հայ ճանաչելի և լուսաւորչական եկեղեցին, որ համարում էր ազգային, նկատուց հայոց եկեղեցիներից մէկը, թէև ամենից զորաւորն իր անդամների թւով և պատմական լուքով: Այսպիսով եկեղեցին դադարեց ազգը ներկայացնել և Տաճկաստանի հայոց Մահաճանդութիւնը եկաւ սահման դնելու ազգին և եկեղեցուն, առանց սեպան, անմասնելու իրարից: Նա լուսաւորչական եկեղեցու Մահաճանդութիւն լինելով՝ գատում էր լուսաւորչական հայութիւնը բողոքականից և կաթոլիկից, բայց միաժամանակ լուսաւորչական հայութիւնն ինքն իր մէջ սահման էր դնում աշխարհիկ և հոգեւորական տարրերի միջև: Այսպիսով մեր պատմական ազգայնութեան մէջ աստիճանաբար առաջ եկաւ մի ճեղքածօք: Իր դաւանական ապրումներով հայը մնաց իր եկեղեցու մէջ — լուսաւորչական, բողոքական թէ կաթոլիկ — իսկ իր աշխարհիկ ապրումներով գատում նրանից: Եւ մինչդեռ հայոց հարցի ծագման օրերին եկեղեցականը դժկամակութեամբ դարձաւ բերան հայութեան քաղաքական տենչերի, այնուհետև նա չեղ լինեացաւ հայ ժողովուրդի քաղաքական ճամբից, ու թէ է անհատ հոգեւորականներ յարեցին քաղաքական

չարժման՝ բայց եկեղեցին իբր ազգային հաստատութիւն մասնակից չեղաւ հայոց յեկափոխութեան: Եթէ երբեմն դուրս եկաւ այդ մեկուսացումից, այդ քայլն արեւ ժողովուրդի բունազատութեան տակ: Այսպիսով հայութիւնն իր քաղաքական մտածումով ու գործերով դուրս եկաւ եկեղեցու շրջափակից և մեր հանրային դարգացման գիծը տարաւ աշխարհական ուղիութեամբ: Այս պատմական շարժման մեծադոշն այդպէս այսօր Դաշնակցութիւնն է: Նա վերադարձ չունի զէպի հին կացութիւնը: Հայութեան քաղաքական կեանքի դեկավարութիւնը նա իր ձեռքն է առած և սոցալիւն միւս խորակցութեանց նա շարունակ հրատար է կարգում քաղաքական, աշխարհիկ գործերի շուրջ գործակցել իրան կամ պայքարել իր դրօշի տակ ոչ իբր դաշնակցական, ոչ իբր այս ու այն դաւանանքին աշակերտող, այլ իբր հայ մարդ: Այսպիսով, որոչ է Դաշնակցութեան գիբըր հայոց եկեղեցիներին հանդէպ: Նա դորձ ունի ոչ նրանց դաւանութեանց, այլ նրանց անդամների հետ, որոնց արժէք է տալիս ոչ թէ նրանց դաւանութեան, այլ նրանց քաղաքական արամադրութեան համար: Կասկածան բարձրացող կամ բանտարում տառապող կուսակցականի մէջ, ոչ թէ նրա դաւանանքն է նկատում, այլ նրա յեղափոխական գործն ու տիպարը և նա չի մերժում իր նահատակների և հերոսների շարքը դասել այլապէս հայերին, ինչպէս և խախր չի դնում այլապէս հայ պաշտպանների միջև, երբ ծրարում է հայութեան օգնական: Դաշնակցութեան մէջ, իսկ դուրսը Դաշնակցութեան անդադրում քարոզի շտրհի կաթոլիկ հայ գիւղացին դադարեց «Քրիստոս» նկատել իրան և հայ զգաց. այդպէս նաև բողոքականը: Այս սեռակէտով Դաշնակցութիւնը հայոց ազգային ինքնազոտակցութեան մեծադոշն ազգային եղաւ և շարունակում է լինել:

բութիւն որ ունին անհատներն իրար հանդէպ և օրէնքի դիմաց, պէտք է ունենան և ազդերն իրար հանդէպ՝ միջազգային օրէնքի դիմաց, որ ոչ թէ ուժի գործիք պիտի դառնայ, այլ արդարութեան ոյժ: Ինչպէս չկան գերադաս և ստորադաս զարգայինք նոյն պիտանութեան մէջ, պէտք է, որ լինեն զարգացում ու ստորադաս սպղեր նոյն երկրագոյնտի վրա. կարողութեամբ ու հմտութեամբ տարբեր իրարից՝ իրատակաւ նրան: պէտք է լինեն նոյնիբար:

Մենք մտանակից ու համակիր ենք միջազգային շարժումների, բայց մենք աշխատում ենք արդ շարժումը նպատատար դարձնել հայ ժողովուրդի իրաւական կացութեան համար: Հայ ժողովուրդը մենք չենք համարում միջազգային շարժումների ստորադաս միջոց, այլ գերադաս նպատակ, միւս ազգերին նոյնիբար: Ազգային վերելքի հոգեբանութիւնն է իշխում մեր շարժերի մէջ, մինչդեռ մեր կակառակորդ բանակում իշխում է ազգային նւատութեան հոգեբանութիւն: Երկուս էլ իրականացն ենք մեր ժողովուրդի ուժերի չափին. երկուս էլ լաւ գիտենք մեր ժողովուրդի կարողութեան սահմանը, բայց երկուս էլ անարժէք չենք համարում ժողովուրդի ոյժն ու կարողութիւնը, այլապէս մենք չէինք հետապնդի ազգային-քաղաքական Մրազիբ և նրանք՝ միջազգային յեղաշրջում: Երկուս էլ կարծում ենք, որ հայ ժողովուրդը մի ոյժ է, բայց մինչդեռ նրանք այնքան նւատ են կարծում որդ ոյժը, որ անհարկն և անիմաստ են համարում ազգային քաղաքականութիւնը միջազգային թոհ ու բոսն մէջ, մենք կրթնած մեր անցեալ գործերին և ներկայ ճիւղերի միշտ մեծացող արդիւնքին՝ այնքան զօրաւոր, բայց մահաւանդ զօրացող ենք նկատում մեկ, որ խելախում ենք նոյնիբար գոյութեան ձգտիլ՝ ուրիշ ազգերի շարքում և նրանց հաւասար: Նրանք ձգտում են ստորադաս ազգերին հաւասար՝ սպրել մի մեծ ու հզօր ազգի մականի տակ իրենց աշխարհագրական բնավայրի մէջ. մենք աշխատում ենք մեծ ու հզօր ազգին նոյնիբար՝ սպրել անկախ ու ազատ մեր սեփական քաղաքական հայրենիքի մէջ: Նրանք յարմարացումիս սպակեներ են, մենք՝ ըմբոստութեան. ուստի նրանց շուրջը հաւաքում են հանդուստաէտ կեանքի սիրահարները, որ աշխարհը դժակ են կարծում իսկ իրանց դասակ, իսկ մեր շուրջը հաւաքում են անհանգիստ ետերերը, որ բողոք ունեն աշխարհի անիբար կարգերի դէմ և ձգտում են արդարակուս ապագայի: Նրանք լաւ են համարում ա՛յն, ինչ որ հրամայում են տէրն ու մականաւորը. մենք լաւ ենք համարում ա՛յն, ինչ որ ստեղծագործում են մեր ազատ միտքն ու զգացումը, մեր սնցեալին և ուժերին կրթնած մեր կենսական շահերից թևալող: Այս պատճառով մենք անուղղիկ իրկախոսներ ենք, նրանք ձկուս իրապաշտներ: Մենք բարձրանում ենք դէպի տառապանք՝ ժողովուրդն ու կենցաղը արնացնելու բուն տենչով ու մշակակտութեամբ, նրանք լիջում են դէպի հանդիտ, շղիկ բարոյական լճացում ու քաղաքային: Երկու բանակի մէջ և ետ ու գիւս կայ շարժանքի. բայց մերը նման է զէպի զիբրերը սաջող բանակի ետ ու գեւին, նրանք որդնոտող մտի, ուր ամէն մի որդ պարտանում է հանրային մտի քայքայման գնով: Հասկանալի է, սր այս երկու մտայնութեան մէջ միութեան

Դաշնակցութեան հայ կրօնում ճշտում է նրա գիրքը նաև հայ աշխարհական շարժումն միւս հոսանքների հանդէպ: Նրանք, որ ստորադասում են ազգի գաղափարը միջազգային դադափարին, տարբերում են մեզանից, որ գերադասում ենք ազգի ըմբռնումը միջազգային ըմբռնումից: «Միջազգային» ասելով մենք հասկանում ենք նոյնիբար ազգերի ազատ դաշնակցութիւն և ոչ իբր ստորադաս ու գերադաս ազգերի կախումաւոր կապակցութիւն: Մենք հաւատարմ ենք Մեծ Յեղափոխութեան գաղափարին և ձգտում ենք իրացնել այդ պաղափարները ոչ միայն նոյն երկրի քաղաքացիների միջև, այլ և նոյն երկրագոյնի ազգերի միջև: Մեր գերադոշն նպատակներից մէկն է նոյնիբար դարձնել ոչ միայն անհատներին, այլ և ազգերին և քաղաքացիական իրաւունքի նորմերը դարձնել միջազգային իրաւունքի նորմեր: Ինչպէս քաղաքացիական իրաւունքը խախր չի դնում անհատների միջև և բոլորին ճանաչում է նոյնիբար միևնոյն օրէնքի առջև, այնպէս էլ մեր ձգտումն է, որ ազգերն՝ իբր անհատներ՝ ճանաչանեն նոյնիբար միջազգային օրէնքի առջև: Ազգը մենք նկատում ենք հաւաքական միւսուր, որ ունի իր սեփական կերպարանը. նա պէտք է դառնայ իրաւական անձնաւորութիւն՝ միջազգային իրաւունքի հանդէպ: Ինչ յարաբեր-

կոր չկայ. նրանք անհաշտ են իրար հետ և անհաշտ պիտի մնան: Ճահիճը չի կարող արև հանդուրժել. մէկի ջորութիւնը միւսի չքացումն է: Այս պատճառով Դաշնակցութիւնը ստեմ է բարցուչ. «Սէ կէի արկանել իտպաղութիւն, այլ սուր» և Մ. Նայբանդեանի հետ կանչում է որտարայ. «Որհնէկայ է պտոնըազմը»:

Դաշնակցութեան «ճայ» կոչումից ծագում են մի շարք վերաբերումներ դէպի մ'ը հանրային հաստատութիւններն ու գործերը: Բոլոր մասնակի միութիւնները առնազն հանդուրժելի են Դաշնակցութեան համար, բայց դուրս են նրա սահմանից: Դաշնակցականը կարող է այս կամ այն հայրենակցական միութեան անդամ լինել, բայց Դաշնակցութիւնը հայրենակցական միութիւն չէ. ինչպէս կարող է այս կամ այն յարանանդութեան անդամ լինել, բայց Դաշնակցութիւնը յարանանդութիւն չէ: Դաշնակցականը կարող է այս կամ այն գրական բարբառով գրել, բայց Դաշնակցութիւնը լեզուական ինդիքներ չունի: Սրանք ներքին հոգսերը, կազմակերպական ինդիքները, լաւն ու վատը կարող են դաշնակցականին մտահոգել, լաւն կուսակցութեան հոգածութեան առարկան չեն: Որեւէ գրական, գիտական, գեղարեստական, չափակցական և այլ կարգի միութիւններ կարող են դաշնակցական անդամ ունենալ, բայց Դաշնակցութիւնը վեր ու դատ է այս բոլոր մասնակի և անջատ միութիւններից: Այս բոլոր միութեանց մէջ դաշնակցականը կարող է մտնել՝ միշտ մնալով «դաշնակցական»: այսինքն պահելով իր «դաշնակցական» մտայնութիւնը, իր Մարգիրն ու Կանոնագիրը և ամէն ջանք թափելով նրանց իրացման համար: Նախ Դաշնակցական գործն ու պարտականութիւն, յետոյ ուրիշ կարգի աշխատանք ու մտահոգութիւն. Գուցէ նա ունի կարողութիւններ, որոնց համար Դաշնակցութիւնն ապարգէ չունի, բայց ա՛յն կարողութիւնները, որ պիտանի են «դաշնակցական» գործին՝ նա պատուար է արժեցնել լիովին և անվերապա: Իր կուսակցութեան համար: Ինչ որ պէտք չէ Դաշնակցութեան՝ ա՛յն է արամաղբելին այլ գործի համար: Մտնելով այլազան միութեանց մէջ՝ Դաշնակցականը օգտագործում է և պէտք է օգտագործել նրանց մի մեծ, ընդհանուր և համագրգային նպատակի համար, որ ձևակերպում է իր Մարգիրը. «ձիացեալ, անկախ և ընկերավար Հայաստան»: Բոլոր մասնաւոր միութիւնները հանրային շահեր ունեն նկատի և այս կամ այն հարաբային շահն են համարում հիմնական և յրճախ՝ գերադաս: Առանց այս սահմանափակ մտայնութիւնն ունենալով՝ «դաշնակցականը» մտնելով այդ կարգի միութեանց մէջ, պէտք է ջանայ նրանց հետապնդած հանրային բայց մասնակի շահերը ներդաշնակութեան բերել համագրգային գերագոյն շահի հետ, որ իր Մարգիր հետապնդածն է, և պիտի ջնանայ իր գրգռել դնել այդ միութեանց գործի մրա, որ արդիւնք են տարբեր մտածութեան և շահամացութեան: Այդ միութիւնները պէտք չէ նկատել Հ.Յ. Դաշնակցութեան ենթակայ մարմիններ, ինչ որ անխորհուրդ կը լինէր և անիմաստ, քանի որ Դաշնակցութիւնը չունի

մասնաւոր շահեր ու հոգեբանութիւն — այլ պէտք է նկատել ուժեր, որ կարող են նպաստել մեր ընդհանուր գործին: Ոչ այն ամենը ինչ որ մեզ հետ չէ, մեզ հակառակ է: Եւ ոչ այն ամենը, ինչ որ մեր կայմանը չէ, դրանով իսկ դէմ է մեզ: Մեր մասնակցութեան, քաջարեութեան և սրտայայնութեան արժանք են բոլոր միութիւնները, որ թէկուզ մի մաս ջուր կարող են հասցնել դէպի մեր հանրային ջաղացքի առում: Գանի դեռ ինդիքը վերաբերում է Դաշնակցութեան բուն գործին և մեր «դաշնակցական» հանդամանքին՝ մենք իրաւամբ կարող ենք սասել. «որ ոչ ընդ իս ցանէ՛ցրէլ», այսինքն, ով մեզ հետ չի ցանում. ցրիւ է տալիս սերմը, ով չի ընդհանում մեր Մրազիրըր Կանոնագիրն ու որոշումներն նա «դաշնակցական» չէ, աւելի կամ պակաս մեր հակառակորդն է և յամենայն դէպս միշտ տարբեր է մեզանից: Բայց երբ ինդիքը վերաբերում է մեր նպատակի հետապնդումին՝ այն ժամանակ ստատաններն անգամ դաշնակից են մեզ և օգտակար, եթէ մի որչ ժամանակ ու միջոց մի սրոշ սեղ ուղեկցող են մեզ և գործի ընկեր: Այս պատճառով «դաշնակցական» ամէն տեղ և ամէնյի հետ կարող է լինել, մաքաւորի և մեղաւորի հետ կարող է սեղան բազմել, բայց միշտ և ամէն տեղ մնալով «դաշնակցական» և բարոգելով «երկնքի արքայութիւնը», որ իր Մրազիրն է և գործելակերպը: Եւ եթէ որեւէ մաքաւոր որեւէ կերպ նպատակ մեր դերագոյն նպատակի իրացման՝ դա մի շահ է ընդհանուր գործին: Եւ բնաւ արգելք չկայ, որ նա շարունակէ մնալ մաքաւոր, թէև աւելի լաւ կը լինէր, որ նա դառնար մեղանդ մէկը, եւս դաւանակիցն ու գործակիցը: Դաշնակցականն անդիւղ է իր համոչումների մէջ, բայց հանդուրժող է ուրիշների համոչման հանդէպ: Նա հետամուտ է իր Մրազիրի իրացման, բայց կարող է իր տարբեր կարողութիւնները և օգտոս ժամանակը տրամադրել ուրիշ նպատակների, եթէ նրանք անուղղակի նպաստում են մեր Մրազիր իրացման: Դաշնակցութիւնը կոչում չունի հայ մարդու բոլոր պահանջներին գոհացում տալու և ոչ հայոց ազգի բովանդակ չանցրը պատգամներու: Նա արթնացնում է հայ ժողովուրդի թաղաքական մտածումը և ռազմական ոգին և կազմակերպում է հայութեան քաղաքական կամքը և յեղափոխական կորովը մի որոշ քաղաքական և տնտեսական ծրագրի իրացման հետամուտ: Այս աչքով է նախում Նայ մարդուն և հայ գանգաւորին. այս նպատակին տանող կարողութիւններն են նրա ուշադրութիւնը գրաւում և իր համագրգային նպատակին օգտակար գործերն ու ճիգերն է նա դնաւաւտում: Իր անդամները այն է պահանջում ինչ որ օգտակար է և անհրաժեշտ իր Մրազիր իրացման համար, մնացած բոլոր տեսակէտներով իր անդամները ազատ են ձգաւծ իրենց մասնաւոր նախասիրութեանց և գործերի մէջ: Դաշնակցութիւնը պաշտոն ու զբաղում չէ. նա մի որոշ մտայնութիւն է և բարոյական: Դաշնակցութեան համար, միւսների պատրաստակամութիւնը գոհարբելու՝ երբ հարկը պահանջէ: Բայց քանի դեռ չի հասնում ժամը գերագոյն գոհարբութեան, «դաշնակցականը» պարտաւոր է Կանոնագրի հիմք պահանջներին գոհացում տալ և ամէն տեղ, ուր մտաւ՝ լինել միութիւն թէ պարզա-

պէս օտար շրջանակ, Կուսակցութեան զադախտները տարածել և մասնակի նպատակները ընդհանուր Ծրագրին ու գործին ներդրանակել: Դաշնակցութիւնն այսպիսով թէ լր ընկերներէց և թէ օտարներէց պահանջում է հայ ամենը, ինչ որ Համագայտին քաղաքական արժէք կարող է ունենալ և իր գերագոյն Նպատակին ծառայել, որ իր Ծրագրի իրացումն է կեանքի մէջ: Ինչ որ պահանջում է անհատ ընկերներից, երջնք Հետամուտ է սասանալու և տարբեր ու մասնակի միութիւններից: Նրանց գործունէութեան մէջ ևս իրան Հետաքրքրում է Համագայտին արժէք ունեցող կազմը. ոչ մարդասիրականը, ոչ մասնաշխտականը, ոչ արևևտարանը, այլ ինչ որ կարող է նպաստել հաւաքային քաղաքական նպատակի իրացման, որ այլ բան չէ, քան իր Ծրագրի իրացումը:

«Դաշնակցական» խումբ, մարմին թէ անհատ իրենք են, որ ճշտում են իրենց վերաբերումը դէպի կուսակցական ամէն մի ներքին խնդիր և դէպի Հանրային ամէն մի մարմին ու դործ: «Դաշնակցականը» պէտք չէ մտանալ երբևէ, որ ինքը մի հայ կուսակցութեան անդամ է և մի ֆազախակա և յեղափոխական կուսակցութեան անդամ: Այս «Հայ», «քաղաքական» և «յեզափոխական» բառերը նախորդում են իր բուն լիք դիրքի ընդթիւր, իր ընթացման ճամբի ծիրը, առանց պատասխան տալու այս ու այն նպատակին. այդ պատասխանն ինքն է, որ պէտք է գտնել և տայ՝ միւս մնալով «դաշնակցական»: Նա պէտք չէ մտնալ, որ ինքն ունի մի Ծրագիր, որի իրացման յանձնառու է եղած՝ կուսակցութեան անդամակցելով: Թէ ինչ պէտք է ձեռնարկել կուսակցութեան մէջ և արտաքին ո՞ր ձեռնարկներին պէտք է մասնակցել կուսակցութեան Ծրագրին լուսապս ծառայելու համար. ի՞նչ պահանջ պէտք է ունենալ անհատական կեանքի մէջ կուսակցութեան վարկն ու հնայքը բարձր պահելու համար, սրանք խնդիրներ են, որ ինքը պէտք է որոշէ, եթէ մենակ է որևէ շրջանի մէջ, և իր ընկերների Հետ համախորհուրդ պէտք է որոշէ, եթէ կազմակերպութիւն կայ իր բնական վարկի մէջ:

Վարժունքի այս ձևը պարտադիր է ըլլոր «դաշնակցականների» համար՝ լինեն զեկակար թէ պարզ անդամներ: Մենակութիւնը պատճառ չէ, որ «դաշնակցականն» անգործ ու անտարբեր մնայ իր ապրած միջավայրում և իր գործօն դիրքը չճշտէ Հանրային իրադարձութեանց և ուժերի հանդէպ: Իր «դաշնակցական» հանդամանքով նա մի ազդակ է կեանքի մէջ և պարտաւոր է քաղաքական մտածում արթնացնել և գործ առաջ բերել իր ապրած միջավայրում Հայ զանգածի մէջ: Այս նախաձեռնութեան ոգին բխում է մեր Կանոնագրից, որ պահանջում է «ամէն ջանք թափել» իրականացնելու մեր Ծրագիրը: Այդ Ծրագրին է վարելի սկզբունքը բովանդակ Դաշնակցութեան և ամէն մի զանակցականի. այդ Ծրագիրն է նաև, որ թէլայրում է մի որոշ պահանջ և ընթացք դէպի Հանրային ուժերն ու գործերը, դէպի օտար անձերն ու միութիւնները՝ լինեն նրանք Հայ թէ այլազգի: Ինչպէս գրքերը տրած Հրամանին հըու՝ շտուգում են իրենց դէմքը ալ կամ ձախ և շարժում են մտանախը ուղղութեամբ, այնպէս էլ կուսակցութիւնը և կուսակցականը պարտադիր են

շարժել Ծրագրի և Կանոնագրի ուղղութեամբ: Ամէն ոք պարտական է լսել այդ կանչը, որ Հրաման է, յորդոր և սաստ միանպաման: Հրաման՝ փորձառուներին, յորդոր՝ նորեկներին և սաստ՝ շեղձթացներին:

Այս կարգապահութիւնը մեծադրյն ազդակներից մէկն է մեր կազմակերպութեան և յեղափոխիչ դեր է կատարած և շարունակում է կատարել մեր կազմալոյծ և ստրկածին ազգի մէջ: Սա մի կարգապահութիւն է, որ չի պարտադրում, այլ ամէն ոք ինքն է որոշում իր համար իր իսկ յանձնառութեամբ: Ոչ ոք չի խնդրած կամ ստիպած, որ սա կամ նա դաշնակցական դառնան: Ամէն ոք ազատ է անդամակցել կամ ոչ: Բայց մէկ անգամ, որ յանձնառու եղաւ Կանոնագրի հինգ պահանջներին զոհացում տալ՝ այնուհետև նա պարտաւոր է կատարել իր յանձնառութիւնը հաւատարմութեամբ: Սա մի կարգապահութիւն է, որ բունկան չէ. սա տիրոջ հարկադրանքը չէ ստրուկի վրա. սա չի ծագում մի օտար ուժից, այլ բխում է սեփական զիտակցութիւնից ու կամքից: Սա մի ուխտ է, որ ազատ մարդն ազատօրէն դնում է ինքն իր համար իր ազատ կամքով: Սա ազատ մարդկանց գործակցութեան մի պայման է ազատօրէն ընդունած, բայց ստիպօրէն իրադրուած, ուր մարդն ինքն իր ստրուկն է և ոչ օտարի, ինքն իր կամակատարը և ոչ օտարի, որ սակ է թէ՛ ազատ է լիովին: Որովհետև ազատութիւնն անկարգութիւն չէ և ոչ սանձախորտ մի ընթացք: Ազատութիւնը ինքնազդիր օրէնքների և ինքնընտրի կարգերի յօսակամ և անվերապահ հնազանդութիւնն է: «Ազատ» ու «հնազանդ», որ թուում է թէ ժխտում են իրար, իսկապէս իրար լրացնում են: Մարդկային ճակատագիրն է ըմբոստանալ ու հնազանդել. սա ստիպօրական կըռոյթի մի ցուլացում է մարդու կեանքի և հոգու մէջ: Ինչո՞րն այն է թէ ինչի՞ ոչ է ըմբոստանալ և ո՞ւր հնազանդել: Իր նմանին հնազանդել հակառակ իր իսկ կամքին՝ սա կը լինէր ստրկութիւն և ստրկամտութիւն. իր սեփական որոշումին հնազանդել — սա կը լինէր սանձաձաձակութիւն: Հաւաքական մի մարմին որոշումներին հնազանդել, որին համաժող է նաև ինքը — սա կը լինէր ազատութիւն բառի իսկական և շինարար առումով: Դաշնակցութիւնը ազատ մարդկանց ընկերական խմբակցութիւն է և նրանց կուսակցական կազմակերպութիւնը, զրա համար նա գերազանցօրէն կարգապահ է քան որևէ այլ մարմին: Սա մի կարգապահութիւն է, որ արդիւնք չէ արտաքին բռնադատութեան, այլ ներքին զիտակցութեան և իսկձմտանքի: Ոչ թէ վախն է, որ «դաշնակցականին» պահում է կարգապահ, այլ ամօթին իր ներքին լուսազոյն հակումներին հանդէպ, որոնց թէլադրանքին անսայով՝ նա մի հանդիսաւոր օր երգում է տաւած ընկերների ներկայութեամբ զոհացում տալ Կանոնագրի հինգ պահանջներին: Նա ձգտում է հաւատարմ մնալ իր երգման և զգուշանում է շեղումներից: Նա ապում է միանգամայն, բայց և կաշկանդում է խտօրէն, սակայն, ոչ թէ դրոյից մէկն է, որ պահում է նրան, այլ ինքն է, որ ձգտում է հաւատարմ մնալ իր ընդթիւր արնազոյն հակումներին: Իր անկարգապահ ընթացքը ոչ այնքան օրինադանցութիւն է, որքան բարոյական անկում. յանցանք և օրինադանցութիւն կը լինէր եթէ պարտադիր կարգի և կանոնի ստեղծումը



կատարւած լինէր ուրիշ կամ ջրով և բունանար իր վրա հակառակ իր կամքի. բայց դա անկում է, որովհետև ինքն է ձևակերպած սրտադարձը կարգն ու կանոնը կամ ինքն է յանձնառու եղած նրանց հնազանդելու կամովին:

Այս պատճառով անհատապաշտ մարդիկ «ըզանակցական» լինել չեն կարող: Նրանք ահազորէն կաշկանդւած կը զգան իրենց զաշխուհցական Կանոնագրի ճիւրաններէ մէջ և նրա Ծրագրի դժած ուղիներէ վրա: Անհատապաշտը շատ աւելի արժէք է տալիս իր անձնական իմացութեան քան Հաւաքական իմաստութեան: Նա կարծում է թէ ամէն ոք ինքն իր վարիչն է և տէրն ու սնօրէնը և ազատ է այն պայմանով միայն, որ իր քմայքը օրէնք ճանաչել ամէն տեղ և ամէն ժամանակ: Նա մոռանում է, որ ամենից անտէր է նա, որ կարծում է թէ ինքն է իր տէրը և, որ ամենից երեքուն են այն մարդու ջաշխարհը, որ կարծում է թէ ինքն է իր վարիչը: Ամէն լարում և ամէն պրկում իր թուլացումն ունի և ամէն մի ոյժ իր յենաբանը: Անհատական կամքի խթանը բաւական չէ մարդուն միշտ պիրկ ու արթուն պահելու համար: Մենակեացը յաճախ մոլութեան մէջ է իր աչքը փակում, իսկ անձնամիտը՝ մոլորութեան մէջ: Մարդը Հանրային կենդանի է և այնքան արժէք ունի, որքան Հանրային է: Իր համարակից լայնութեամբ չափւած է իր հոգու մեծութիւնը: Համակրական շրջանակի լայնացումը ստանում է դէպի հերոսութիւն և վերջնապէս նեղացումը՝ դէպի ոճիր: Անհատական ճիւղն ու մտածումը կարող են առաւանակն մի հոգեկան դաշտ հերկել, եթէ Հանրային ապրումներէջ չեն սրւած: Հաւաքական մտածումն է, որ յեղաշրջում է կեանքի կերպարանը: Այս ասպարէզում նոյնպէս՝ միտքն ու զգացումն այնքան արժէք ունեն, որքան Հանրային են կամ ստուկ են յետազգային դառնալու հանրութեան միջոց ու զգացում: Կամքը արգասաւոր է միմիայն Հանրային միջավայրում և այնքան ժամանակ, որքան ենթակայ է Հանրային խթաններէ, որ Հասնում են օգնութեան, երբ անհատական կամքի խթանը թուլանում է: Հանրային մարդը գիջում է իր մտածումն ու կամքը մի տեղ, մի ուրիշ տեղ յաղթանակելու համար: Զիջումը չըացում չէ, այլ շեղում արգելքի հանդէպ: Կուսակցական մարդը իր ընկերների գործակցութեան մէջ է տեսնում իր մտածումի գործնական և իրական արժէքը և նրանց հաւաքական մտածումի մէջ՝ իր անհատական կամքի պիտանութիւնը: Ոչ ոք կարող է իրան ճանաչել ճշմարտապէս՝ մենակ մնալով և ոչ ոք կարող է Հանրային մտածումներ իրացնել՝ անհաղորդ մնալով իր նմաններին: Ոչ ոք կարող է Հանրօգուտ գործ ստեղծել իր երկու ձեռքով և Հանրօգուտ մտածումներ ունենալ՝ իր մտքով միայն: Կուսակցութեան հաւաքական մտածումն այն յեսանն է, որ սրում է անհատի մտածումը, իսկ կուսակցութեան հաւաքական կամքը այն կրթն է, որին յարմարելով՝ անհատական մտածումը կարող է աշ ու ձախ կարել: Կազմակերպութեան սալի վրա են յղկւում անհատական խառնածքի խանգարիչ ցցաւածները և նրա հակակռի տակ է, որ կամեցողութեան յաճախ կոյր ոյժը դառնում է Հանրօրէն պիտանի ազդակ: Ոչ ոք, որ Հնազանդել չգիտէ՝ կարող է երբ և իցէ հնազանդութեան բերել: Հնազանդութիւնը մեքենականութիւն ունի, որ

մարդ պէտք է իր հոգու մէջ ճանաչած լինի, յետագային ուրիշներէ վրա գործադրելու համար: Կոհողավիղ անհատապաշտը ինքն է միայն, որ կայ. իր կօշիկը կարող է հաղնել, բայց Հանրային յեղաշրջումներ անկարող է կատարել, որովհետև այդ կարգի գործերը լինում են համապիւր ճիշդերով, հաւաքական մտածումով և գործակից աշխատանքով, այսինքն, անհատի մէջ անձնական մերժելով և հանրայինը ստուք քաշելով: Նա, որ չգիտէ օրինակի հետեւել, երբէք չի կարող օրինակ դառնալ: Կուսակցականին իր փորձ ընկերին նայելով է, որ դառնում է փորձած ընկեր: Հաւաքականութեան մէջ է, որ մշակում են Հանրային բարքի օրինակները, կանոններն ու կարգերը և մշակում են՝ փոխադարձ գործակցութեամբ: Հնազանդել այս կարգերին ու կանոններին, հետեւել այս օրինակներին՝ նշանակում է հաւաքական կեանքի դոյութիւնն ապահովել, իսկ հաւաքական կեանք ապահովել նշանակում է անհատական կեանքի բովանդակութիւնն ապահովել. որովհետև «մարդը» մարդու մէջ հաւաքական կեանքի ցոլացումն է և հաւաքական ճիւղերի արգիւնը. և մարդ այնքան աւելի մեծ արժէք ունի, որքան պայծառօրէն ցոլացնում է իր իմպւլսցութիւնը: Այս դէպքում է միայն, որ անհատի խօսքը ստանում է արժէք ու կշիռ, որովհետև նա բանաձևում է հաւաքականութեան միտքը, զգացումն ու բարքը, որովհետև նա խօսում է այն, ինչ որ կարող էր և իր ընկերն ստել, եթէ նրա չափ խօսել իմանար. որովհետև նա մտածում է այն, ինչ որ՝ թէ և ոչ նոյն պայծառութեամբ, բայց էպպէս մտածում է հաւաքական մարմնի անդամը. որովհետև նա գործում է այնպէս, ինչպէս կը գործէր իր ընկերը, եթէ նոյն վճռակաւութիւնն ունենար: Զանգաժի համամտութիւնը, համազգացումն ու համաձայնութիւնն յապիտով խթանում են անհատի կորովը և դարձնում են նրան Հանրային շարժումների ազդակ, Հանրային ապրումների թարգման, Հանրային մտածումի առաջնորդ: Այսպիսով, անհատը կամ ինքն է օրինակ առնում կամ ինքն է օրինակ դառնում և ներքնապէս ապաստելով մտածելով և ապաստելն ինքն իրան յղկելով, ապաստելն վճիռ արձակելով և գործի ձեւնարկելով՝ նա դառնում է ինքնաբեր և ինքնակամ մի կրկնութիւն հաւաքական տիպարի, մտայնութեան ու բարքի: Նա մի տարբեր ցոլացումն է դառնում նոյն խորքի, որ իւր քանհատական» դիտակցելով ներապէս, իրօք Հանրային է իր էութեան մէջ: Նրա զգացումը, միտքն ու գործը այնքան աւելի փալլում են երևում, որքան աւելի շնորհք ու վճռականութիւն ունի իր հոգին և այնքան աւելի զօրւար է իր ազդեցութիւնը և վարակիչ իր օրինակը, որքան աւելի մեծ գանդւածների արձագանք է ինքը: Նա չի կարող պարծենալ իր մտածումով, իր կամեցողութեամբ, իր անկախութեամբ և ազատութեամբ, բայց իրօք նա է, որ ինքնուրոյն կամք ու մտածում ունի և անկախ ու ազատ նկարագրի: Այս կարգի մարդիկ են, որ երևութապէս ազատ ու անկախ չեն, քանի որ անդամ են մի կուսակցութեան, բայց փաստօրէն զօրւար են և ազդեցիկ, քանի որ տիպար են մի հաւաքականութեան: Այս կարգի մարդկանց յիշատակն է, որ պահում է պատմութիւնը, որովհետև նրանք հաւա-

քականութիան ունեցածը մատուցում են նրան՝ աւելի ցայտուն, վճռական ու հմայիչ տեսքով. որովհետև ճաւաքականութիւնն իր գէժքն է տեսնում նրանց կեանքի հայելու մէջ և ընդունում է թէ նրանք «տակր են յոսկերաց և մարմն ի մարմնոյ»:

Կուսակցութիւնն այսպիսով կաշկանդում է իր անդամին՝ ապատութիւն տալով նրան. կապում է յանձնառութեամբ՝ և արձակում, որ ստեղծագործ է. դժուար է ուղիները՝ բայց թողնում է, որ ամէն ոք գնայ իր կարողութեան շահով. պարտագործ է որոշումները՝ բայց թողնում է, որ իրագործես ինչ որ ամենից աւելի լաւ կարող ես իրագործել: Բանական ապատութեան մի մարդավայր է Դանակցութիւնը, ուր ամէն ոք կոչւած է ստեղծագործելու և արժէջներու իր կարողութիւնը համադրական քաղաքական շահերի օգտին: Այս է պատճառը, որ շկան աւելի. լաւ ունկնդրւած բանասիրտներ, քան ունի Դանակցութիւնը և աւելի լաւ կատարւած որոշումներ, քան հանում է Դանակցութիւնը, որովհետև նրանք պայծառ ու ողորկ ձև են տալիս կուսակցական գանդաւորի մտածումներին, բանաձևում են նրա պահանջներն ու տեսչերը և վարում են կեանքը նրանց որոշումների համաձայն: Ու քանի որ դանակցականները հայ են և Դանակցութիւնը հայ յեղափոխական կազմակերպութիւն, հետևապէս մի և նոյն ժողովուրդի զաւակներն են և նոյն սպիկ լաւագոյն երգին են ձգտում իրացնել և լաւագոյն տիպարը մարմնացնել՝ — ուստի նրանց խօսքը, որ ուղղած է «ընկերներին», դառնում է մի խօսք, որ ունկնդրում է համայն հայութիւնը և դանակցականի գործը, որ

կատարում է իր ընկերների որոշման համաձայն, դառնում է լայն գանդաւորների համակրանքի ստարկայ. ոչ այն համակրանքի, որ ծափ ու ծնծղայ է գարկում, այլ այն համակրանքի, որ արդում է հողիներէ խորք. և մենք տեսնում ենք թէ ինչպէս Դանակցութիւնը վատարնում են անհատներ, բայց պահում են գանդաւորները, խաշակութիւն են քարոզում նրա զկմ և ստանում են ովսանաններ իրք արդիւնք: Այս ամենը պէտք է պահանջներին օղ անեն մեր այն բոլոր աւազ ու կրտսեր ընկերները, որ կարծում են թէ իրենց անհատական մտածումն ու կարծիքը աւելի կշիռ ունեն, քան դաշնակցական հանրութեան մտածումն ու կարծիքը. որ իրենց անձնական պատասխանատուութիւնը դերադասում են կուսակցութեան հաւաքական պատասխանատուութիւնից, որ էրբեմն միտում են ցոյց . տալիս շքեղօրէն մեկուսանալու իրենց անհատական տարակարծութեան մէջ: Ոչ ոք մեծացած է մեկուսացումով, ամենքը շահած են հաղորդումով: Ձանդւածը յանցաւոր լինել չի կարող, քանի որ ինքն է դատաւորն ու օրէնսդիրը: Ձանդւածներէ հետ լինել նշանակում է յանցանքներից խուսափել: Պատասխանատուութիւնից զերծ է նա, որ թէկուզ անդունդն է դահլիճում գանդաւորների հետ միասին. մինչդեռ պատասխանատու մնում է նա, որ մնում է մեկուսի իր անհատական խելքով ու «խմաստութեամբ»: Պատմութիւնը նրանց դաւաճան է անւանում. կուսակցութիւնը՝ անպիտան անդամ և կեանքը՝ հանրօրէն անարժէք:

Ն. ՀԱՆԳՈՅՑ

(Շարունակելի)

# ՄՈՍԿԻԱՅԻ ԶՐԱՀԱՆԳՈՎ

(Անդրկովկասեան փոխարքայութեան վերահաստատումը)

Ըստ սահմանադրութեան տառի և ոգու Ռորհրդ-Միութեան հիմքում դրւած են Ֆեդերալիզմի՝ դաշնակցութեան և ապակենտրոնացման սկզբունքները — ապակենտրոնացումն ոչ միայն երկրային իմաստով, այլ և ազգային տեսակէտով: Ռորհրդային պետական գիտութիւնը ուսուցանում է, որ ստեղծել վայելում են ինքնավարութեան լայն իրաւունքներ, որ իւրաքանչիւր ժողովուրդը տնօրինելով իր ճակատագիրը՝ ազատ է ապրելու անկախ կամ միանալու ուրիշ ժողովուրդների հետ:

Այս սկզբունքներով էլ ձևւած է խորհրդային սահմանադրութիւնը: Ռորհրդային Միութիւնը բաղկացած է ազատ հանրապետութիւններից, որոնք ինքնաշօժար կամ ձեռքով կազմել են միացեալ պետութիւն. ամէն մէկը այդ հանրապետութիւններից իրաւունք ունի ուղղած վարկեանին դուրս զալու Միութիւնից: Իրենց հերթին

Միութեան բաղադրիչ մասը կազմող հանրապետութիւնները բաղկացած են ազատ հանրապետութիւններից և ինքնավար շրջաններից, որոնք նոյնպէս օժտւած են ինքնորոշման լայն իրաւունքներով: Անդրկովկասեան հանրապետութիւնն, օրինակ, ազատ ազգերի ազատ դաշնակցութիւն է՝ կազմուած հայ, վրացի, թուրք քրտաւորների և զիւղայցիների յօժար կամ ձեռքով:

Այս սկզբունքի համաձայն էլ ստեղծւած է պետական մեքենան. կայ անդրկովկասեան համադաշնակցային Կենտրոնը կամ, որ խորհրդարանի պաշտօնն է կատարում. կան և հանրապետական՝ Հայաստանի, Վրաստանի և Ազրբեյջանի Կենտրոնները: Կայ անդրկովկասեան Ժողովմտխորհը, որ դաշնակցային կառավարութիւն է. կան և տեղական՝ հանրապետական Ժողովմտխորհներ: Կան կենտրոնական ու տեղական տնտեսական, դիտական, տեխնիկական և այլ կարգի

Հիմնարկութիւններ: Մի խօսքով — Անդրկովկասեան Դաշնակցային Հանրապետութիւն:

Սա տառն է, սրտաքին ձևը, ցուցանակը, իսկ ներքինը, իրական փաստը...

Նոյեմբեր 26-ին, Երևանի ժամը 7-ին, Թիֆլիսի պալատի կարմիր դահլիճում բացեց Համամիութենական Կոմունիստական Կուսակցութեան Անդրկովկասեան Երկրային Կոմիտէի Հերթական ընդհանուր ժողովը, որ յայտարարեց Մոսկուայից ստացած հետեւեալ հրահանգ-կարգադրութիւնը, որի շահեկանութեան պատճառով ստալինը բերում արանց կրճատումներին\*):

Համկոմկուսի Կենտկոմի երեսնագը Համկոմկուսի Անդրերկրկոմին

1. Ժողովրդական տնտեսութեան վերաշինական շրջանի, արդիւնաբերութեան ծաւալման բարդ խնդիրները, գիւղատնտեսութեան ընկերվարական վերակազմութիւնը հրամայականորէն պահանջում են վճռակամապէս ուժեղացնել Անդրկովկասեան Դաշնակցութեան կուսակցական և խորհրդային մարմինների ղեկավարող դերը: Անդրկովկասեան Դաշնակցութեան մարմինները, որ առաջին շրջանում կատարում էին գերազանցապէս քաղաքական դեր, որ ամբարջրին անդրկովկասեան ազգային հանրապետութիւնների բարեյայտ դարգացումը, բանաբարեան ղեկատարայի ամբարջնում ու ազգային խաղաղութեան կայունութիւնը, ներկայ շրջանում ինչնց հիգեր պետք է կենտրոնացնեն տնտեսական ընկերվարական շինարարութեան վրա ազգային հանրապետութիւնների մէջ, նրանց նարտարաւեսուցման, գիւղատնտեսութեան տեխնիկական և ընկերային վերակազմութեան: Դրա համար անհրաժեշտ է ամբարջնել Անդրկովկասեան Դաշնակցութեան տնտեսական հիմքը, իրականացնել Անդրկովկասի բովանդակ տնտեսական շինարարութեան իրական ղեկավարութիւնը, ամբարջնել Անդրկովկասեան Ժողովրդական Տնտեսութեան Բարձրագոյն Խորհուրդը՝ ստալով նրան վերանսկիչ-գործադրական գործառնութիւններ արդիւնաբերութեան կարեւորագոյն հիւղերի և հանրապետութիւնների ժողովրդական տնտեսական բարձրագոյն խորհուրդների վերաբերմամբ, վերակազմել Անդրկովկասի պլանային մարմինների դրաբիւնը այն ձևով, որ Ժողովրդական տնտեսութեան հիմնական ճիւղերը ծրագրեն Անդրկովկասեան Պետականի կողմից, համապատասխան կերպով փոխել Անդրկովկասեան Կենտկոմի վարի ղեկը և ստիգծել դաշնակցային հողժողովուրդկատնտեսութեան վերակազմութեան բոլոր հիմնական ձեւերի տեխնիկական և ղեկավարելու համար:

Անդրկովկասեան Դաշնակցութեան ղեկավարող դերի առջև ուժեղացումը ազգային հանրապետութիւնների վերաբերմամբ պետք է կատարել այնպէս, որ միաժամանակ ծաւալի նաև Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ մտնող ազգային հանրապետութիւնների լայն ինքնագործունէութիւնն ու տնտեսական նախաձեռնութիւնը:

2. Կենտր. Կոմիտէն յատկապէս ընդգծում է, որ

անհրաժեշտ է, որպէսզի Անդրկովկասեան Երկրային Կոմիտէն բարելաւ ազգային Կոմկուսների կենտրոնական կոմիտէների և տեղական կազմակերպութիւնների ղեկավարութիւնը այնպէս, որ ոչ մի գէպուտ թայլ չտրուի դաշնակցութեան (Ֆերեբայիլովի) սկզբունքները կիրառումը կուսակցական կազմակերպութիւնների գործունէութեան մէջ: Անդրկովկասեան Երկրային Կոմիտէն իր ղեկավարութեամբ պետք է ապահովի ինչպէս Անդրկովկասեան Դաշնակցութեան տնտեսական դերի ուժեղացման վերաշինակ հրահանգների գործադրութիւնը, այնպէս և ինքնաբերականութեան յետագայ ծաւալումը, նոր կարգերի առաջ քաշումն ու կայի գորացումը գանգաձեւների հետ: Ի մասնաւորի կենտր. Կոմիտէն առաջարկում է Անդրկովկասեան Դաշնակցութեան բոլոր մարմինները ամբարջնել մի շարք խոր գործիչներով տեղակուսելով առանձին հանրապետութիւնների ղեկավար աշխատանքից ու ղեկավար Անդրկովկասեան Դաշնակցութեան ղեկավար աշխատանքի վրա՝ միաժամանակ նոր աշխատողներ առաջ քաշելով նրանց տեղը, առանձնապէս առաջատար քանութիւններից ու գիւղացիներից:

3. Կենտր. Կոմիտէն յանձնարարում է մի շարք միջոցներ՝ կարգաւորելու և ուժեղացնելու համար Անդրկովկասեան Դաշնակցութեան պետական ու կուսակցական մեքենայ՝ կրնաւորով պաշտօնեաների ուռնացումը կազմելը, վերակազմել կաւալարական մարմինները ինքնավար շրջանների ժողովխորհրդն ու կենտրոնացնել մէկ ընդհանուր մարմնի վերաձեւելու և մի շարք ժողովութիւններն ի մի ձուլելու հնարաւորութեան խնդիրը: (Խորհրդ. ընդգծումները մերն են Մ.Վ.):

Այս վերին հրահանգ կարգաւորեց յետոյ Անդրկովկասեան Երկրային Կոմիտէի ընդհանուր ժողովը գառա, որ այդ հրահանգը «ամբողջապէս համապատասխանում է Անդրկովկասեան Դաշնակցութեան ընկերվարական շինարարութեան հերթական յնդիւնների, կատարելապէս արտացոլում է Անդրկովկասի կուսակցական կազմակերպութիւնների կարծիքները, և ընդունեց յանձնող ղեկավարութիւնը:

Խորհրդային բարբառին անսովոր ընթերցողը, առաջին հայացքից, գուցէ, չըմբռնէ Մոսկուայի հրահանգի իսկական իմաստը, մինչդեռ այդ հրահանգը արժատական փոփոխութիւններ է ստալ բերում Անդրկովկասի պետական կազմի և ներքին փոխարարութիւնների մէջ: Հրահանգից հետոն է, որ մինչեւ այժմ գոյուհիւն ունեցող վիճակ, այսինքն՝ ազգային հանրապետութիւնների քչեց-շատից վայելած իրատեսութիւնները ունեցել են «գերազանցապէս քաղաքական դեր»: Խորհրդային իշխանութիւնը ցարդ ընդառաջ է գնացել Ժողովուրդների ազգային պահանջներին և որոշ իրատեսութիւն տեւլ ոչ թէ այդ Ժողովուրդների կարիքն աչքի ստալ ունենալով կամ որեւէ ուրիշ հիմնական սկզբունքից դուրս, այլ բացառապէս իր ընթացիկ շահն աչքի ստալ ունենալով: Դաշնակցութիւնը, «Ֆերեբայիլով» նրա համար ստակ գործնական խնդիր է, քաղաքականութեան, նպատակալարարութեան հայր: Դաշնակցութեան բովանդակութիւնը փոխում է ըստ առաջադրած ծրագրի. երէկ Անդր-

\* ) «Заря Востока», 29 ноября, № 274.

կողմասի դաշնակցութեան բովանդակութիւնը մէկ էր, այսօր՝ ուրիշ, վաղը՝ բոլորովին այլ բան. պատահաբէլ — ամէն ինչ հնուած է...

Երկէ կազային Հանրապետութիւններին վերապահւած էին որոշ տնտեսական իրաւունքներ, ճիշտ է, չափազանց սահմանափակ, բայց և այնպէս, զուտ տեղական շինարարութեան մէջ նրանք ունէին որոշ ազատութիւն. կարող էին, օրինակ — առանց Թիֆլիսից ու Մոսկուայից իրաւունք խնդրելու մանր-մունր գործեր կատարել կամ հողային կարգադրութիւններ անել. այժմ այդ իրաւունքն էլ խլում է: Այսուհետև ոչ միայն պէտք է «ժողովրդական տնտեսութեան հիմնական ճիւղերը ծրարելու Անդրկովկասեան Պետական կողմից», այլ և ստեղծելու է «դաշնակցային հողօրդկում» գիւղատնտեսութեան բոլոր հիմնական ձեռնարկութիւնները ղեկավարելու համար», այսինքն հողային-երկրագործական խնդիրներն էլ առնուած են առանձին Հանրապետութիւններէ մեծոքից և յանձնուած կենտրոնին: Ի՞նչ է մնում տեղերին, այդ «ազգային Հանրապետութիւն» մեծաղղորդ անունը կրող խղճուկ ծայրագաւառներին:

Մոսկուայի նոր հրահանգից յետոյ ստացուած է այսպիսի դրութիւն: արտաքին քաղաքականութիւնը, արտաքին և ներքին առևտուրը, աշխատանքի գործը, բանակը, դրամը ու ելուտուը, Հաղորդակցութեան միջոցները, փոստն ու հեռագիրը ամբողջապէս ամփոփուած են Մոսկուայի ձեռքին, «ազգային Հանրապետութիւնները» այս Հարցերում ոչ մի իրաւունք չունեն: Ժողովրդական տնտեսութեան բոլոր ճիւղերի ղեկավարութիւնը գիւղատնտեսութեան բոլոր հիմնական ձեռնարկները», պետական քաղաքական վարչութիւնը, այսինքն՝ ներքին կարգի ապահովութիւնը կենտրոնացած են Թիֆլիսում: Ազգային Հանրապետութիւններին մնում են միայն կրթական, դատական առողջապահական և վարչական-նստեկանական տեղական բնոյթ կրող գործերը. սրանց ընդհանուր սկզբունքներն էլ տրւում են վերևից: Այլ խօսքով՝ տեղական-գաւառական ինքնավարութիւն ամենհամեատ իրաւասութիւններով. կարելի է դպրոց պահել, բայց դպրոցի ծրարները դալիս է վերջուտ, հիւանդանոց բանալ, դատ անել կենտրոնի մշակած օրէնքներով և սեփական ուստիական ու գաւառապետը ունենալ: Միև բոլոր Հարցերի տնօրինութիւնը վերապահւած է կամ Թիֆլիսին, կամ Մոսկուային: Եւ այս կողմ է «ազգային Հանրապետութիւն»: Ո՛չ միայն Զինգերիայի մի կողմնու կամ շիւսիսային Ամերիկայի մի նահանգ, այլ և բոսթոնական միև պետութիւնների մեծ մասի ներքին վարչական միութիւնները աւելի լայն իրաւունքներ և ինքնագործունէութեան աւելի մեծ նախաձեռնութիւն ունեն, քան այդ թիւում «Հանրապետութիւնները», էլ չենք խօսում բրիտանական դոմինիոնների մասին, որոնց պետական ձեռք, որոնց վայելած ազատութիւնները անհասանելի իրէպալ են խորհրդային «Հանրապետութիւնները» համար:

Բայց այս դեռ խնդրի մէկ մասն է. Մոսկուայի հրահանգը պարտաւորուած է և մի ուրիշ աւելի կարևոր կէտ. հրամայում է, որ այսուհետև «ո՛չ մի ղեկավարութիւն չարեւի դաշնակցութեան (Ֆեդերալիզմի) բակը-

բունքների կերտումը կուսակցական կազմակերպութիւնների գործունէութեան մէջ»: «Դաշնակցութեան սկզբունքները» ստալ էլ ընդունուած չէին Կոմկուսի ներքին ներապետութեան սահմաններում, այժմ կենտրոնացումը աւելի ևս խտացուած է. վերից վար, Մոսկուայից մինչև Մոլլա-Դուբուսն զիւղի բլիթը՝ Կոմկուսը մէկ «սղոյապատէ» միութիւն է, որի բոլոր մասերը շարժուած են կենտրոնից արձակուող հրահանգներով: Այս փաստ է: (Ինչպէս նաև փաստ է — ասենք փակագծի մէջ — որ արդ «սղոյապատէ» միութիւնը վաղուց արդէն բաւական խարխլած է, դարձած զուտ տեսական):

Միև կողմից յայտնի է, որ իսկական իշխանութիւնը Պորչը. Միութեան մէջ Կոմկուսն է. Ժողովուրդը և ամբողջ պետական մեքենան միայն գործիքներ են կուսակցութեան ձեռքին: Կոմկուսը բանտրական դիկտատուրայի մարմնացումն է, Կոմկուսի վարիչ մարմինը՝ բանտրութեան գործոն կամքի արտայայտութիւնը: Իր կազմական կանոնադրով՝ Կոմկուսը ղեկավարող և միազանգակ կառավարող ոյժ է. խորհրդային իշխանութիւնը ստորագաս է նրան: Եւ, ուրեմն, եթէ իշխող, ղեկավարող ու կառավարող կուսակցութեան գործունէութեան սահմաններից դուրս են չլարուած զբաղանկական սկզբունքները», «զաշնակցական» ցոյցանակը պետական չէնքի ճակատին կը դառնայ անիմաստ զարգանկար:

Անդրկովկասը, ասում են, «դաշնակցական» Հանրապետութիւն է. գործնական ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ այստեղ «դաշնակցական» տիտղոսը, երբ երկրի վարիչ ձեռքը, փաստական իշխանութիւնը ծայրայեղօրէն կենտրոնաձիգ կազմակերպութիւն է: Մի-ծաղելի չէ՞, անսահման կեղծաւորութիւն չէ՞ այդ «դաշնակցութիւն» բառը: Առաջ էլ Անդրկովկասի դաշնակցութիւնը անհասական բան էր, բայց Մոսկուայի նոր կարգադրութիւնից յետոյ, բոլորովին դադարուած է դոյութիւն ունենալուց: Փաստօրէն վերահաստատուած է նախկին փոխարքայութիւնը, միայն նկղ սահմաններով:

Փոխարքայութեան վերահաստատութիւնը առաջադրուած է ո՛չ միայն որպէս ծրարք, այլ և իբրև գործ. արդէն փոխարքան էլ նշանակուած է: Նոյեմբ. 27-ին Անդրկովկասեան Երկր. Կոմիտէի ընդհանուր ժողովը ընդունեց «չանշեղ ղեկավարութիւն» Մոսկուայի հրահանգը և նոյն օրը Անդրկովկասի Երկրային Կոմիտէի քարտուղարութեան\*) պաշտօնից հեռացրեց Մամա Օրախելաշվիլին և տեղը նշանակեց ոմն Ալեքսանդր Իվանովիչ Կիրիցիկին — Անդրկովկասի նոր փոխարքան: Իսկ երկու օր յետոյ, Կենտրոնովկոմէ հրամանով նշանակեցին և նոր գործավարներ:

Առաջ էլ այդպէս էր. Կովկասը կառավարելու հա-

\*) Ըստ Կոմկուսի կանոնագրի և խորհրդային գործնականի մի շրջանի լյամիտի բարտաւարը փաստօրէն նոյն շրջանի գերագոյն վարիչն է՝ Ենթակայ միայն իրենից բարձր մարմին: Այս հարցով, Անդրկ. Երկ. Կոմիտէի բարտաւարը Անդրկովկասի գործերի աւերն ու տնօրէնն է՝ պատասխանատու միայն Մոսկուայի առջև:

մար մեծաւորներ կէն գայիս կենտրոնից՝ Շերմեաթեկ, Գոլիցին, Վրոնցով-Ռաչկով: Նրանք բոլորովին անհանօթ մարդիկ էին Կովկասին և մէջէ յատկութիւն միայն ունէին՝ հաստատութիւն կէն տիրող ռեժիմին և Ռոմանովեան հարստութեան: Հիմա էլ նոյնն է. Անդրբկովկասը կառավարելու համար ուղարկուած են մարդիկ, որոնք մէջ մի հասկացողութիւն չունեն այդ երկրի մասին, բայց հաստատարիմ են ռեժիմին և Ստաւրինին: Ո՛վ է այդ Կրիւնիցկին՝ իր ո՞ր առաջնութիւններ կհամարէ և ստանում արդիւիս բարձր պաշտօն: Նա մի մարդ է, որ ամբողջ կեանքը անց է կացրել Ռուսաստանի ներսի նահանգներում՝ Տիբլի, Վրաթիբլ, Սարատով և այլուր, վարել է մի շարք պատասխանատու պաշտօններ, բայց Անդրբկովկասի հետ երբեք չօրէկ արնչութիւն չի ունեցել, Անդրբկովկասի գործերին բուրբովին անծանօթ է: Արդ՝ ինչպէ՞ս կարող էր գործուղուիլ մի երկիր, որը յորժրւում է «գարտ հանրապետութիւն», «ինքնորոշւած» է և ինքն է նշանակում իր պաշտօնեակներին: Ի՞նչ է Կրիւնիցկին Անդրբկովկասի համար, ի՞նչ է Անդրբկովկասը Կրիւնիցկու համար: Նոյնը ինչ որ Գոլիցինն էր Կովկասի համար, և Կովկասը Գոլիցինի համար: Ոտքը, ի հարկէ, Կրիւնիցկու և Գոլիցինի անձնակազմի յատկութիւններ մասն չէ. կարող է պատահել, որ Կրիւնիցկին մարդկային աւելի բարձր առաջնութիւններ ունի, դրանից նրա պաշտօնի բնոյթը չի փոխւի. Գոլիցինը փոխարքայ էր, Կրիւնիցկին էլ՝ փոխարքայ է: Գոլիցինը փոխարկուած էր Նիկոլային, Կրիւնիցկին փոխարկուած է Ստաւրինին: Կովկասի ժողովուրդներին համար ի՞նչ սարբերութիւն:

Կարող են հարցնել, ինչպէ՞ս են հնարաւոր դաշնակցային սահմանադրութիւն ունեցող մի երկրում արայիս արարքներ: Առաջ սահմանադրութիւն չկար, բայց արւում էր նոյնը, ինչ որ արւում է այսօր: Վարպետրի յետևի մի շարք ինտրիգներ, ներքին գործոց նախարարութեան «առաջադրութիւններ», պնակալէդները առաջ քաշած թեկնածուներ, — և մի օր «կայսերական զահի բարձունքից» արձակուած էր «երջանկաբեր» Հրովարտական. այս ինչը նշանակուած է փոխարքայ: Նոյնը կատարուած է և այսօր, միայն մի քիչ աւելի կոպիտ և վրան բաց ձևով. կասկածամիտ և ամէն թիւի յետևից վտանգ տեսող Կրիւնը ամէն օր իր անհաշիւ լրտեսներից տեղեկութիւններ է ստանում և հէջը որ մի շրջան «թարախակից», դիմում է վերարտօական միջոցների՝ պաշտօնի դեռնով իր հաստատարիմ գործակալներին: Սկզբունքը, օրէնքը այս դէպքում դեր չեն խաղում. հաշի է ստնում բացարարէս դիկտատորութեան օրւայ պահանջը, իշխանութեան գոյութիւնը պահովելու ճիւղը: Այս մտահոգութիւնների արդիւնքն է և Մոսկուայի վերջին հրահանգը և Կրիւնիցկու փոխարքայութեան պաշտօնի կոչւելը:

Աւելի հետաքրքրականը, սակայն, և աւելի կարեւորը այն պատճառները չեն, որոնք ստիպել են Մոսկուային բռնութեամբ կատարելու այս նոր յեղաշրջումը: Ինչու՞ և այսօր է վերադարձւում Անդրբկովկասի Դաշնակցութիւնը և վերահաստատում է փոխարքայութիւնը: Կոմկուսի ներքին պայքարները, զաղտնի դաւերն ու մեքենայութիւնները մի կողմ՝ դրած՝ խորհրդային կեանքին ուշադրութեամբ հետևող մարդը երկու հիմ-

նական գործօն կարող է ցոյց տալ. առաջինը՝ անտեսական, երկրորդը՝ ազգային: Գերազանցապէս այս երկու գործօններն են հարկադրել Մոսկուային մի անգամ ևս ոտի տակ տալով իր ջատագոված սկզբունքները՝ իր կրօնիկի տակ խորտելու ժողովուրդներին ինքնորոշման իրաւունքը, որ ուղղափառ ինքնիշխմի անբաժանելի մասն է կաթմում:

Անդրբկովկասը, իրեն տնտեսական միաւոր, միշտ էլ զբաղեցրել է Մոսկուային, ո՛չ միայն նախքի, մանաւանդէի, բարձր կամ պղնձի պատճառով, այլ և իր ընդհանուր արժէքով: Խորհրդային բիւրջէի մի ահագին մասը լրացւում է անդրբկովկասեան հարստութիւններով. նախքի ու մանրակրէի խոշոր տեղ են բռնում նրա մէջ, բայց միւս հարստութիւններն էլ շուտով իր դեր են կատարում Ռուսաստանի արդիւնաբերական կեանքում. Հայաստանի և Ալբերձանի բարձր, գիւղատնտեսական հում նիւթերը ներքին Ռուսաստանի անհրաժեշտ սնունդն են: Անդրբկովկասեան արտածութիւնը, որ վերջին տարեշրջանին, առանց հաշուելու նախքը, հասաւ մօտ 120 միլիոն բուրբու և որ աստիճանական ամձան արժամարտութիւն է ցոյց տալիս, նոյնպէս արհամարհելի քանակ չէ խորհրդային վտարտի կեւմուտքի մէջ:

Միւս կողմից, վերջին տարիները անդրբկովկասեան հանրապետութիւններն աւելի և աւելի հակում էին ցոյց տալիս զարգացնելու տեխական արդիւնաբերութիւնը և տեղական հարստութիւնները ծառայեցնելու տեղական կարիքներին: Այս ձգտումը բուն թափով երևան եկաւ մասնաւորապէս Վրաստանում, ուր շատ ազգայնական սարբեր շախտում էին կոմունիստական դիմակի տակ կառուցանել ազգային Վրաստան. շինում էին մեծածախա երկտրակայաններ, որոնք արտադրած ոյժը մնում էր անդործարկել խնդրանքի բացակայութեան պատճառով. անձրագիր՝ հիմնում էին գործարաններ և տնտեսական ուրիշ ձեւերովութիւններ, որոնք կլանում էին տասնեակ միլիոններ ստանց կեանքի իրական պահանջները արդիւնք լինելու: Այս հոգի վրա տեղի էին ունենում մրցակցութիւններ ճաղգրանի հանրապետութիւններին՝ միւլե, փոխարքած մեղադրանքներ ու դժգոհութիւններ և անվերջ դանդաղներ ու պահանջներ Մոսկուայից:

Միւս կողմից, Մոսկուայի նիւթական վիճակն էլ օր աւուր դաժնում է անտանելի. արտաքին առևտրի հատիթները կրճատում, պետական արդիւնաբերութեան վնասաբերութիւն, դիւղի և քաղաքի փոխյարաբերութիւնների լարում, կոլտնտեսական բռնազբոսիկ շարժման անմիթար հետևանքները, դժարութիւններ երկրի ճարտարարտատոցման բնագաւառում, արդիւնաբերութեան նկատման ծրագրի առաջացած ոսկու պահեստի ցամաքում, չեղովոնեցի արժէքի թաւալլոթ անկում, դրամական միջոցների սուր կարիք — այս ամենը առաջ բերին «տնտեսական ինտրոյութեան» և «նիւթական միջոցների համախմբման» լուրջ պահանջ: Այստեղից՝ և ծայրամասերի նիւթական միջոցների կենտրոնացման ծրագրերը: Այստեղից՝ և մոսկովեան նոր հրահանջները:

«Իրօշակ»-ի էջերում յաճախ է խօսուել այն մասին, որ այսպէս կոչւած ճաղգրային հանրապետութիւնները

Մոսկւայի համար կատարում են գաղութներին դեր-ինչպէս, օրինակի համար, անկխական ճարտարարեա-ալ կերակրում է Հնդկաստանի նման «ազգային հան-րապետութիւններից» ստացած հում նիւթով, ուսա-կան արդիւնաբերութիւնն էլ ապրում է ի հաշիւ խոր-հրդային «ազգային հանրապետութիւնների» արտա-դրած «հումայթի»։ ստանց Քուրքեստանի, Ալբրէջանի ու Հայաստանի բամբակի Մոսկւայի և Իվանովո-Վոյ-նեսենսկի հիւսածեղէնի գործարանները կը մեւնեն։ Մոսկւայի նոր հրահանդից յետոյ, «ազգային հանրա-պետութիւնների» գաղութային կախումը Ռուսաստա-նից պիտի դառնայ աւելի խիտտ։ Մոսկւան խուզելու է բաց ու բազայալու և ստանց օրէէ արդելքի։ «Ազգային հանրապետութիւնները» լինելու են Մոսկւայի կթան կովը հարկըր տողեսով։

Քերես առարկողներ գտնեն, թէ տնտեսական կենտրոնացման ծրագիրը վերաբերում է Անդրկովկա-սին, մենք ինչո՞ւ ենք խօսում Մոսկւայի շահագործման մասին։ Առարկողները մոռանալու չեն զիչ վերեւ աս-ւածը։ Անդրկովկասեան Դաշնակցութիւնը մի օղակ է միայն, միջնորդ կայան Մոսկւայի և «ազգային հան-րապետութիւնների» միջև։ Սեփական կամք և ինքնու-րոյնութիւն նա չունի, այլ լի կենտրոնից եկած հրա-հանգների գործարդոյն է։ Հէնց այդ հրահանգները աւելի հաւատարմօրէն գործադրելու համար է, որ ու-ղարկում են Կրիւնիցիները։ Մոռանալու չէ երբք Մոսկւայից դրած մծոական հրամանը. «ո՛չ մի դէպ-քում չըրբի դաշնակցութեան սկզբունքների կիրառու-մը կուսակցական կազմակերպութիւնների գործունէու-թեան մէջ», յիշելու է նաև, որ «կուսակցական կազ-մակերպութիւններ» խորհրդային աշխարհում՝ նշանա-կում է իշխածութիւն, կառավարութիւն իր բովանդակ ծաւալով։

Երկրորդ գործօնը, որ ստիպել է Կրեմլին դիմելու կենտրոնացման քաղաքականութեան, ազգային հարցն է։ «Դրօշակոյում շատ է խօսել այս մասին. բազմաթիւ փաստերով և օրինակներով ցոյց է տրւել, որ Ռուսըր-դային Միութեան սահմաններում, մասնաորակչէս, Կովկասում ազգային ապստամբիւն, հասարակութիւն և խաղաղութիւն գոյութիւն չունի։ Մեր մերկացումներն, ըստ Երևոյթիին, ճիշտ ցաւոտ տեղին են խիում, այդ պատճառով բոլշևիկ գործիչներն այս մասին յաճախ են մէջնի կելում։ Վրաստանի Կովկասի քարտուղար Կա-խիանիին, օրինակ, «Դրօշակ» մերկացումներին առթիւ, կրկին ու կրկին ճգնում է հաստացում, որ «Անդրկով-կասում հաստատուած է ամուր ազգային խաղաղութիւն, չկայ առաջւայ փոխազարծ գրգռումն ու թշնամա-քը», այն ինչ հէնց խորհրդային մամուլը ինքը տա-լիս է բազմաթիւ փաստեր, որոնք ապացուցանում են ճիշտ հակառակը։ Յիշենք «Պրաւազ»-ի դրութիւննե-րը համաթրքական և համաթուրանական ձգտումների ու կազմակերպութիւնների և այդ առթիւ կատարւած ձեւրակարթութիւնների և հարածանքների մասին։ Յի-շենք Կարալի արած սպանիչ մերկացումները նոյն երևոյթի առթիւ։ Յիշենք Ալբրէջանի ազգայնական խորհրդմանը, Աջարստանի վերջին ապստամբութիւնը, Հարաւային Օսետայի դժգոհութիւնը վրացական տի-րապետութիւնից և Հիւսիսային Օսետայի միանալու

ցանկութիւնը, յիշենք արխաղ-վրացական «թիւրիմա-ցութիւնները», խլրուումները լեռնականների մէջ, Ա-խալքալակի և Դարարադի հայ զիւղացիութեան մէկկից աւելի արտայայտած փափաքը՝ միանալու Հայաստա-նին և այդ առթիւ ելած հարածանքները խորհրդային իշխանութեան կողմից, յիշենք վրացի, ալբրէջանցի, հայ կոմունիստների անկերթ գլխուքը Քիթիլիսի պա-լատում՝ աթոռների և Մոսկւայից ստացող կարկան-դակի բաժանման հարցի շուրջ — սրան տաւմ են ճա-մուր ազգային խաղաղութիւն», վրեմափայլ պարոն Կախիանի...։

Ինչքան և Կախիանիները երզում-պատառ լինեն, ազգային խաղաղութիւն չկայ Կովկասում, դժբախտա-բար։ Ընդհակառակը, ազգային տարամերթ կրքերն ու հակամարտութիւնները քանի դնում՝ աւելի սուր բնա-ւորութիւն են ստանում։ Արիւնոտ ընդհարում ու փո-խաղարծ յօշոտում, ճիշտ է, տեղի չի ունենում, բայց դրա պատճառը «եղբայրական համերաշխութիւնը» չէ, այլ որովհետև ամենքի դիլիին կախած է Գէպէուի մառզէրն ու կարմիր բանակի սուրը։ Հապա մի վոր-մեցէք պահ մի բաց թողնել սանձերը, մի զիչ ազա-տութիւն տէգք Քիթիլիսում կամ Բազուում, և այն ժա-մանակ կը տեսնեք՝ ազգային «գրգռում ու թշնամանք» կա՞յ, թէ ոչ։

Արդար լինելու համար պէտք է ասել, որ միայն Կախիանիների պէս նենդամիտ կամ թեթևասլիկ բոլշե-ւիկներն են, որ, ջալլամի պէս, փորձում են ծածկել դրութիւնը, ուրիշ, աւելի պատասխանատու բոլշևիկ գործիչներ աւելի են համարձակ և չեն քաշում խոս-տովանել փաստերը։ Հէնց անենք այն բանաձևը, որ ընդունեց Անդրկ. Երկր. Կոմիտէի ընդհանուր ժողովը Մոսկւայի հրամանի առթիւ. աղտող առանց քաշելու ասում է, որ Անդրկովկասի վերակառութեան հրա-հանգը, ի միջի այլոց, հետևանք է նաև «Անդրկովկասեան կուսակազմակերպութեան առանձին ցաւոտ երևոյթ-ների (օրինակ, Ալբրէջանում, Աջարիստանում և ուրիշ տեղեր)»։ Իսկ յայտնի է, որ Ալբրէջանի և Աջարիս-տանի «ցաւոտ երևոյթները» մահմետական զանազա-նների ազգային շարժումներն են. Աջարիստանում բանը հասաւ մինչև արիւնոտ ապստամբութեան, Անդրջա-նում՝ յայտնաբերուեցին մուսաւաթական դաւադրու-թիւններ ու թիւրքական գործակալներ և տեղի ունե-ցան բազմաթիւ ձեւրակարթութիւններ և աքոռներ։

«Ազգային խաղաղութեան» բացակայութիւնը մտա-նանշում է և Անդրկ. Երկր. Կոմիտէի պայտօնաթերթ «Ջարնա Վաստիկա»-ն։ Մոսկւայի հրահանգին ներած առաջնորդողում նա գրում է (20 նոյեմբ.). «Ո՛չ մի կաակած չկայ, որ կենսքի նաւից դուրս չզրուած ազ-գային հակախաղաղութիւնը, մեզ թշնամի դասա-կարգային ուժերը մեղքագլխայի ներքո ո՛չ միայն կը գանչեն հանրապետութեանց իրաւունքների սահմանա-փակման, նրանց հաշեխարդարիւմ և այլնի մասին, այլ և, անտարակոյս, քայքայիչ աշխատանք կը կատարեն բանտարկան դիտատուրայի մարմինների դէմ »։ Աւելին դեռ. «Սորթ և նոյն իսկ թշնամի դա-սակարգային ուժերի ազդեցութիւնը կոմունիստ-ական առանձին խմբերի, մեր կուսակցութեան առանձին անդամների վրա անխուսափելի կերպով

կարող է առջ րեքիլ թէ տեղական ազգային-շո-վիհիստական և թէ վեհապետական տրամադրութիւն-նր»։ Հետաքրքրական է, եթէ Անդրկովկասում կա-տարւալ «ազգային խաղաղութիւն» է տիրում, ի՞նչպէս կարող են տեղի ունենալ նման երևոյթներ ո՛չ միայն ստանձին ազգերի, այլ և կոմունիստական կուսակցու-թեան շարքերում. խեղճ Դատիթ Կախնանին կարո՞ղ է այս երևոյթի բացատրութիւնը տալ... ու փաստերով և ոչ հայտնաբերով։

Հէց այն հանդամանքը, որ Անդրկովկասի երէկւայ կոմունիստները շատերը աքտրաւծ են «ազգային գծի» պատճառով, ապացոյց չէ՞, որ «ազգային խաղա-ղութիւն» խօսքը սարդապէս հեքիաթ է։ Ո՛ր է Սերգօ Քաթարաձէն՝ Պորհրդ. Վրաստանի երէկւայ փայլուն աստղերից մէկը — բանտում։ Ո՛ր է Բուշու Մոլիվա-նին — կոմունիստ վոզելիսային դիւանագէտը, որ հա-ղարար թիւրքահայերի դիակների վրա խորհրդային իշխանութեան միջազգային դիւանագիտութիւնն էր կերտում, — բանտում։ Ո՛ր է Աշոտ Յովհաննիսեանը, — քարտի մէջ։ Ս. Լուկաշինը ինչո՞ւ է քլւած Հայաս-տանից։ Ո՛ր է Սաջո Համարձումեանը, ո՞ր է Արտ. Կարինեանը, ո՞ր էր են շատ որեւէ կոմունիստ ջոնքը Հայաստանի, Ազրբէյջանի, Վրաստանի «նախկին ղեկա-վարներից» — բանտերում, քարտրած, քլւած, կաս-կածի տակ միայն և բացառապէս «ազգային թեքում-ները» և «ազգային գծի» համար։ Իսկ Կախնանիները դայլի աւետարան են կարգում մեր գլխին, թէ՛ «Անդր-կովկասում հաստատւած է ամուր ազգային խաղաղու-թիւն»...։

Պարզ է, որ Մոսկւայում աւելի լաւ են հաշիւ տա-լիս կազմութեան մասին. ազգային «թոշնք» ուժեղ է ոչ միայն ժողովուրդների մէջ, այլ և կոմկուսի ծոցում։ Այդ «թոշնքն» է, որ կոմունիստներին նետում է մերթ «ձախ թեքումի» գիրկը, մերթ «աջ»։ Վերջին փաստը մասնաւորապէս մտահոգիչ է Կրեմլի սակաւապետու-թեան համար։ Թոյլ տալ, որ այդ թոյնը տարածւի ու խորանայ խորհրդային մարմնի բոլոր մասերում՝ նշա-նակում է գիտակցօրէն արագացնել դիկտատուրայի անկման ժամը։ Այստեղից՝ և Մոսկւայի հրահանգը ընդդէմ «դաշնակցական սկզբունքի»՝ Կոմկուսի գոր-ծունեութեան մէջ։ Այստեղից՝ և նորանոր փոփոխու-թիւնները Անդրկովկասի կոմկուսակցական ներկայե-տութեան մէջ։

Կարօ՞ղ է Մոսկւայի նոր հրահանգը դարձանել խորհրդային կարգի այս երկու հիմնական հիւանդու-թիւնները՝ տնտեսական անկումն ու ազգային հակա-մարտութիւնները։ Ի հարկէ, ոչ։ Առհասարակ, հրա-մանով և զուսպանով հիւանդութիւն կարելի չէ բու-ժել, քանի չեն վերացել հիւանդութեան բուն պատ-ճառները։ Պորհրդային հիւանդութեան աղբիւրը ո՛չ ապակենտրոնացման կամ Ֆեդերալիզմի մէջ է, ո՛չ էլ առանձին կոմունիստների անհատական յատկութիւն-ների։ Ի հարկէ, չովհինտա Օրախելաշվիլիի տեղ մի Կրեմլիցիկ նստեցնելով՝ կարելի է որոշ ժամանակի հա-մար և մի որոշ չափով մեղմացնել դրութիւնը. մի ար-

դարամիտ չէզոք ուս, իբրև երրորդ ոժ, օժտւած իշխանութեան լայն լիազօրութիւններով և կենտրոնի աշակցութեամբ, թերևս, կարողանայ մի առ ժամանակ ապահովել «ազգային խաղաղութիւնը», ինչպէս ապա-հովում է ին ուսական տիրապետութեան սկզբնական շրջանում առաջին փոխարքանները, բայց այդ ապա-հովութիւնը կը լինի արհեստական և կը տեխ այնքան, որքան գոյութիւն կունենայ արտաքին ազդեցութիւնը. բուն արտը դրանով չի վերացւի։ Արդային խաղաղու-թիւն Կովկասում կարող է հաստատւել այն ժամանակ միայն, երբ արգարութեամբ լուծեն ժողովուրդների ազգային բաղձանքները, իսկ ներկայ Անդրկովկասը ամբողջապէս ձևւած ու կազմակերպւած է անարդա-րութեան, կամայականութեան, բռնութեան սկզբունք-ներով։ Ի՞նչ խաղաղութեան մասին է խօսքը։ Փորձե-ցէ իր գիւղից ու տնից քլւած շարուրտուն կամ նախի-լեանցուն համոզել, որ խաղաղ նստի ու չորոքէ, հասկացէ՞ք դարբարացուն և արալքալքացուն, որ Հա-յաստանին միանալ և աղբբէջանեան կամ վրացական տիրապետութեան ենթարկւել չուզէլը անարդարութիւն է, էլ չենք խօսում կարեցու ու սուրախուեցու կամ աւելի հեռաւորների մասին։

Մոսկույեան հրահանգով չի լուծւի և տնտեսական հարցը։ Պորհրդային տնտեսութիւնը բնորոշւում է եր-կու յատկութիւններով — շահագործում անհատի, շա-հագործում ժողովուրդների։ Պորհրդային տնտեսական գործունէութեան հիմքը անզուսպ շահագործումն է։ Ազրբէյջան, Վրաստան, Հայաստան, Թուրքեստան շա-հագործւում են, որպէս գաղութներ, բանուրներն ու գիւղացիները շահագործւում են անհատաբար՝ չորհիւ գործարաններում հաստատւած ճորտատիրական կար-գերի կամ ծանր հարկերով ու բռնի կոլլոպացումով՝ Հուսաքական տնտեսութիւնների կազմութեամբ։ Վերջից վար հարկադրանքի և բռնութեան վրա կառուցւած աշխատանքի դրութիւնը և անհատի ստեղծագործական նախաձեռնութեան բոլոր հնարաւորութիւնների ժքի-տումը չեն կարող երաշխաւորել զարգացումը որևէ տնտեսութեան, և՛ս առաւել խորհրդայինի, որը փոր-ձում է աշխարհիս ամենաշտամնաց միջավայրերից մէկում պատւաստել ամենատալւաւոր տնտեսական ձևեր. ուզում է «չլով սոցիալիզմ կառուցել»։ Տնտե-սական շինարարութեան առաջին պայմանը ազատու-թիւնն է, ապա՝ շտափելի շահը և տնտեսական ար-գիւնքների վայելումը։ Պորհրդային տնտեսակարգը չի ապահովում այս պայմաններից և ոչ մէկը։

Ինչպէս գործունէութեան բոլոր ասպարէզներում՝ իր առջևը ցցւող դժւարութիւնների դէմ պայքարելիս՝ խորհրդային իշխանութիւնը այս անգամ էլ չարժեւում է ամենաթոյլ դիմադրութեան գծով՝ աչքերը փակած դժւարութեանց հիմնական պատճառների առջը։ Կեն-տրոնացումն ու փոխարքայութեան վերահաստատումը մի հանգրւան է միայն անխուսափելի սնանկութեան ճանապարհին, որը արագացնում է ամիման վայրկեա-նը։

Ս. ՎՐԱՅԵԱՆ

# Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԵՆ

## ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍՄՔՕԻ ԻՆՔՆՍԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

### II

95 և 96 թւականները

95 թիւն էր, ապրիլ ամիսը: Մեր խումբը պատ-  
րաստ էր, սպասում էինք Տաշօի խմբին Վանից: Ես  
զնացի Սոյ՝ դիմաւորելու նրանց: Այն գիշեր եկաւ  
Տաշօի խումբը. երկու գիշեր մնացինք Սոյում և վերա-  
դարձանք Սալմաստ:

Մայիս ամսի 27 էր: Մենք բաժանեցինք Տաշօից  
և օրիորդից. նրանք զնացին Կովկաս, իսկ մեր խումբը  
չարժւեց Վան, Դերիկի ճանապարհով: Երբ հասանք  
գետի եզրը, այնչափ կատաղի յորդել էր, որ դժուար  
էր անցնել: Ճարահատ պէտք է կամուրջով անցնէինք,  
բայց այդ էլ հելու չէր, որովհետև Սուրբ Բարթոլոմէ-  
մէնու Առաքելի վանքում հեծելազօրք կար. վարսենում  
էինք՝ մի դուռէ խմանա: Կէս ժամի չափ չափեցինք  
Տիգրիսի ափերը, ոչինչ չկարողացանք անել. վերջը  
Շէրոն սկսեց առջ ընկնել դէպի կամուրջը: Երբ հա-  
սանք կամուրջը, ընկանք անտաննի ճահճների մէջ.  
մարդ չմնաց, որ շիրուէր: Վերջապէս, ցեխոտ, բեզա-  
րած հասանք Ձուխայ կիրճը, Վարդան Գուրչեանի և  
Ագրիպասեանի սպանւած տեղը:

Պաշկել էինք քարերի տակ: Ձգաչեց կէս ժամ, որ  
պահապանը նշան տւեց, թէ մարդ է գալիս: Մարդը  
գալիս է մեր մօտերից, բոխի քաղելով, լրտեսում է  
մեր ամենքի տեղերը և գնում գիւղը իմաց տալիս: Մի  
քանի րոպէ յետոյ, պահապանը իմացրեց հաւարի գա-  
լը: Մենք իսկոյն բաժանուեցինք. ինը տեղ դիրք բռնե-  
ցինք ու սկսեցինք կամաց-կամաց կուել: Կոխը շատ  
ձանձրալի էր, որովհետև մենք, իբրև դիմապահ խումբ,  
երկուական հրացան էինք տանում, այդ պատճառով  
չէինք կարող ուղղակի յարձակել թշնամու վրա.  
Թշնամին էլ չէր մօտենում: Առաւօտից մինչև կէսօր  
զեռ մարդապարի կռիւ տեղի չէր ունեցել, և ոչ էլ ձեռք  
էին քաշում մեզանից, որ մի քիչ քնէինք, հանգստանա-  
լիք: Իմ բունը տանում էր. կանչեցի Շէրօյն. եկաւ  
մօտս: Նա սկսեց հրացան արձակել, իսկ ես ուզեցի  
քնել:

15 րոպէ շնացած Շէրօն կանչեց ինձ. Սոչարից  
գօրք էր եկել: Այդ ժամանակ ահա սկսեց կատաղի  
կռիւը, որը տեւեց մինչև երեկոյան ժամը ութը: Թըշ-  
նամուց ընկաւ երկուսը և մէկ վիրաւոր: Երբ մթնեց,  
մենք հաւաքուելով՝ պայմանական նշան արինք, և մենք  
եզաւ մեր ուրախութիւնը, երբ բոլոր ընկերներին տե-

սանք ողջ ու առողջ և ուրախ: Գիշերը ճանապարհու-  
ցինք դէպի Պաշեթ-Սարը: Ճանապարհին անքնութիւ-  
նից և յոգնածութիւնից մեր ընկերներից մէկը հիւան-  
դացաւ: Ուզում էինք հիւանդին թողնել մօտակայ Գոնի  
գիւղում: Մեր ուղեկիցը գնաց գիւղը և շուտ վերա-  
դառնալով՝ պատմեց, թէ 50-ից աւելի գօրք է եկել  
գիւղը: Ստիպւած եղանք հիւանդին մեզ հետ տանել:

Պաշեթ-Սարի դազաթը բարձրանալով՝ մեզ համար  
չինեցինք պատսպարաններ և առաւօտեան սպասում  
էինք կրկին յարձակման, բայց երկար եղաւ մեր սպա-  
սելը. այն օրը, դժբախտաբար կռիւ չունեցանք: Երե-  
կոյան կրկին հաւաքեցինք և ճանապարհուեցինք դէպի  
Հայոց Ձոր: Երբ հասանք Սոչապ գետը, ջրի շատու-  
թեան պատճառով ուզում էինք բոլորովին մերկանալ:  
Յանկարծ, գիւղացիք մեզ տեսն և կարծելով, թէ  
քիւրդեր ենք, սկսեցին մեզ վրա հրացան արձակել:  
Մենք, ի հարկէ, չէինք պատասխանում. շորերով  
մտանք կատաղի գետը ու անցանք: Առաւօտեան թըր-  
ջւած, ցեխոտ, ցօրստ՝ բարձրացանք Վարազայ սարը:

Այդ օրը Վարազայ Սաչի տուն էր. բազմաթիւ  
ուխտաւորներ էին եկել Վանից ու մօտակայ գիւղերից:  
Այս այն ժամանակն էր, երբ Սասունի կոտորածից յե-  
տոյ, Սուլթանը ամէն տեղ մի քանի բանտարկեալներ  
էր արձակել, և երկիրը փոքր ինչ խաղաղ էր: Այդ  
պատճառով ժողովուրդը մի քիչ ազատ շունչ էր քաշել:  
Լեցած վանքը, մի քանի տեղ դառու զուռնայով զՖ  
էին անում, պարում ու երգում էին: Երգերից մի  
կտորը յիշում եմ.

Վարազայ սար քացւէ կալկայ  
Քիւրդիբ կտրեմ ուք խառ ակալց,  
Խաւար տարէ՛ք Պառլիբարքիմ.  
Թող ամչննայ վըր իւր կարգիմ...

Շէյխ Աշղեանն էր այդ ժամանակայ պատրիար-  
քը:

Իսկ մենք սարում, քարի տակին նստած, սոված,  
ծարաւ՝ մրտած էինք ու դիտում էինք անթիւ ուխտա-  
ւորների պարն ու երգը:

Երեկոյան դէմ մեր ընկերները բերին մեզ համար  
հաց և օղի. մենք էլ սկսեցինք պարել ու երգել: Ա՛խ,  
երանի թէ լաւ գրել իմանայի, նկարագրէ՛լ մեր տեսած



տեսարանները... Երեկոյան, երբ հասանք Վարդապա  
 2իաթնունիկ կոչւած բլուրը, մեր առջև բացւեց Վանի  
 ամբողջ դաշտը իր հրաշալի տեսարաններով: Ով չի  
 տեսել արևմտի գեղեցիկութիւնը, թող դառ տեսնելու  
 2իաթնունիկ բլրից: Արեւադի ճառագայթները ծովի  
 մակերևոյթի վրա փայլած էին որպէս սաստիկ հրդեհի  
 բոցեր՝ բաժանուած միմեանցից բաց կարծիք չըբտեցով:  
 Մովի վրա լողում էին սպանցիները առաջատար  
 նաւերը: Այդ տեսարանն աւելի գեղեցիկացնում էր Վանը  
 իր հոյակաւոր միջնաբերդով և Այդեհատանով: Հեռու,  
 ծովի աջ ու ձախ կողմերից երևում էին հսկայ լեռները՝  
 Սիփանը, Արտասը, Ընծաբխարը և, վերջապէս,  
 Ռշտունիքի լեռնաշղթաները...

Երեկոյան ժամը իննիս մասնք Այդեհատան: Մեծ  
 եղաւ մեր Պետօի և միւսների ուրախութիւնը, երբ տե-  
 ասն մեզ, մեզ հետ թերած զէնքերի և փամփուշտների  
 ստատութիւնը:

Յունիս ամիսն էր: Վանում ժողով եղաւ, որպէսզի  
 առաքեալները դուրս գան դաւանները քարոզելու և  
 կոմիտէներ կազմակերպելու: Արմենականների երկար  
 երկպառակութիւնից յետոյ վճռեցինք դուրս գալ 12  
 հոգով: Մեր առաջին քարոզը սկսեց Հայոց Ձորի  
 ինուսաղ գիւղում, այգտեղից՝ կըզըլ-Դաշ գիւղը, երեք  
 օրից յետոյ՝ Շատար, Շէրօի հայրենիքը:

Մեր առաքելութիւնը շատ լաւ պատուութիւն թող-  
 զեց ժողովրդի վրա: ամէն մի գիւղացի ուզում էր տես-  
 նել մեզ, լսել մեր քարոզները: Մենք ցերեկները պահ-  
 ւած էինք, իսկ գիշերները պտտում էինք գիւղից գիւղ:  
 Ա՛խ, խեղճ մարդիկ, ինչպէ՛ս հիւրասիրում էին մեզ  
 իրենց շոր-ցամաք կորեկի կամ դարիի հացով. ուղղակի  
 պաշտում էին մեզ, երբ տեսնում էին մի խումբ գիւնած  
 և կէս ոռուսասանցիները: Այս վերջինը աւելի էր սպ-  
 դում գիւղացիների վրա:

Մի գիշեր մտանք Թալը՝ Շատարի գիւղաքաղաքը:  
 Այգտեղ անկարելի էր մնալ. բարձրացանք Անոնի  
 շղթայի վրայի այրում պահակու համար, իսկ Պետօն  
 և Շէրօն հաց ու շուր էին բերում, իսկ ցերեկները ոչ  
 ոք չէր գալիս մեզ մօտ, որովհետեւ գործք վրանները  
 մեզանից հեռու էին միայն 400 քայլաչափ, Տիբրիսի  
 վրա: Այգտեղ դիտում էինք, թէ ինչպէս տաճիկները  
 վարժեցնում էին գիւնտըներին:

Երեք օրից յետոյ, գիշերը, Պետօն և Շէրօն իրենց  
 գործը վերջացրին ու վերադարձան: Շատարի նոր կո-  
 միտէի տրամադրութեան տակ թողնելով 2 հրացան և  
 1 սարճանակ՝ հեռացանք: Նոյն օր մեզ մօտ եկան  
 Մոկաց երկրի պատգամաւորները մեզ ուղեկցելու հա-  
 մար: Անոնս սարի վրայով անցանք Մոկաց երկիրը:

Մոկացիները դեռ չէին հաւատում, որ հայը կարող  
 է գէնք վերցնել և գալ, սակաւ ման գալ իրենց սարերը,  
 ձորերն ու գիւղերը և միևնույն ժամանակ շատից-քիչ  
 կէնք բաժանել գիւղերում: Առաջին անգամն էր, որ մի  
 կազմակերպութիւն գէնք էր տալիս ժողովրդին: Մե-  
 զանից առաջ արմենականները Պարսկաստանից տարել-  
 ծախել էին շատ թանօք դնով և քարոզել էին իրենց  
 լիթած քարոզը, որը աւելի ընթացիկ էր ինկզմ ժողո-  
 վրդին: Մոկաց կոմիտէին կարողացանք թողնել միայն  
 մէկ սարճանակ: Մեզանից յետոյ չբաշեց քան օր,

քաջ մոկացին այդ սարճանակով սպանեց մի քիւրդ  
 ընդ, որը հայ աղջիկ էր փակցրել:

Մենք վերադարձանք Ռշտունիք: Սարի Սուրբ  
 Գեորգ վանքի ժողով (Փոստիկ) բարձրացանք Եղերով  
 սարի դապաթը, որտեղ կային շատ քիւրդ և քեյսը  
 ցեղից: Երեկոյան մուտն էր. մեր ընկեր Փոխիկը  
 սկսեց երգել քրդական երգեր: Քիւրդերը կարծում էին,  
 թէ քիւրդեր ենք. ամէն կողմից կանչում էին «թա՛հ,  
 թո՛ւ»: Մենք դրանք միջով անցանք Սուրբ Նարեկայ  
 արօթատեղին, որ բարձրանում է ահաբին սպառաձով  
 դէպի վեր, և թաղնեցինք: Այնտեղ եկաւ և վանքի  
 վանահայրը՝ Սահակ վարդապետը, որ մեզ ծանօթա-  
 ցեց Ռշտունիքի բոլոր աշիք ընկնող երիտասարդներին  
 հետ, որոնք գրեթէ ամենքը գիւնած էին սարճանակնե-  
 րով: Մեր քարոզը այդտեղ սկսեց 4 օր: Վերջին երե-  
 կոյան ակաթ է տալինք մեր ծրագիրը և մի հրացան:  
 Այդ օրը հովիւները ոչխարներ բերին մեր պահած  
 այրի մօտ, աղբիւրի վրա: Հովիւը ուղում էր բարձրա-  
 նալ վեր ման դալու համար: Մեր ընկերներից մէկը՝  
 Աղբէրը՝ քանից իր զէնքերը և քնաց դրան մօտ կան-  
 ցնեց: Քիւրդը երբ տեսաւ, փախաւ յետ: Աղբէրը կան-  
 չեց և սասց. «Իմ քոյրս գտէ՛լ է, բերել եմ ուխտ,  
 բոլորովին մերկ է»: Այդ ժամանակ մեր միւս ընկերը  
 բռնաց. «վա՛յ, մարէ՛լ, որպէս թէ քիւրդը հաւատայ:  
 Մի քանի րոպէից յետոյ, քիւրդը հարցրին. «Ինչ է՞նչ  
 մարդ էք»: Աղբէրը պատասխանեց, թէ՛ «ճինք հայեր  
 ենք»: Քիւրդը հէնց յեց հայ անուշը, վազեց բռնալով:  
 «Ինչը դառախներ էք»: Տեսնելով քիւրդի վազելը՝ մենք  
 սկսեցինք հրացան արձակել նրա վրա, բայց, ափսո՛ս,  
 չկալաւ:

Քիւրդը վազեց գիւղը՝ հաւարի: Մենք դուրս եկանք  
 այրից ու կամաց-կամաց բարձրացանք սարը: Շէրօն,  
 Մանուկը, Փոխիկը և միւսները ցրել էին սահն կողմ,  
 հրացաններ էին արձակում. ես և Վարդանք բարձրա-  
 նում էինք յետևելով: Յանկարծ, տեսնեմ՝ ձիաւաղ-  
 ներ: Կանչեցի «Վարդանին՝ խօսի՛ր», և հրացանս ուղ-  
 ղեցի դէպի այն կողմը. մէկը չլորանց ցած: Եթք անսայ  
 քրդի ընկները, հանեցի հեռադիտակը ու սկսեցի նայել  
 ընկած քիւրդին. տեսայ, որ շուր են աղիս: Քիւրդերը  
 երբ տեսան վեց հարիւր քալրաչափ սարաձուլեան  
 վրա ընկած քիւրդին՝ սկսեցին վազել այս ու այն կողմ  
 և հրացան արձակել, բայց ի գուր. նրանց գնդակը յե-  
 դադիտական ստաքեալին չէր կպչի:

Բարձրացանք սարի դապաթը. արգէն մուտն էր:  
 Երեկոյան ժամը իննիս քնացինք Գանճակ գիւղը: Երբ  
 հասանք գիւղի վերի սարը, գիւղացիք իմանալով մեր  
 դէպքը՝ եկել էին մեզ որդեկու: Կէս օր էր: Մեզ մօտ  
 եկաւ գիւղի ուսուցիչը և նաւալաքը. յայտնեցին, թէ  
 նաւակը պատրաստ է: Գնացինք ծովի եզրը, որտեղ  
 սպասում էին մեզ գիւղացիք և նաւակը: Մեր ծրագիրը  
 յանձնեցին կոմիտէից ուղարկւած մարդուն և մնա  
 բարև ասացինք:

Օ՛, անտանելի էր ինձ համար նաւակ նաւեղ-  
 առաջին անգամն էր, որ նստում էի: Մեր դալու մասին  
 արգէն իմաց էինք տեւ Աղթամարայ վանքի միտրան-  
 ներին: Երբ ծօնեցանք, վանքի միտրանները մեզ ըն-  
 դունեցին շարժականերով:

Աղթամարում արձան սպանով էինք զգում մեզ,

280-290

որ քանդեցինք մեր գէնքերը, երեք ամսայ հագած շորերս հանեցինք, որ լանանք ծովում: Վարդանի շապիկը կրել էր ոսկորներին, այնքան քրտնել ու շորացել էր: Վերջապէս, լողացանք, մաքրեցինք: Հայր Պետրոսը մեզ տարաւ հանդուցեալ Բաֆֆիի նստած տեղը, որտեղ նա խօսել է միաբանների հետ և երգել «Ձայն տուր, ո՛վ ծովակ»-ը: Այնտեղ թէյ խմեցինք: Յետոյ տարաւ մեզ վանքի հնութիւնները ցոյց տւեց: Մեզ ոչ մի բան այնքան չէր հետաքրքրում, որքան Արծրունի թագաւորների դրօշակը, որը դործւած էր մետաքսից շատ նուրբ: Մենք ուղղակի հիացանք, երբ տեսանք մեր հին, վաղեմի հայրց յիշատակը: Դուրս եկանք վանքից շատ զոգուած ու սկսեցինք երգել զանազան սազակի և ժողովրդական երգեր: Մեր երեք ամսայ փախած լեզուները բացեցան այդ օր:

Վանքում մնացինք երեք օր, լաւ հանդատացանք և մաքրեցինք երեք ամսայ կեղտերից: Միւս երեկոյան կրկին շարականով ուղեկցեցին մեզ մինչև նաւակը: Վերջին միաք բարեւ սասցինք ու նստեցինք նաւակը: Ծովի ալիքները պատելով՝ գնում էինք դէպի Հայց Զոր: Երբ մօտեցանք ծովի եզրին, տեսանք՝ բլրի զլխին կրակ վառեցին. մեր պայմանական նշանն էր այդ մենք այնտեղ պէտք է ինչէինք: Հասանք եղբւ. իսկոյն վազեցին Հայց Զորի տղաները, մեզ շարակեցին ու անցկացրին ցամաք: Այդ օրը մնացինք տղաների մօտ և երեկոյան ճանապարհւոցանք դէպի Վան: Առաւօտնան ժամը 4-ին հասանք Կլոյ Դար կրչած թաղը:

Հիմա մենք ծանօթացել էինք Վասպուրականի ժողովրդին. գիտէինք, թէ ի՞նչ է հարկաւոր նրան՝ քարոզիչ, գէնք և աւագակային խմբեր: Վերջինս հէնց իրենք էին պահանջում մեզանից. ցանկանում էին, որ անպատճառ խուժք լինի Վասպուրականի լեռներում: Մենք թւով քիչ էինք, բայց երեք տեղ պէտք է բաժանուէինք. առաջին՝ քարոզիչներ տայինք, երկրորդ՝ աւագակային խումբ հանէինք, երրորդ՝ գէնք փոխադրէինք Պարսկաստանից: Մեզ համար շատ գովար էր բաժանուել միմիանցից, բայց հայրենիքի պահանջները հպանդրին մեզ այդ մտքի հետ: Պետոս մի խմբով գնաց որպէս առաքեալ, Շէրոս, Վարդանը, Մանուկը, Փոխիկը միւս ընկերներով գնացին աւագակայեա Շաքիրի ետեից, որի համար ժողովուրդը մի քանի օր առաջ հրաւիրել էր նամակներով: Ես, Ոսկանը, Խէչոս և Աղբէրը վերադարձանք Սալմաստ գէնք փոխադրելու՝ Պարսկաստանում սպասող խմբի հետ:

Իսկի չեմ ստանում այն օրը, երբ երեկոյան ժամը իննին Դէրոյանի տանը հաւաքուել էինք բոլոր ընկերներով. այրտեղ պէտք է բաժանուէինք: Ես բռնեցի ընկերներիս ձեռները և սկսեցի երգել՝ «Տուր ձեռքդ, կըրայք» երգը: Օրիորդ Զարուհի Դէրոյանը, բաժակը ձեռքին, ոգևորում էր մեզ և մարթում բարի ճանապարհ: Շատ քարէ սիրտ մարդ պէտք է լինի, որ մոռանայ անթիւ կանանց և ընկերների արտասուները: Տեսնում էի՝ ամէն կողմից կանչում էին. «Բարի՛ ճանապարհ, չմոռնա՛ք մեզ»: Այս «չմոռնաք» բառը դու իմ երեակայութեան մէջ է, կարծես թէ հէնց այս րոպէին են ստում:

Համարուեցինք ընկերների հետ և բաժանուեցինք: Անաշխի օրը մնացինք Կարմիրուտք վանքում, երկրորդ

օրը՝ Արճակ գիւղում, երրորդ օրը՝ Աղխաղաղով անցանք Բողազբեհասան գիւղը, չորրորդ գիշեր մնացանք Սարաշի տարիների մէլիքի տանը: Սարաջ գիւղացազաւ է, ուր գլխավոր է նստում: Հինգերորդ օրը անցանք սահմանը և մնացինք Կոթուրում, միւս օրը մտանք Խոյ և, վերջապէս, երկու օրից յետոյ Սալմաստ էինք: Հէնց նոյն օրն էլ Տաշոս կիւս Կովկասից: Մենք պատմեցինք ընկերներին, թէ ինչ պէտք է անենք: Ես եկայ Թարսիգ՝ գէնքեր տեղափոխելու, ուր և հիւանդացայ: Կարօս\*) վերցրից ու դնաց Սալմաստ: Դժբախտաբար, Տաշոս էլ այնտեղ հիւանդացաւ, որով անկարող էր դնալ: Այդ ժամանակ Դումանը խմբի հետ դնաց Վան, ահադին կոչեցինք: (Յ) հարուց բաղկացած խմբից միայն 25 հոգի էին տեղ հասել. միւսները օրը սպանուել էին, որը ստուել ձիւնից ու ցրտից:

Ես առողջացայ ու գնացի Նախիջևան՝ գէնք փոխադրելու: Մեծ եղաւ զարմանքս, երբ կայարանի մօտով անցնում էի ու, յանկարծ, տեսայ օրիորդ Մաղիկին: Տէր Աստուած, այս ի՞նչ եմ տեսնում. ես կարծում էի, թէ նա արդէն Կարին էր: Նա պատմեց ինձ, թէ ինչ անյաջողութիւն էր պատահել: Գնացել էր Կարս, որպէսզի մեր ընկեր թաթուլի\*\*) հետ գնար Կարին, բայց Կարսի նահանգապետը թոյլ չէր տւել անցնելու: Ուղեցել էր զաղտնի անցնել, դրան էլ Կարսի ընկերները չէին համաձայնուել: Վերջը ստիպուած է եղել կրկին Պարսկաստան վերադառնալ:

Ես և օրիորդը հէնց այն օրը անցանք Երասխը: Մարանդի վրայով հասանք Թարսիգ ու տեսանք Տաշոսի այնտեղ պարկած հիւանդ: Մի քանի օրից յետոյ, ես կրկին վերադարձայ Կովկաս գէնքեր փոխադրելու և կամաւորներ հրաւիրելու համար: Այդ ձմեռը ես պլուտում էի Նախիջևանի, Գիւմրիի և Ղազախի գիւղերում: Երբ հասայ Երևան, Թիֆլիսից հեռագիր ստացուեց. ես ուրախացայ, որ կրկին պէտք է տեսնէի Թոփալեանին: Գնացի Մարիկեանց տուն. այն օրը հաւաքեցին մեր ընկերները. տեսայ Թոփալեանին, նա չճանաչեց ինձ, ես էլ ամաչեցի որ ծանօթանամ:

Ընկերները ինձ ուղարկեցին գաւառները կամաւորներ գրելու և լաւ գէնքեր առնելու: Ղազախից ստի և փոխադրեցի Գիւմրի՝ Ջալադի և Արա-Մելիքի խմբի համար: Ես էլ կամաւորներին վերցրի եկայ Նախիջևանի մօտի Ոսնիլլար գիւղը Սուրբ Ստեփանոս Նախափկայի վանքից փոխադրելու համար: Իմ մօտ մնացին երկու հոգի. դրանց փամփուշտներով մաքսանեցնելի հետ անցկացրի Երասխը: Դժբախտաբար, Մակուի Թէյմուր խանի ծառայողները բռնում են փամփուշտները և վերաւորում կամաւորներից մէկին:

Միւս օրը ոտքով գնում էի դէպի Բաշ-Նորաշէն: Տեսնեմ՝ գաւառապետի օգնականը մի քանի ձիւաւորներով գալիս է դէպի գիւղը: Երբ մօտեցաւ ինձ, հարցրեց որտեղացի լինես. Թիւրքերէն պատասխանեցի, թէ՛ Պարսկաստանից եմ: Պահանջեց անյապիր. մօտս կային մի քանիսը. հանեցի մէկը, որի անունն անգամ չէի

\*) Կարօ — Արիստակէս Զօրեան, Ռաստամի եղբայրը. սպանեց կամաւորի արշաւանքի ժամանակ:

\*\*) Թաթուլ — Աբամ Աբամեան — Աշուտ, Գարծուլ էր և Դժոխք անունով: Կախեց Երզրումում:

խմանում: Բարերարաբար, անհնա չհարցրից: Գա-  
նաուպետր նկատելով, որ զինք կրկնու իրաւունք  
չկայ, պահանջեց սուր. քանդելի է յանձնելի տա-  
նապետին: Հրամայեց զնալ օտարկանատն ատանալու  
համար: Ինձ բայ թողին. դուրս նոր փորձանք տակ  
մզկու պէտք չունէի, որ ոտերկանատն մտնեմ: Մի  
քէչ հետախոյոց յետոյ, սկսեցի վազել: Դու կայարանը  
չհասած, տեսնեմ՝ մի ձիւտոր շատ թուռոյ գայիս է:  
Սրիս վրա տպած կային Հ. Յ. Գ. տառերը. այդ որ  
տեսնում է, դատասպետը իսկոյն գլխի է ընկնում,  
խմանում է իմ ինչ լինելը և հրամայում է ծառային  
չտապել ինձ բռնելու համար: Բայց ի դուր. ես արդէն  
կտորը նստած դիւմ էի զվսի Երեան:

Երեանից Դի քանի կամաւորներ ուզում էի բերել  
կրկին ճանապարհէլ: Ոտերկանատն ծառայողները  
մէկը եկաւ և ասաց, թէ՛ ինչ որ ժանդարմներ արդէն  
գնացել են ինձ ձերբակալելու. խորհուրդ տուց շուտով  
հեռանալ: Կամաւորներին ճանապարհէցի, իսկ ես,  
Գանձակի վրայով, անցայ Շուշի, ուր տեսայ Վահա-  
նին: Այդտեղից միասին, երկու կամաւորի հետ, Խու-  
ղաֆերիին կամուրջով անցանք և Ղարաղաղի վրայով  
հասանք թաւրից: Այդ ժամանակ օրիորդը Սարմատում  
Գուճանի տեղը ուսողը ռուսացուհու պաշտօն էր վարում: Մի  
քանի օրից յետոյ օրիորդը եկաւ թաւրից զինք տեղա-  
փոխելու Կարօի հետ:

1896թ. դարնան սկզբին անհամբեր սպասում էինք  
Վանի խմբին և վալադներին: Մեր ընդունած ծրագրով  
մեր 200 կամաւորներին Կովկասից պէտք է աւելանար  
100 ձիւտոր (Նենթի\*) սաղմորդութեամբ: Սակայն,  
մեր փամփուշտը շատ քիչ էր, Կովկասից խոստացած  
որոշ պաշարը չստացեց: Բայց սրա մասին յետոյ կը  
խօսեմ:

Այժմ այն պէտք է ասեմ, որ 96 թվականը կարծես մեզ  
համար պատու էր տուել մի շարք անյաջողութիւններ:  
Մի Երեկոյ նստած խօսում էինք մեր մեծ արշաւան-  
քի\*\* մասին, թէ ինչպէ՞ս պէտք է դուրս գանք, ո՞ր-  
տեղից պէտք է սկսենք և այլն: Այս տաք վէճերի մէջ  
էինք, որ, յանկարծ, Սարմատից եկաւ մեր սուբան-  
դակը և հարորդեց, թէ Վանից Գուճանը իր 35 հոգուց  
բաղկացած խմբով սպանով հասել է մինչև Դերեկ,

բայց Դերեկում առաւօտից մինչև երկրօրեան ժամը  
իննը խիտ կուռ է բռնել. սպանել են մեր հերոս Շե-  
րուն, Մանուկը և Հակոբ: Քրիստոսից ընկել են իննը  
հոգի և մի քանի վրիւտոր: Շէրօի կորուստը մեծ էր և  
չտո գզալէ էր մեզ և մեր գործունէութեան համար:  
Կուռի միւս օրը պարսից կառավարութիւնը գնում բըր-  
նում է 43 հոգի, Հին քաղաքում, իսկ միւսները փախ-  
չում են: Բանասարկայիններին պահելցին մօտ երկու  
ամիս. վերջը ահազին կաշառքներով հարկւ աղատե-  
ցինք:

Բաշեց 10-15 օր, սուբանդակ եկաւ Վանից և  
Հարորդեց Վանի կոտորածը և մեր ընկեր Պետօի  
սպանելը: Պետօի և Մարտիկի միացած խմբերը, բաղ-  
կացած 83 հոգուց, Վարաղայ սարից կուռով դայիս  
են մինչև Գարահարաբ լեւոր: Շատանում է թշնամու-  
ռութը և սկսում է աւելի կատաղի կուռ, որ ստակալի  
վախճան է ունենում. խմբից աղատում է միայն մի  
երիտասարդ ասորի, որը եկաւ և պատմեց դժբախտ  
դէպքի մանրամասնութիւնները: Երկու խմբերն ևս  
մեծ նեղութիւն են կրում պաշարի կողմից. ո՛չ մի օդ-  
նութիւն կամ ուտեստ ստանալու յոյս չէին կարող  
ունենալ: «Որտ էինք ուտում կուռելիս, քաղցից մեր  
ձեռքերը անդոր էին հրացան բռնելու» — ասա ինչ էր  
պատմում միակ ազատանք:

Տաճօ գնաց Ուրմի մասնացիներին միջոցով Մար  
Շիմօնի հետ բանակցութիւն անելու: Հետեանքը այն  
եղաւ, որ մեր և քաջ մասնացիներին միջև հաստատուե-  
ցին բարեկամական յարաբերութիւններ: Ես էլ նորից  
վերադարձայ Ս. Ստեփանոս Նախովկայի վանքը, մի  
շատ կարեւոր գործով: Այդ օրը Նէշօն վերադարձաւ  
Նենթի մօտից: Նոյն օրը իմ գործս յաջողութեամբ կա-  
տարուեց. ես և Նէշօն վերադարձանք թաւրիկի մօտի  
գերդերից մէկը, որտեղ Վահանից նստակ ստացայ,  
թէ ինչպէ՞ս անյաջողութիւն է պատահել թաւրիկ-Սալ-  
մատ սկզբնոր տեղափոխելիս. կառավարութիւնը բռնել  
էր երկու բնո հրացան և փամփուշտ, երկու էլ կամա-  
ւոր, որոնցից մէկը հենց արհեստատուն էր: Մի քանի  
օր յետոյ, երբ կամաւորները փամփուշտ էին չինում,  
վառում է մի քանի գրանձայ վառօղ, այրում են է  
կամաւորները, որոնցից մէկը, Ջալալ անունով, մեռ-  
նում է:

Այս մի շարք անյաջողութիւնները յետաճեցին  
մեր արշաւանքը: Միայն մեր ուղարկեցինք երկու  
խմբեր, որպէսզի օգնեն Վեր այնուպէս նացած ընկեր-  
ներին, մինչև մեր վարժուելը: Ես երբ տեսայ արշաւան-  
քի յետաճելը, գնացի Շուշի փամփուշտ տեղափոխե-  
լու, իսկ Նէշօն մտաւ թաւրից: Ես հետո տանում էի  
100 համար «Նրօշակ»: Պուղաֆերիին կամուրջով անց-  
նելիս, թերթերը զբւռն էինք մեծներին թամբի տակ,  
կարծելով թէ միակ սպանով տեղին է այդ: Պահապան  
զինուորները մեզ խուզարկելիս հանեցին թամբի տակից  
թերթերը և ասացին, որ կարդանք: Ես ասացի, թէ՛  
կարդալ չեմ իմանում. իմ ուղեկիցս կակաղելով «Նրօ-  
շակ»-ի տառերը կարդաց «Մը... մը... շակ»: Թէպէտ  
ուղեցինք «Նրօշակ» «Մշակ» ցոյց տալ, բայց անպի-  
տանը միւս կողմի պարսիկներին յանձնել և հրամայեց  
մեզ, որ միւս անդամ այդպիսի թերթեր չվերցնենք:  
Մենք, ի հարկէ, դուրս տինք ու հեռացանք:

\*) 1896թ. ապր. 10-ին Երեանում համաձայնու-  
թիւն էր ստորագրել ինքնի (Սամսոն, Վարդան) և  
Հ. Յ. Գ. Երրորդ (Մուգատամի) կենար. Կամիտի մի-  
ջև, որով ինքնիք պայտասուր խոստում արեց՝ ինքը իր  
բաշիքի խմբով անցնել Մայր Հայրենիք. նրա ազատու-  
թեան սուրբ գործի համար զենք բարձրացնել և որպէս  
Հայ Յեղափոխականների Գաղմակցութեան ազնի գիւ-  
նար մինչև կեանքի վերջին յապէն պաշտպանել իր օգ-  
նութեան կարօտ հայրենի և եղբայրներին: Սակայն,  
երբ գործի ժամը հասաւ, ինքնիք գրծեց իր պատասա-  
ր խոստումը:

\*\*) Գաղմակցութիւնը որպէս իր Բանկ Օրթոմանի  
դէպիքի հետ փիւմանակալ Պարսկաստանից էլ կազմա-  
կերպել մի մեծ արշաւանք, բայց այն շարք արգելիներ  
թոյլ չտրին իրականացնելի այլ որոշումը: Մեծ արշա-  
ւանքի սեպի ունեցաւ յայտնի տարի — իսմաուրի  
արշաւանքը:

Երկու օրում հասանք Շուշի: Այդտեղ միայն երեք բեռն ապրանք կար սպորտաստ. վերցրել եղած փամփուշոնները և սասացի ընկերներին, որ էլի առնեն և շուտով հասցնեն մեզ, մինչև մեր խմբի շարժելը, իսկ ես գաղտնի ճանապարհներով անցալ Երասխը և Ղարաղաղի վրայով գնացի Սարմաստ: Տեսնելով, որ Սալմաստը ուրախ ու դարթ է, կարծում էի, թէ միւս օրը պիտի արշաւենք, բայց էլի անյաջողութիւն: Այստեղ գտնելով Վարդանին և միւս ընկերներին՝ ես չփոթեցի: Ես մտածում էի Վարդանին տեսնել Վանում, իսկ նա Սալմաստ էր, Հիւանդ պարկած, կատարելապէս ուսասպառ դրուժեանք մէջ: Մի ամբողջ տարի է չէինք տեսնել իրար Հետ. համբուրեցինք: Վարդանը պատմեց, թէ ինչպէս Վանում պաշարւած են եղել երեք տան մէջ: Այդպեստեղ նորաչէն թաղի տէր Կոմիտասը գնացել մատնել է կառավարութեան, և կատարութիւնը զօրքով ու թողանութիւնով պաշարել է մինչև երեկոյն. կրկն եւն մղել թողանութիւնը և ոտմբերի դէմ: Մուժը ընկնելուց յետոյ, տղերքը, բաժանած չորս խմբի, դուրս են գալիս Արդեստանից ու գնում նախապէս որոշւած Կեմախարը: Վարդանը և Մուքոս իրենց խմբերով հասնում են սարը, բայց միւս երկու խմբերը, ընկնելով խիտ անձրեի տակ, կորցնում են ճանապարհը և զաղչից նեղելով՝ մտնում են Կէմ գիւղի մօտ մի մարազ: Մի պտուռ կլին իմացնում է կառավարութեան, և զօրքերը թիրաղելի Հետ շրջապատում են մարազը: Տղերքը երկու մասի բաժանւած, կուելով դուրս են գալիս մարազից. ընկնում է Ղարաբաղցի Սալջատուրը: Կուրը տեւում է ամբողջ օր, բայց տղերքը մտնւմ են ապահով: Ապա բռնելով մի բլուր՝ մոսինի հրացաններով գլորում են թշնամուց շատերին, թողնելն տալիս մօտեանալու: Այդ գիւղից անցնում են Շատախ՝ յուսալով Վարդանին և Մուքոսին այնտեղ գտնել, բայց Վարդանը ոտքի հիւանդութեան պատճառով ստիպւած է լինում վերադառնալ Պարսկաստան: Ետտից խմբերը նորից գալիս են Վարազ և լսելով Վարդանի ու Մուքոսի վերադարձը՝ նոյնպէս գալիս են Պարսկաստան: Այստիկի սարում խիտ ընդհարում են ունենում զօրքերի և թիրաղելի Հետ, բայց մերոնցից ոչ ոք չի վնասուում, իսկ թշնամիներից ընկնում են մօտ 12 հոգի:

Այդ բոլորից յետոյ, նորից որոշեցինք գննէ սահմանադրի վրա մի արշաւանք անել, բայց առաւօտեան երբ տեսանք սարերի ձիւնը՝ բռնած բոլոր սար ու ձոր, բոլորովին յուսահատեցինք: Ո՛ր կարող էինք գնալ, քանի որ մեծ մասամբ գործ պիտի ունենայինք սարերում. անկարելի էր երկու կամ երեք ժամ մնալ, ցրտից կը չորանայինք ամենքս: Ստիպւած մեր գործողութիւնը յետաձգեցինք միւս գարնան, իսկ կամաւորներին ցրեցինք գիւղերում. մի մասն էլ գնաց Ռուսաստան: Մի քանի օրից յետոյ Վանի կոմիտէից ստացանք նամակ, որով պաշտօնապէս պահանջում էին Տաշլին, որպէս ներկայացուցիչ մեր անմոռաց Պետրի տեղ: Ես ու Տաշլին գնացինք մեր պատրաստութիւնը տեսնելու. պէտք է գնայինք 10 հոգով: Բարձր պատրաստութիւնները տեսանք, ուզում էինք միւս գիւղերը դուրս գալ, բայց Տաշլին այնպէս հիւանդացաւ, որ անկարելի էր

դուրս գնալ. այդ էլ յետաձգեց գարնան: Ես երբ տեսայ, որ ոչ մի տեղ մեր գնալը չի լինում, մտածեցի գոնէ գնալ՝ մեր ընկեր Շէրօս և նրա երկու ընկերների գլուխները բերել: Ես, Կարոս ուրիշ չորս ընկերներով գնացինք Դերիկ, տեսանք, որ դիակներից սաստիկ հոտ է գալիս. քարեր ժողովեցինք վրաններ, որպէսզի ձմեռը ստանա ժամանակ գանք տաններ:

Արդէն մուժն էր. մենք էլ յոգնած էինք: Մտածեցինք մնալ որտեղ Աւօի տնակում: Գիւղերը մնացինք: Առաւօտեան մեր Փոխիկը բարձրացաւ դէպի տաք ջուրը: Ջրաչէց մի քանի րոպէ, Փոխիկը կանչեց մեզ, թէ՛ թիրաղեր են երևացել: Մենք վազեցինք դէպի Դերիկի դիմացի քարերը, տեսանք՝ թիրաղի քարան, գնում էր դէպի շին Գաղաք: Տղերքը ուզում էին յարձակուել վրաները, եւ չթողի: Կարոս մի կըքաւ տեսաւ և հրացանը արձակեց վրան. թիրաղերը Հէնց կարծեցին, թէ իրենց վրա ենք արձակում, թողին քարանը, մտան քարերի տակ ու սկսեցին հրացան արձակել մեզ վրա: Տեսնելով թիրաղերի յանդգնութիւնը՝ սկսեցինք մեր մոսինները գալիլ նրանց կողմը. նրանք էլ տեսնելով մեր հրացանների ուժը՝ թողին իրենց թիրաղերը և սկսեցին փախչել երկու վերստաչափ Հեռու: Քարանը մնաց մեր արամազըութեան տակ:

Ջրաչէց կէս ժամ, Փոխիկը կանչեց մեզ, թէ՛ Խանտորի և Աշնակի հաւարն է գալիս, շուտ բարձրացէ՛ք սարը: Վազեցինք Դերիկի դաշտ կուրած տեղը, տեսանք 40-50 ձիւտոր և Հետեակ թիրաղի: Ի հարկէ, ինչ պէտք է անէին մոսինների առաջ. երբ տեսան անձուխ գնդակները՝ մնացին ապաւած. չորս կողմից զնդակներ էին տեղում, բայց արձակողներին չէին նկատում: Սկսեցին փախչել յետ: Այդ ժամանակ մենք ընտրեցինք մի բարձր սար և հաւաքեցինք այնտեղ: Սպասում էինք կուր: Դեռ չէր անցել երկու ժամ, երբ տեսանք երկու հարիւրի չափ ձիւտորներ և Հետեակ թիրաղի: Իսկապէս, թէ՛ վախեցանք, որովհետեւ թիրաղախրաթների ամենակատաղի տեղն էինք գտնուում: Սպասում էինք անհամբեր: Մեր հրացաններից մէկը բերդան էր. չթողինք գործածելու, որ մուխից չնկատեն մեր բռնած թիրաղերը: Թողինք, մինչև որ լաւ մօտեցան ու սկսեցին իրենց համար պատասպարաններ շինել: Այլևս չկարողացանք հանդիման, երբ տեսանք, որ թշնամին մեր աչքի առաջ էր երևեց համար պատասպարաններ է չինում. մոսինները ուղղեցինք դէպի թիրաղերը: Մի քանի րոպէից յետոյ, մեր գնդակները քանդեցին պատասպարանները թիրաղերի գլխին: Թողին փախան դէպի ձորը և ձորերով աւելն ու մօտեցան ու չորս կողմից պաշարեցին մեզ: Կուրը լաւ մտազայտ երկու կողմից էլ: Երեք-չորս ժամից յետոյ, վերջապէս, մեր մոսինները հանեցին թիրաղերին իրենց պատասպարաններից. սկսեցին փախչել Կրկու-երեք վերստաչափ Հեռու: Եւ երբ տեսան մեր ինչ լինելը, ստանալ դիմադրելու թողին ու Հետացան:

Միւսը օրը ես և Տաշլին գնացինք Թաւրիզ, ու նորից սկսեցի զբեր-կարգալ սովորել օրիորդ Մաղիկի մօտ: Երբեմն էլ պարապում էի մաքսանեղութեամբ:

(Շարունակելի)

# Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

«Իրօշակ»-ի վերջին համարով, արտասույթ էինք «Պրազա»-ի լավան տեսութիւնները՝ Թիւրքիոյ տրեսեանական տազնապի մասին, — ընդհատում՝ արդիւնաբերական և առևտրական ձեռնարկներու, սնանկութիւններ, դործադրութիւն, անկուս արտաքին առևտուրի և մանաւանդ արտածման, վարկարեկում թրքական դրամի և վերջապէս ծանրացում տուրքերու: «Վերջին 5-6 տարւան ընթացքին տուրքերու ընդհանուր գումարը հասաւ 90 միլիոն թրքական լիրայի: Ապրուստի սղութեան այս պայմաններուն մէջ, Թիւրքիոյ աշխատաւորները պարտաւոր են երկու անգամ աւելի տուրք վճարել, քան 1924-ին»:

Այս սողերը հրատարակուած էին 1929 Նոյեմբեր 28-ին: Եւ անշուշտ բարեհաճ արմատաբերութիւններով: Իսկ բուն տնտեսական կեանքը, որ միշտ կոշտ ու կոպիտ օրէնքներ և պահանջներ ունի, արդէն անդունդին ափը գլորած էր Թիւրքիան, դեկտեմբերի առաջին շաբթուան: Անպիտակ ստերիլներ սրընթաց վերելք մը կատարելով, բարձրացաւ մինչև 1110-ի, ինչ որ ընդհանուր խոնճապ առաջ բերաւ: Աւսուն կանուխ արթնացող օտար դրամ կը գնէր, մանաւանդ որ բերնէ բերան շրջան կընէին վրդովիչ լուրեր: Մասնաւորապէս կը խօսէր թղթազրամները կիսելու կամ նոր թղթազրամ հանելու մասին: Կատալալութիւնը հարկադրեցաւ արտակարգ միջոցներու դիմել, և ստերիլներ նոյնքան արագութեամբ և նոյն անսովոր համեմատութեամբ իջաւ բանաւոր սակի մը (1925-30): Դեկտ. 4-ին, գործավարներու խորհուրդը գրի կանոնէր շաբթ մը որոշումներ, որոնք ամէն բանէ առաջ բացորոշ անանկութեան մը ապացոյցներն են: Այսպէս,—

1. Կատալալական պաշտօնատունները, այս որոշումներուն հրատարակութեան թւականէն սկսեալ, օտար արժէքներու (զամպիօ) գնումը պարտադրող յանձնարարութիւններ չպիտի կրնն և գնումներ չպիտի կատարեն: Պիտի աշխատին մինչև հիմա սկսած գործերը տեղական արտադրութիւններով գլուխ հանին: Այն գործերը որոնց մէջ կարելի չէ տեղական ապրանքներ գործածել, պիտի յետաձգւին յաջորդ տարւան (1930), եթէ այդ յետաձգումը վնասակար չլլայ պետութեան համար:

2. Պաշտօնատուններուն պէտքերը տեղական ապրանքներով պիտի հոգացուին: Անոնք որ կարելի չէ տեղական ապրանքներով ապահովել, մինչև հինգ հազար ոսկի եղածները՝ եվրոպական գործավարութեան, իսկ 5000էն վեր ելածները՝ գործավարներու խորհուրդին վաւերացումով պիտի հոգացուին:

3. Գնումներու և յանձնարարութեանց պարմանազերներուն մէջ իբրև պայման պիտի տրուին տեղական հում նիւթերը:

4 և 5. Պետական և մենաշնորհեալ երկաթուղիներու միջանկեալ ձողերուն համար ( թրալէքս ) նոր յանձնարարութիւն չպիտի ստանան: Մրազեր մը պիտի պատրաստուի, բոլոր «Թրալէքս»ները տեղական փաթով շինելու համար:

6. Արտաքին գործավարութիւնը և միւս պետական պաշտօնատունները արտասահմանի ներկայացուցիչներուն հետ պիտի հաղորդակցին միայն կարևոր և ստիպողական պարագաներու մէջ: Եւ փոխադրաձայն:

7 և 8. Եթէ թափուր պաշտօն բացի արտաքին և միւս գործավարութեանց մէջ, և հարկ ըլլայ նոր պաշտօններ նշանակել, պէտք է գործավարներու խորհուրդին որոշումը ստանալ: Նոյնպէս, երբ հարկ ըլլայ առժամապէս պաշտօնները ղրկել օտար երկիր կամ այդ երկիրներէն պաշտօններ և մասնազէտներ բերել:

9. Մասնաւոր ջննութիւն պիտի կատարուի տեղական ապրանքներու գործածութեան օրէնքը գործադրելու համար:

Վերջապէս, նոյն սեղմումներուն ենթակայ են նաև մասնաւոր վարչութիւնները, քաղաքապետութիւնները և այն ընկերութիւնները որոնց դրամաշրջանին մասնակից կամ շահակից է կառավարութիւնը:

Այս օրէնքը նոր կացութեան չոր կմախքն է տակաւին: Բուն տազնապին կենդանի պատկերը կու տան վարչապետը ինք, իր այսպէս կոչուած պատմական ճառով, և թիւրք մամուլը՝ այդ ճառին վրա ձևակերպած պայքարով:

Դեկտ. 12-ին, Լամէթ փաշա ներկայացաւ Ազգ. Մեծ Ժողովին և պարզեց դրամի անկման պատճառները, վերջին 5-6 տարւան ընթացքին: Իր տեսակէտով, մէկ պատճառ մեծաբանակ ներածուում է, միւսը՝ բաց ելեմտացոյցով երկրի կառավարելու սովորութիւնը, և երրորդը՝ վերջին քանի մը ասորիներու երաշտութիւնը: Լամէթ փաշա կատարեալ վստահութեամբ կը յայտարարէ որ «այլևս չի կրնար կրկնել բաց ելեմտացոյցի վտանգը»: Իսկ ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են, դրամին արժէքը պահելու և կացութիւնը բարելաւելու համար.

— Ամբողջ աւժով պիտի յաշխտինք որ մեր թղթադրամը կայուն արժէք ունենայ, բաղադատելով ոսկեպրամին հետ: Բայց այս՝ ոչ թէ իշեցնելով թղթադրամին արժէքը, այլ բարձրացնելով:

Թղթադրամը բարձրացնելու համար, տեսալիք գուխալութեամբ օտար դրամ առնելով իրապարակ չպիտի համենք: Մեր գլխաւոր միջոցը պիտի ըլլայ իւրաքանչիւր երկրին ներածումն և արտածումն հաշվեկշիռը: Պիտի աշխատինք այնպէս մը ընել, որ արտածումը հաւասարի ներածումն: Ասոր համար ալ, պետութիւնը

և անհատները պէտք է տեղական արտադրութիւններով գոհացնեն իրենց պէտքերը :

*Ամենէն կարեւորն այն է որ ժողովուրդն ալ դո՛ւստնայ եղածով և շատ չճախէ : Ահա օրինակ մը ձեզի : Թիւրքիոյ մէջ տարեկան 5 միլիոն ոսկիի սուրճ և 2 միլիոն սակիի քէյ կը սպառի :*

Եթէ մեր արտադրութիւնը չբաւէ և աշխատանքը հայրենակիցը ստիպել ընտրութիւն մը ընել հացին ու սուրճին միջև , մեր անբազը ուժով իր ականջին պիտի պռտանք որ սուրճը չնայսլնորէ և ուժասպառ չըլլայ : Զայտի քոյուարներն որ քիւրք ազդիլը միհար և քոճախտանք վիճակ մը ստանայ անոյշ բոյրերու և նուրբ մետաքսեղէններու մէջ : Պիտի ուզենի որ մեր ազդիլները նմանին այն քիւրք մայրերուն , որոնք Ամատալուի լեռներու ծաղիկները իրենց գլխին գարնելով , իրենց կայտաւ ամառնով ազամարտիք կընցնեն բանակին համար : Կիններն են որ գլխուտը դէրը պիտի կտաւրեն ազգային խնայողութեան մէջ : Վնասպէս որոշած ենք շարժման մէջ դնել պետական բոյրը ուժերը , որպէսզի հայրենակիցները գիտակցութեան գան և ազգային անտեսութիւնը փրկուին :

*Կառավարութեան ծրարդին մէջ կայ , նաև , Հաստատումը Թրքական դրամատան մը , 50 միլիոն ոսկի դրամազուլտով , որուն կէսէն աւելին կառավարութիւնը պիտի զնէ : Այս դրամատան Համար , երժանական գործավարութեան մօտ կայ չորս միլիոն ոսկեղորած , իսկ միւսը պիտի ճարէր բաժնեթուղթեր հրապարակ հանելով : Կառավարութեան տրամադրութիւնն է խուսափել օտար դրամազուլտէ , հետևաբար և փոխառութենէ :*

*Իսլայ այս դրամատունով չէ որ պիտի փրկուի Թըրքական դրամը , այլ երժանացոյցին և պետական թէ անհատական գնումներու մէջ կատարուելիք խնայողութիւններով և տեղական արտադրութեան յաւելումով :*

*Ըստէ՞ իր ճառին մէջ չեւտեց թէ կառավարութիւնը նպատակ չունի պարտադիր կամ կամաւոր բոյզօտ հուշակի օտար ապրանքներու զէմ :*

*Եւ սակայն , կը թի թէ Թիւրք մամուլը շատ աւելի լաւ հասկցած է իր թելադրած քաղաքականութեան իմաստը : Իր ճառին հրատարակած օրն իսկ , թունդ քեմալական «Ճիւմհուրիյէթ»ը կազմարարել ատաղջին չէին ճակատը , Վեց սիւնակի վրա .*

— Եթ պայքար մը կը բանանք ,— բոյզօտ օտար ապրանքներու դէմ (13 դեկտ .) :

*Տարբեր չէ միւս Թըրքերու լեզուն ալ : Իսկ թէ ինչ կը նշանակէ տիրող տաղանդը և ինչ «Հայրենասիրական» պարտականութիւններ կը թելադրուին Թիւրք ժողովուրդին , իբրև դրաման , կարելի է հասկնալ , նորէն , մոլեռանդ «Ճիւմհուրիյէթ»-ի յաջորդական խմբագրականներէն : Եժուուս Նասի պէյի դեկտ . 16ի խմբագրականին ճիշտ զուր գետեղած է «նկար մը . — մէկը որ կը իրայ անուշեղն ի վար , զէպի «ճանկութիւն» : Ուշադրան են նաև խորագրերը . — «Ամէն կողմ խնայողութիւն , թէ պետութեան և թէ ազգին կողմէ : Թըրքական դրամին արժէքը անպատճառ բարձրացնել» կենսական պայման է մեզի համար : Կառավարութեան ձեռք առած միջոցներուն շնորհիւ անդունդէն ապստեցանք : Հիմա հարկ է որ ամուր տեղեր քաշուին» :*

*Ամբողջ խմբագրականին ոգին ալ կը բխէ այս ահագանդէն : «Այս խնդիրը լուծելի ազգային հարցերուն թրեկս անենէն կարևորն է : Ըստէ՞ փաշայի ճառը որքան պետութեան , նոյնքան ազգին կողմէ տառապէս գործադրելի ծրագիր մըն է : Եւ կարծաւորին չափ ալ դիւրին չէ» :*

*Այնուհետև խուժանավար խմբագիրը կը փորձէ ազգը վարժեցնել շարքաշուութեան , ժուճկալութեան , նոյնիսկ գրկանքի :*

— «Ոչ ոքի կտառաբարկեմ կէս անօթի մնալ կամ մերկ պտտիլ : Բայց , թէ մեր փորը կշտացուցած , թէ հագուստ-կապուստը հարած ատեն , մէկ խօսքով ամէն անևտարի ժամանակ տիրապետող գաղափար մը պիտի աղբարարէ մեզի . — 1. Գնեխիս անհրաժեշտ է : 2. Ամենէն աման իճնչպէս կրնամ հարել : 3. Այդ ապրանքը նե՛րսը կարտագրուի թէ դուրսէն կուգայ : 4. Ինձի պէտք եղածը երկրին արտադրութիւններէն չե՛մ կրնար հարել : Ամէն մէկուն խնայած հինգ-տասը փաշայէն ի՞նչ կեղև , պիտի ըտէ . . . Ժամանակին մզկիթ մը կայ եղեր Պալատ մէկ անկիւնը , անուր՛ք «Սեպէ՛ր» թէ կերայ» : Անուրէն իսկ կը հասկցուի թէ իճնչպէս շինւած է այս մզկիթը : Մարդուն մէկը ուտելու համար բան մը ուզած ատեն , «Սեպէ՛ր» թէ կերայ» ըսելով , չէր ամենը և դրամը մէկդի կը դնէր : Այսպէս մէկ կողմ դրամը դրամները բարդուելով , այդ մզկիթը շինելու չափ խոշոր գումար մը կազմած ճեմ : Այսպէս ալ քիւրք ազգը ազգային դրամը առողջացնելու , բայիկարգելու հարկին առջև , գոնէ ատեն մը խնայողական կենսմ անընդունաւ ստիպւած է» :

*Ուրեմն , տեսակ մը շուտուլ-չուտուլ , որ արդէն սկսած է գործադրուիլ : Մ . Գեմալ Հրաման արձակած է , որ բոլոր հագուստները տեղական կերպասէ պատրաստուին , և արդէն կարգ մը գործավարներ և երեսփոխաններ փութացած են տալ առաջին օրինակը : Իսկ դեկտ . 20-ին , Ըստէ՞ փաշա Էնկիլիբի իր ապարանքին մէջ , մամուլի ներկայացուցչները հրաբարկեց թմբուով ըլխատար , (tilleul) , փոխանակ սուրճի : «Այսուհետև այս խոնարհ ըմպելին պիտի բռնէ սուրճին տեղը , իբրև ազգային ըմպելի , որպէսզի կարելի ըլլայ մեծ շահով պահեցնել ներածումը : (5 միլիոն ոսկի՛ միայն սուրճը) :*

*Այս ընթացքով , անշուտ պիտի դաշ օր մըն ալ , ուր քեմալական իշխանութիւնը պիտի հափեղարկէ հետեւի բախտակից և զինակից բոլշևիկներուն , պարտադրելով հայր , ալիւրի , ըմպելիքի , հագուստի ենւ . մթերում : Այսինքն , բռնազրուում այն բոլոր նիւթներուն որ հրապարակի վրա չեն ծախուի , և որոնց ներածումը արգելուած է : Եւ այն ատեն , անխուսափելի պիտի դառնան նաև «պոչեքը , պատերազմի օրերն յիշեցնող շարաշուք զէտիգանքներով :*

*Իսկ ներքին կողմուտան ու հարկահանութիւնը ընկանաւորին աւելի պիտի զարգանան : Այլապէս , «Ասոր կըմացոյց»ի վրասնէն է որ զուլու պիտի ցցէ : Մտոր համար է , անշուտ , որ Պոստոյ հայոց խղիճ ու կրակ հիւանդանոցն ալ , այդ դուտ բարեգործական հարիւրամեայ հաստատութենէն իսկ , 6100 ոսկի շահատուրք են պահանջած , վերջին երեք տարւան համար . . .*

*Իբրև պզտիկ արտանշան մը տիրող տաղանակին ,*

անցողակի մեկնեք թէ թիւքերն երկու օրաթիւքեր վաղրեցուցին իրենց հրատարակութիւնը, իսկ երրորդ մը, որ նոր սկսած էր, 1 շաբաթ իսկ չտեսցէ: Գաղթած թերթերն մէկը, «Վրդտամ»-ը, ամենէն հինն էր, հիմնած ըլլալով Համլտի փառքի օրերուն:

\* \* \*

Թիւրք մամուլը — ինչպէս և խորհրդայինը — միաբերան փտաբանսց «Նօլտաշ» Գարախանի այցելութիւնը և մանաւանդ ռուսեթիւրք բարեկամութեան զաշնադրին նորոգումը՝ նոր պայմանագրով մը (1929) ղեկավար 37):

Բարեկամական Գաշնադրին հիմք դրած էր 1925-ին, Փարիզի մէջ: Այս անգամ առանձին արժէք ստացան յանձնարարութիւնը, որուն համաձայն երկու կողմերը յանձն կանոնն քանակութեան չմտնել ծովն և ցամաքէն դրացի պետութեանց հետ, քաղաքական համաձայնութիւններ կնքելու նպատակով, առանց միւս կողմին լուր տալու կամ անոր հասանութիւնը ստանալու:

Անուրանալի է որ անգամ մը ևս և խորապէս կամրապղտի բոլշեւիկներու և քեմալականներու սերտ միութեանը և դիւսակցութիւնը, Տակառակ պարբերական վէճերու: Եւ մանաւանդ յայտնի պահու մը, երբ Մեծն Բրիտանիա և Իտալիա մասնաւոր մեծարանքներ կընծայեն, պատիրարութիւններ դրկելով մինչև էնկիւրի, իսկ Թիւրքերն արեմտեան պետութեանց տրամադրութիւնները կը շօշափէ, Ազգերու Դաշնակցութեան անդամագրելու համար: Կարժէ արտասովոր զաշնադրին պատճէնը, իբրև դիւանագիտական վաւերաթուղթ մը որ սերտ կապ ունի նաև մեր հայրենիքի ճակատագրին հետ:—

ՅՕԳԻԱՄ 1.— Փարիզի մէջ, 1925 ղեկու. 17-ին կնքած բարեկամութեան և չեզոքութեան դաշնագիրը երկարաձգւած է երկու տարւան համար, սկսեալ այդ դաշնագրի պայմանաժամին վերջամալու օրէն:

Եթէ դաշնագիր կողմերն մէկը, երկու տարւան պայմանաժամին լրանալէն վեց ամիս առաջ չհաղորդէ իր փափաքը՝ դաշնագրին վերջ տալու մտայն, անկախ ինքնարարար երկարաձգւած պիտի նկատուի մէկ տարւան նոր պայմանաժամի մը համար:

ՅՕԳԻԱՄ 2.— Գաշնադրի կազմերն իւրաքանչիւրը կը յայտարարէ թէ՛ քաջի արդէն հրատարակած դաշնագիրներէ կամ համաձայնագիրներէ, ո՛չ մէկ կարգի յանձնառութիւն գոյալիւն ունի իր և միւս կողմի ցամաքային և ծովային անմիջական դրացի պետութեանց միջև: Կողմերն իւրաքանչիւրը յանձնառու կըլլայ, առանց միւս կողմին տեղեկութիւն տալու, որևէ քանակութեանց չմտնել միւս կողմի ծովային և ցամաքային անմիջական դրացիներուն հետ՝ քաղաքական համաձայնագիրներ կնքելու նպատակով: Յոյնպէս՝ յանձնառու կըլլայ նաև համաձայնագիրներ կնքել՝ միայն միւս կողմին հաւանութեամբ: Այս յանձնառութեան դուրս են այն համաձայնագիրները, որոնք կը ձգտեն քնակամոն յարաբերութիւններ հաստատել կամ պահպանել այդ պետութեանց հետ և որոնք սահմանաւ են հրատարակութեան տրուելու:

ՅՕԳԻԱՄ 3.— Ներկայ պրատուելը, որ պիտի կցուի Թիւրքխորհրդային բարեկամութեան և չեզոքութեան

դաշնագրին, և այս անոր ամբողջացուցիչ մասը պիտի կազմէ, ի օրու պիտի ըլլայ երկարաձգւած դաշնագրի պայմանաժամին տևողութեամբ, համաձայն այս պրատուելի Ա. յօդուածին տրամադրութեանց: Գործադրութեան պիտի մտնէ վաւերացուելու պէս, որ պիտի ծանուցի զաշնադրի երկու կողմերուն միջոցաւ:

Անշուշտ, այս յաշնագրութեան զոհ են, ամենէն առաջ, երկու դիւսակցները: Գարախան հազի էնկիւրի հասած, «Ճիւմհուրիթէթ» ողջունելով դրացի և յեղափոխական Ռուսիան խանդավառ խմբագրականի մը մէջ, կը շեշտէր թէ՛ ռուսեթիւրք բարեկամութիւնը «պատմական իմաստ մը, պատմական պարտականութիւն մը ունի: Անկախ սովորական բարեկամութեան տարբեր, աւելի բարձր բան մըն է»:

— «Մեքն վագային անկայտութեան պայմարին մէջ մեզ իբրև պետութիւն քանջոյ առաջին դաշնագիրը կնքեցինք հարկադրային Ռուսիոյ հետ: Իսկ հարկադրային Ռուսիան գինքը իբրև պետութիւն քանջոյ առաջին արտաքին դաշնագիրը Թիւրքիոյ Ազգ. Մեծ ժողովի կառավարութեան հետ կնքեց: Անկախ հիմք մըն է թէ բարձունք մը: Եթէ հիմք մըն է, Հիւսիայան լեռներուն յարիսիսի չափ ամառ է: Իսկ կէտ թարձումք մըն է, կասկած չկայ որ կազմուեալի կառավարութեան աւելի բարձր է» (14 ղեկու.):

Նոյնքան խանդալաւ են խորհրդային թերթերը: «Պիվեստիա» էնկիւրիի համաձայնութեան ստորագրութիւնը կը հուշակէ միջազգային դէպք մը, որուն հաստատութիւնը կանցնի Ռորհրդային Միութեան և Թիւրքիոյ ուղղակի յարաբերութեանց սահմանը: «Այս համաձայնութիւնը կը շարունակէ ամբողջել փոխադարձ սպասովութեան երաշխիքները: Անով կը բարձրանայ Ռորհրդային Միութեան և Թիւրքիոյ նշանակութիւնը իբրև ազգակերտ համաշխարհային խաղաղութեան»: Պրաւդա ևս, շեշտելով թէ Ռորհրդ. Միութեան բարեկամութիւնը Թիւրքիոյ հետ՝ հիմնած է երկու երկիրներուն շահերուն վրա, դիտել կուտայ:

— «Էնկիւրիի համաձայնութիւնը կապացուցանէ թէ այս անգամ ևս ձայնագրած են ծրագրներն ու յոյսերը հարկադր. Միութեան և Թիւրքիոյ թշնամիներուն, ինչպէս և բոլոր անոնց որոնք կուզեն խորտակել թիւրքխորհրդային բարեկամութիւնը:

Անշուշտ, ամենէն առաջ մեզ պիտի վայելենք այս անքակտելի բարեկամութեան բարիքները, արուելով երկու թաթի տակ, մէկ երկրին մէջ իբրև «ազատ» Հայաստան, միւսին մէջ՝ իբրև զանցառելի քանակութիւն:

\* \* \*

Անցեալ հոկտեմբերի վերջեր, հարեւրաւոր զաղթականներ սկսան թափել Սուրիա, մասնաւորապէս Խարբեղի և Տիգրասակէրտի շրջաններէն: Հոսանքը կը շարունակուի մինչև այսօր:

Թիւրք թերթերը, քնակամաբար, տող մը գիր չեն հրատարակեր այս նոր բանագաղթի մասին: Գաղթականները իրենց ալ բան մը չեն գրտեր: Միայն կցկուտը կը պատմեն թէ առտու մը պայմանաժամ տուին, տասը օրէն քաղաք համախմբելու և արտասահման մեկնելու համար: Ո՛վ որ չի համակերպուի, բանա կը զըշի: Ենորհ կընեն սաստկած դնով ծախելու շարժուն գոյքերը, այլ

ոչ՝ անշարժ ստացւածքները: Բայց առուծախէն յետոյ բունի վճարելով սուրքերը, անցազորի գինը և այլն, և ճամբան ալ քանի մը անկամ կողոպտուելով, թշուառ դաղթականները Սուրիա կը հասնին, ընդհանրապէս պատսռ մը հացով և շապիկով: Մասնաւորապէս ծանր է կացութիւնը անոնց որ քաղկեդով կուգան, և կանգ կառնեն սահմանին վրա, Գրամըլը և Բաս-իւ-Այն:

Քիւրքերը կուղեն զապտնի պահել այս նոր տեղահանութեան պատճառը: Բայց ոչ ոքի համար զապտնիք է որ, քեմալապետութիւնը վերջին տարիներս մասնաւոր քաղաքականութիւն մը բռնած էր Անատոլիոյ խորերը մնացած հայկական բեկորներու դէմ: Ո՛չ տեղէ տեղ շարժելու իրաւունք, ոչ գիւղէն քաղաք երթեկեկ առանց հրամանի, ոչ զպրոց կամ եկեղեցի, — այլ միայն անասունի պէս արածելու և զիշերը գոմը քաշելու շնորհ: Կամ, ոտքին փոշին թօթելով ընդմիջտ հեռանալու արտօնութիւն: Քրքացումն ալ առանձին շնորհ մըն էր, բայց փորձը ցոյց տուաւ որ անօգուտ է և զանգուշային կրօնափոխութիւն չի պատահիր: Դեռ անցեալ դարնան, հետզհետէ աչքի կը դարնէր դէպի Պոլիս կամ Սուրիա հեռացողներու թիւը: Այդ օրերուն, բերնէ բերան կը պատմէին թէ պարսնաժամ տուած է հայկական մնացորդներուն՝ ձգել-հեռանալու: Միջոց ունեցողը ճամբայ կ'իյնար, իսկ անձաբը աչքերը հեռուն ուղղած՝ նեցուկի մը կը սպասէր:

Նոյն այդ օրերուն, կառավարութիւնը մասնաւոր ուշադրութեամբ կուսումնասիրէր Քիւրտերը հողին կապելու, նստակեաց դարձնելու ծրագիրը: Այս նպատակով, ամառը պտոյտ մը կատարեց ներքին գործափարը, իսկ արևելեան նահանգներու մարզպան Բպրահիմ Քալի պէյի տրամադրութեան տակ զուեցաւ 300 հազար ոսկի, տեղաւորման ծախքերուն համար: Այս ծրագիրը պիտի գործադրէ մինչև 1930 Մայիս: Եւ եթէ մասնաւոր եռանդ կը թափեն Պարբերդի և Տիգրանակերտի նահանգներուն մէջ, պատճառը այն է որ, էնիկերի կուզէ ընկնել Տէրսիմը (Պարբերդ) և հօր

աշիրէթներու տիրապետութենէն ազատել գիւղացի Քիւրտերը (Տիգրանակերտ): Տեղաւորման համար անհրաժեշտ են հող և կալւած: Արդ, ճիշտ այդ երկու ստացւածքները առանց այլ և այլի կը խլեն բառին բովանդակ նշանակութեամբ իրաւագուրկ Հայերու ձեռքէն և կը յատկացնեն Քիւրտին, ինչպէս ուրիշ տեղ՝ Քիւրքին: Այս կերպով, ուրեմն, քիւրտ գիւղացին «երախտագիտութեամբ» կը կապուի բարեկեան՝ կառավարութեան հետ, և ապստամբները կը զրկուին յեռարանէ: Կոնակը տաքնայէ և աւարին տիրանայ յետոյ, շատերը կը դառնան հլու գրայաճներ: Թէն ուրիշներ ալ, մասնաւոր Տէրսիմցիները, կառավարութենէն դրամ կը ստանան թժկան, սերմնցու զնելու համար, կը տեղաւորին հայ գիւղացիէն իւրած տունին կամ խնոթի մէջ, բայց, քանի մը շարթ յետոյ, նորէն լեռ կը քաշին... Կառավարութեան այս քաղաքականութիւնը այնքան սրած է շատ մը Քիւրտերու ախորժակը, որ անոնք այս կամ այն պէյին կըրթնած, կերթան ինքնաբերաբար պարպել կուտան Հայերու տուները:

Կարճ խօսքով, լեռնային Քիւրտերը կառավարութեան կողմէ հայկական գիւղերը կը տեղաւորեն, ստանալով տունի, արտի և ջուրի բոլոր իրաւունքները, ինչպէս կը պատմէր վերջէն հասած ճամբորդ մը: Եւ ապա ուրեմն Պարբերդի, Տիգրանակերտի, և Բալուի գիւղերէն քաղաք և յետոյ արտասահման կը քշէին արտի մը տէր կամ աղայի մը շուքին տակ մտած հայ գիւղացիները, կ'ինքն ու մանուկները: 800—1000 հողի հասած են արդէն Սուրիա, անկարագրելի թշուառութեան մէջ, իսկ զեռ քանի մը հազար կը սպասեն Պարբերդի և Տիգրանակերտի մէջ, նոյնքան թշուառ, քանի որ տեղէ տեղ փոխադրւած և զրկւած են սպրուտի ո՛րևէ միջոցէ: Կը կարծուի թէ մօտ 4000 հողի պիտի հասնի այդ շրջաններէն, եթէ Սուրիոյ ճամբաները չփակուին:



# Մ Ե Ր Զ Ո Ն Ե Ր Ը

## ՄՈԿԱՑԻ ԳՐԻԳՈՐԸ



Անցեալ անգամ խոստացանք տալ Մոկացի Գրիգորի կենսագրութիւնը: Դժբախտաբար, չպիտի կարողանանք կատարել մեր խոստումը: Հանդուցեալ ընկերոջ այնքան հարուստ կեանքի և գործունէութեան մասին մեզ մօտ եղած փաստական տեղեկութիւնները խիստ թերի են: Յոյս ունենք՝ իրազեկ ընկերները կօգնեն մեզ և առաջին իսկ հնարաւորութեան դէպքում «Գրօշակ»-ում կը տանք Մոկացիի կեանքի ամբողջական պատկերը:

Մոկացի Գրիգորը գաղափարական հին հայուկ էր, որ մինչև մահ ապրեց ու ոգևորեց Հայաստանի ազատութեան յոյսով: Անգամ բուլշեիկեան տիրապետութեան խստաշունչ մթնոլորտում նա չկորցրեց հոգեկան արիութիւնն ու հաւատը և մինչև վերջին շունչ մնաց հաւատարիմ իր իդէալին: Էլ տանջանք չմնաց, որ չկրէր բուլշեիկների ձեռքից, չէկայի դնկանների բովանդակ դարհուրանքը ապրեց, բայց միշտ մնաց անյող-դող: «Դուք կարող էք մարմին սպանել, բայց գաղափարս անկարող էք մեռցնել», չարտում էր նա տանջող չէկիստների երեսին. «Դուք ո՞վ էք, որ համարձակու՞մ էք պահանջել հաւաստ ուրանալ»...

Եւ բուլշեիկները տանջեցին նրան, տանջեցին դեւալին տանջանքներով, ինչպէս տանջել դիտեն չէկայի հրէշները: Այդ Մոկացին էր, որ այլևս անկարող տուկալու բանտային սարսափներին՝ փորձեց կախել և ինքնասպանութեան միջոցով ազատել ձիւաղների ձեռքից: Ռուս զինւորները նրան հանեցին թոկէ շղակից և, իբրև մեռած, նետեցին դիականոցը: Եւ միայն յաջորդ օրը, երբ բռնիչը եկաւ պաշտօնական ձեռակերպութիւնները կատարելու, պարզեց, որ դեռ ողջ է: Այդ Մոկացին էր, որ ամիսներ շարունակ պահուում էր չէկայի նկուղի ամենամուսյլ խցում, ուր մահուան դատապարտւածներն էին պահուում, առանց արևի լոյսի, առանց թարմ օդի, մենակ, սնօթի...

Վերջին ամիսները, աքաղաղալուց, Գրիգորը դարձել էր անդամալոյծ: Երկաթէ մարմինը չէր դիմացել քաշած նեղութիւններին: Նրան թոյլ էին տւել պարտւածներն էին պահուում, առանց արևի լոյսի, առանց թարմ օդի, մենակ, սնօթի... Գրիգորը չէր չէկայի համար: Եւ մեռաւ՝ յոյսը աչքերին, աւանդ թողնելով ընկերներին՝ անվհատ շարունակել պայքարը յանուն իր փայփայած գաղափարի յաղթանակի, յանուն Հայաստանի ազատութեան:

# Խ Ն Կ Օ Ն

Այս տարւոյ յունիս 27-ին. Թեղեհանի զիբզովմանաւանք, սապարմաք որոնց տյնկէս եղիործին մեռած հինգի հողակոյտի վրա: Հ. Յ. Դաշնակցութեան Շահաւանի կենտրոնական կամիտէի կազմից ընկ. Յ. Թաղեհանը սասց մի դամբանական խօսք, որ բնորոշում է հանգուցեալ ընկերոջ մարդկային-հասարակական դժմքը և միտժամանակ ակնարկ է ձգում Դաշնակցութեան զարգացման աշխատանքի վրա: Ստորև առաջ եմք բերում ընկ. Թաղեհանի այդ խօսքը, փոփոխիկ յապաւումներով:

«Ինչպէս մեր ազգային ազատագրական շարժման ներքառ բազմաթիւ անվեհեր մարտիկները մէջ ամենաբաւազոյններից մէկն էր. այդ շարժման էր ներքեւ նա իր կենսը այն օրանից, երբ զեռ երիտասարդ մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարժերը:

Այսօր մեր ազատագրական շարժումը ապրում է իր ամենադժբախտ շրջաններից մէկը. սկսած է սեւրկակցիան. քիչ շնն դէպքեր, երբ մարդիկ լքում են նրան, շատ է նրանց թիւը, որոնք քննադատում են ու ջանում վարկաբեկել այն... Տիրտ այնպէս, ինչպէս 1894թ. էր, Սասունի ապստամբութիւնից յետոյ...

Այսպիսի վայրկեաններին ամենամաշտո զատաւորը՝ պատմութիւնն է: Պատմութեան էջերը թերթերով՝ մարդ նորից է վերապրում անցեալը. և ներկան նրան չի թւում կտրած, առանձնացած մի ինքնաբժէք, այլ կապելով անցեալի հետ՝ դառնում է իմաստային և ներշնչում է յոյս, վստահութիւն ու հաւատք և նորից ամբարկում է մարդուն ու մղում դէպի գործ:

Ազգային ազատագրական շարժումները շնն ծագում մի կամ մի քանի անհատների քմահաճոյքով. և ի դուր են կարճաժիտ մարդիկ այդ շարժումները ներկայացնում, իբրև տաքլուխ ու անփորձ երիտասարդների խակ մտքի արգասիք... Մեր ազատագրական շարժման արամները գտնում ենք զեռ 18րդ դարի վերջերքում տեղի ունեցած Ֆրանսական մեծ յեղափոխութեան մէջ:

Այդ օրերին, երբ հնչեց յեղափոխութեան զանգահարի ձայնը, և յեղափոխական ժողովրդի մի զօրեղ հարեածով սապարկեցին միջնադարեան աստական կարգերը իրենց հզօր ու մի կապանքերով, և ըլլէր թայագործ ժողովուրդը աւերակիների վերածեց իր ստրկութեան զարաւոր յուշարձանը՝ Բաստիլ մարտըբանտը, — այդ ժամանակ ընկաւ նաև ճշւած ազգերի ստրկութեան Բաստիլը, և այդ անմոտա օտերին՝ ծաղեց նաև ազգերի ազատագրութեան արշալոյսը. ազատութեան կոչի աճը ձայնը տարածեց, ծաւալեց ու սփռեց ամբողջ Եւրոպայում և հետզհետէ Ռուսաստանը:

նի վրայով՝ Գորպատի ու Մոսկուայի հայ ուսանողութեան միջոցով հասաւ մինչև մեր Մասիսի ստորտաները...

Բայց ինչպէս Տրանսիայում՝ յեղափոխութիւնը չէր լինի այն, ինչ որ եղաւ՝ առանց Վլադիմիրի, Մոնտեպիտիների, Ռուսոների ու բազմաթիւ այլ ուսաւորիների զազափարական գործունէութեան, աշպէս եղաւ մեզ մօտ: Արդէն 19րդ դարի 30ական թւականներին — անմահ Արդեանի օրով — առաջ եկաւ մի ուժեղ մտաւոր շարժում՝ համակած ազգային ազատագրութեան հմայիչ զազափարներով: Այդ շարժումը այնուհետև աւելի ևս զարգացաւ և Յ)ական ու 70ական թւականներին հասաւ զազափնակէտին: Մ. Նալբանդեան, Ստ. Նազարեան, Մմբ. Շահազղղ, Ռ. Պատկանան, Բաֆֆի, Գր. Արծրունի և շատ ուրիշները կազմում են զբաղանազէտների ու հասարակական գործիչների մի փայլուն կաճառ: Դրանք մեզ մօտ կատարեցին Վոլոդերների ու Ռուսների դերն ու գործը: Այսինքն՝ նրանք յեղափոխեցին մեր ժողովրդի ամբողջ մտաւոր կեանքը: Խօսքի, գաղափարի մարդիկ էին դրանք: Այնուհետև եկան գործի մարդիկ՝ Փորթուզալեան, Նազարեան, Գր. Միքայելեան, Ս. Զաւարեան, Ռոստոմ: Եւ յեղափոխութիւնը ձեւակերպեց լիովին ու իմացք ստացաւ և հետզհետէ ծաւալեց, խորացաւ ու դարձաւ ոչ միայն ազգային, այլ միջազգային երևոյթ:

Սակայն, ինչպէս կան երջանիկ ու դժբախտ անհատներ, որոնք ծնում, ապրում ու զարգանում են բարեյաջող կամ անբարեյաջող պայմաններում, այնպէս կան և ազգեր: Մեր երկրի աշխարհազարկան անպաստ դիրքը, մեզ շրջապատող հզօր պետութիւնների թշնամական ու նահողական ձգտումները՝ երկարացրին մեր ազատագրութեան երկունքը, որ տեւում է աճա 40-50 տարիներ:

«Ազատութիւն կամ մահ» — աճա՛ այն ոյրերգական ձեւակերպումը հայ ազատագրական շարժման: Եւ նա կը մնայ իր ուժի մէջ, քանի զեռ մենք չունենք ազատ հայրենիք, որ հաւաքէր իր օջախի շուրջը ցլրուցան եղած իր հարիւր հարաբար գաւակներին, ջերմացնէր նրանց սիրան ու հողին, քանի թիւրքիայի սահմաններում գտնուող մեր հայրենի հողաճաւանքը զեռամայի են ու աւերած, քանի զեռ երկկ ազատ ու անկախ Հայաստանում շարունակում են իշխել ազգամեծ ու հայրենամեծ սարբերը, որոնք ամուր փակել են դռները մեր սարազիր ժողովրդի առջև:

Մեր փիճակը ներկայումս, արդարև, ոյրերգական է, բայց այն յոյս է: Ինչպիսիք ինքնին արդէն յուսատու սապացոյցներ են, որ մեր ազգային ազատագրութեան

գործը աւագի վրա հիմնած չէ և խոր արմատներ ունի ձգած ժողովրդի ամենախոնարհ խաւերում :

Ո՞վ էր Խնկօն :

Մի աշխատաւոր դիւղացի՝ Բալ-Գևաննի գիւղըցմի հասարակ գինւոր ոռոտական բանակի, ապա կամաւոր Դրօի խմբում, համաշխարհային պատերազմի ժամանակ, վերջապէս, խմբապետ Հայաստանի անկախութեան օրերին Բէօյլիք-Վէյրիլի, Ջանդիլ-Բասարի, Ղազախի ճակատներում, ուր ամէն տեղ յաճախ կատարել է վտանգաւոր ու պատասխանատու յանձնարարութիւններ և միշտ էլ դուրս է եկել պարզերես ու յայթակաս :

Նրա անվեհճութիւնն ու անձնագոհութեան պատրաստակամութիւնը նրա համար կեիւր դարձրել էին մի բնական տարերջը. նա կուէի էր պնուժ անպէս, ինչպէս հին Յունաստանում սպարտացիները՝ որպէս մի տօնական հանդէսի : Մշտական հմայիչ ժպիտը երեսին, երգով, ծիծաղով, ոգեւորած և միշտ այն գիտակցութեամբ, որ գնում է կատարելու մի վսեմ պարտականութիւն, մի վեհ գործ հայրենիքի համար :

«Ազատ հայրենիք» — ահա՛ այն իղէպալը, որը ընդգրկել էր նրան ամբողջովին, համակել նրա միտքն ու հոգին. նա ապրում ու շնչում էր միայն մի տեղիանքով՝ ծառայել նրան :

Արդպէս էլ մնաց մինչև իր եղբերական մահը :

Խնկօի ռազմական ընդունակութիւններն ու քաղաքիւնը արտայայտեցին, մասնաւոր, 1921թ. փետրւար 18-ի ժողովրդական ապստամբութեան ժամանակ, երբ իր խմբով նա շարժեց հակառակորդ գոնդոր և մեծապէս նպաստեց ապստամբութեան յաջողութեան ու ժողովրդի յաղթանակին :

Դժբախտաբար, երկար շտեկցին յաղթանակի ուրախ ու երջանիկ օրերը... Շուտով բազմահազար բնակչութիւնը հարկադրեւծ եղաւ լքել մայրենի հողը ու բռնել տարազրութեան սև ճամբան : Խնկօն հետեց ժողովրդին և իր խմբով եղաւ նրա պահպանն ու պաշտպանը...

Տարազրութիւնը տեւեց աւելի երկար, քան Խնկօն էր կարծում : Եւ այդ երկար ու ծանր օրերին նա տեսաւ նիւթական ծայրայեղ կարիքի օրեր, իր ընտանիքով. լի ու լի խմեց տարազրութեան բոլոր բարենութիւնների բաժակը, բայց կա՞յ արդեօք մէկը, որ լսած լինի նրա գանգատները կամ տեսած լինի նրան ընկճած ու յուսաբեկ : Երբե՞. նրա հմայիչ ժպիտը չէր անցնում երեսից, իսկ հոգին մանկական հոգու պէս մաքուր էր ու պայծառ, չէր պղտորուում յուսահատութեան ծանր զգացումներով. նա շարունակում էր հաւատալ և յուսալ, որ մեր հայրենիքի ազատագրութիւնը հեռու չէ, որ շուտով վերագառնալու է երկիր : Այդ յոյսով ու հաւատով էլ գերեզման իջաւ...

Մարդ, անկախ իր հասարակական դիրքից, դառնում է մեծ, արժանատու ընդհանուրի յարցանքին ու մեծարանքին, իսկ մահից յետոյ, թողնում մարդկանց սրտերում բարի յիշատակ, որ անցնում է սերունդից սերունդ, միայն այն զէպղծում, երբ մոռանում է իրեն, իր անձնական նեղ շահերն ու հոգիներ և ամբողջ հոգով ու մտքով ներհում հասարակական բարձր իղէպայերի ծառայութեան և գոհում այդ իղէպայերի յաղթանակի համար : Այդպիսիները՝ ընտրելայեւր են կեանքի մէջ,

իրենց հոգում կրում են ասուածային կայծը : Ի՞նչ կը լինէր մեր կեանքը առանց այդպիսի դաշտախաղի, առաքինի ու պայծառ հոգիներէ...

Հայ արտասարակաւ շարժումը ունի իր անմահներ ի պալլուն պանթէոնը, իսկ մի ժողովուրդ, որ ունի արքան փառահեղ անցիւր, երբե՞ք չի կորչի. վաղ թէ ոչ կը հասնի իր ապստամունչ իղէպային, կը նսածի իր հայրենիքը : Այն օրը, երբ կիրականանայ միացեալ, ազատ ու անկախ Հայաստանը, մեր հայրենիքը չի մոռանայ և իր արժանի գաւակներէ մէջ և մեր սիրելի Խնկօին, իսկ մինչ այդ, թողնե՞ք, որ խաղաղ հանդէս այս օտար, բայց հերբոնկալ երկրի երկնոխտարի տակ :

Մ Ի Ճ Շ Տ Ո Ի Մ

«Դրօշակ»-ի անցեալ № 11-ում Յ. Ստեփանեանի «Նիկոյ Դուման» յօդուածի մէջ սպորտը էին մի շարք անճիշտ տեղեկութիւններ, որոնցից կարևորները անհրաժեշտ եմ համարում շտկել :

Ընկ. Յ. Ստեփանեանը նկարագրելով հայ-թաթարական ընդհարումները Բագում՝ գրում է. «Դումանը կրկին արհամարհում է իր ոսկրացաւը ու թոքախաղը, որոնք հիծում էին իր մարմինը, և վեր է կենում Բախախեց՝ Լօթ հոգով մտնում է արեան քաղաքը, ուր տասնակներով գլորում էին անդէն Հայերը, մտուղէրը մեռին, չորս հոգով, մտնում է գիշերով թուրքական թալր և այնտեղից, Հ. Յ. Դանակցութեան մի գաղտնի պահեստից, բերում է 10-12 հրացան, սարքում, ապա սկսում իր անօրինակ հումքը :

Ձգիտեմ թէ ընկ. Ստեփանեանը ո՞րտեղից է քաղել իր այդ տեղեկութիւնները, որոնք իմ մտաւրապէս անհիշտ են : Նիկոյը այդ ժամանակ ոչ Խիւսաբալուի և ոչ էլ Թոքախալուի էր տառապում և կատարելապէս առողջ էր. ոսկրացաւը նրան առաջին անգամ սկսեց նեղել Երևանում, երբ հայ-թաթարական ընդհարումները զարգացան, և նա անցաւ Երևանի շրջանը : Նիկոյը, Լ. Թաղէտեանը (Պապաշան) և ես միասին ենք եկել Նաւթաշխարհից Բագու, երբ գնացքները դեռ ևս երթեկեղում էին և անցուղաբար այնքան էլ վտանգաւոր չէր : Նիկոյը և ես, առանց միմիանցից մի ժամ անգամ բաժանելու, մնացել ենք մինչև ընդհարումների վերջը Բագու և ապա վերադարձել Նաւթաշխարհը : Այդ ընդհարումների մասին իր ժամանակին տպւած են «Դրօշակ»-ում իմ յօդածները (1905թ. № 3, էջ 39-40 և № 4, էջ 59-60) : Կենսագրութիւն վրոյը պէտք է օգտուի որով դրաւոր նիւթերից ու ստուգւած փաստերից և ոչ թէ բերնէ բերան շրջող լուրերից, որոնք շատ անգամ անճիշտ կամ չափապահագուած են լինում :

Ապա ընկ. Ստեփանեանը գրում է. «1914 թւին, երբ հոկտեմբեր 20-ին պաշտօնապէս յայտարարեց ուսուսանչական պատերազմը, Դումանը լսեց և իմացաւ, որ հազարաւոր հայ կամաւորներ են խմբել անասնի խմբապետների շուրջը վրէժ լուծելու գարաւոր

թշնամուց, այն ինչ ինքը կծկել էր մահճում... էլ չի դիմանում հայ-թաթարական կռիւների անմահ հերոսը, նա վճռականօրէն հանում է բարձի տակ պահած ստորանակը և խիտով կրծքին, աննշանում, որովհետև անհիմաստ է գտնում այդպիսի ծանծախի կեանքը:

Համաշխարհային պատերազմի սկզբները Նիկոլին մի խումբ ընկերներով Քիֆլիսից ճանապարհ էին դնում դէպի Բագու և եկել էինք կայարան: Չափազանց ծանր վիճակում էր, և մենք դիտակցում էինք, որ մեր անւանի ընկերը իր վերջին օրերն է ապրում, թոքախտը վերջնականապէս հիւծել էր նրան: Չնայած իր այդ վիճակին և բժիշկների արգելքին, այնուամենայնիւ նա իր նւագ ձայնով գրուցում էր մեզ հետ օրւայ քաղաքական կեանքի մասին և բոլորովին բացատրական վերա-

բերումն էր յայտնում դէպի կամաւորական շարժումը, որը այդ ժամանակ սկսում էր ստանալ իր ձևակերպումը:

Փոխադրելով Բագու, մօտ մէկ մէկ ու կէս ամսից յետոյ, նա յաւիտենապէս փակեց իր աչքերը: Ճիշտ է, ամիսներ առաջ, Կիյովոպոսիում, նա կատարել էր ինքնասպանութեան փորձ, իբրև հետևանք այն զխտակցութեան, որ ինքը այլևս չի կարող ազատուիլ թոքախտից, սակայն, գնդակը անցել էր թոքերից առանց վնասելու սրտին: Անշուշտ, այդ մահափորձը արագացրեց նրա մահը, բայց այդ դէպքից յետոյ դեռ ամիսներ ապրեց նա և մեռաւ բնական մահով:

Ա. ԳԻՒԼԻՍԱՆԳՆԵԱՆ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱԱՀՎԵՐԳԻԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

#### 5 Հոկտեմբեր.

Երկու տարի է, որ բանւորները անվերջ դիմումներ էին անում, որպէսզի սչ-ընտանիքաւորների համար մի հանրակացարան կառուցել, ի վերջոյ որոշում կայացաւ, և 7 ամսից չնքը պատրաստ էր: Բանւորութիւնը իր միջից նշանակեց 3 հոգիանց յանձնաժողով, որպէսզի բնակարանների արդար բաժանում կատարել: Բայց ահա՛ ուրբաթը շարժեց շուտ եկաւ...

Գործարանի վարչութիւնը յայտարարեց, որ այդ չէնքում վարչութեան անդամներն ու տեխնիկները պիտի ապրեն, որովհետև բանւորները սովոր են խոնար բնակարաններում ապրելու, իսկ վարչութեան անդամներն ու տեխնիկները չեն կարող, սակայնպէս կը ստանան: Եւ յետոյ, նոր շինած բնակարանների վարձը բարձր է, բանւորները չեն կարող վճարել: Բայց բանւորները կողքի ընկան. ո՛չ, թէկուզ մեր ամբողջ աշխատավարձը առնէք, մենք պիտի ապրենք նոր չէնքում: Այն ժամանակ ժողով գումարեց, խօսեցին կուսբյուրի քարտուղարը, գործարանի վարչութեան նախագահը և հիմք ընդունելով ստորին և բարձր դասի պատկանողների աշխատանքի տարբերութիւնը՝ որոշեց նոր չէնքը յատկացնել վարչութեան անդամներին և տեխնիկներին. բանւորների արդար իրաւունքը խլեց ձեռներից: Եւ դեռ ստում են հաւասարութիւն չկայ բոլշեիկեան գրախտում...

### ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԶԷ՞

#### 4 Հոկտեմբեր.

Չարամիտ մարդիկ ստում են, թէ հաւասարութիւն չկայ Ստալինի իշխանութեան տակ. ո՛նց թէ չկայ: Ահա փաստեր.

1926-ին Անդրկովկասի հեռախօսային ցանցի համար յատկացեց 585,000 ռուբլի, որից Ադրբէջանին՝ 300,000ր., Վրաստանին՝ 250,000ր., իսկ Հայաստանին՝ 35,000ր.: Սա հաւասարութիւն չէ՞:

Թիֆլիսը ունէր երկկարգաբար տրամվայ. երկրորդ հերթին պէտք է շինէր Բագուում և շինեց: Կարելի էր ենթադրել, որ Երրորդ հերթին էլ Երևանում կը շինուի, բայց Ստալինը հրամայեց տաջնութիւն տալ Բագուին, Գուլիստինի, և սրամիայի հերթը անցաւ Բաթումին: Սա հաւասարութիւն չէ՞:

Հնգամեայ պլանով Անդրկովկասում նախատեսւած էր երկու շաբաթի գործարան՝ առաջին հերթին Լենինականում, յետոյ Գորիում: Բայց Ստալինը ցանկացաւ շաբաթի գործարան ունենալ միւսայն Գորիում և այդպէս էլ եղաւ, իսկ Լենինականին չորհուրեց պատել... Գորիի գործարանի համար հում նիւթ պատրաստելու: Հաւասարութիւն չէ՞:

Ստալինը հրամայում է, իսկ Հայաստանի «սոցիալ-դաւաճան» լակէշնըրը լուռ համակերպում են «СЭШ-ШКОЛ» (լսում եմ) ասելով: Ահա ձեզ — հաւասարութիւն:

ԼԵՆՏԵԿԱՍԵԼԿԱՍԲԻՒՆԱՏՈՒՄ

2 Հոկտեմբեր.

Առաւօտեան կայացաւ տեխտիկոմբինտի հանրակացարանի շափահաս և անշափահաս բանւորների ընդհանուր ժողովը: Երկրայ էին մօտ 350 հոգի: Օրակարգին էր՝ բանւորներին հանրակացարանից հեռացնելու հարցը: Ետխաղաճում էին կոմբինատի վարչութեան վարիչ լեյ. Գոլթուսին և 2 ուրիշ կուսակցականներ:

Ընկ. Գոլթուսին բացատրեց, որ ի նկատի ունենալով սենեակների մեծ պահանջը պաշտօնեաների կողմից և այն, որ վարչութիւնը ուզում է սենեակների վարձը բարձրացնել, անհրաժեշտ է, որ բանւորները եօթը օրւայ ընթացքում դանին իրենց համար սենեակներ և դատարկին հանրակացարանի շէնքը: Այդ առթիւ խօսեցին Ծ հոգի ամերկոմի որբերից: Երանք յայտնեցին, որ հանրակացարանի քնակիչները առհասարակ որբեր են, շատերը անշափահաս ու չնչին աշխատավարձով ապրող, իրենց ստացածը նոյնիսկ չոր հացի չի բաւականանում, անբարեխղճութեան չէ՞ նրանց փողոց նետելը, այն էլ այս ամբան ցրտին: Բայց ընկ. Գոլթուսին չուրից լսել. նա պահանջեց անպատճառ կատարել հրամանը, թէ չէ ստիպւած կը լինի ոստիկանների միջոցով հեռացնել շէնքից: Գոլթուսինի խօսելու միջոցին ժողովականները ամէն կողմից գանդապան վատ խօսքեր էին ուղղում նրա հասցեին. «աւազակ», «սրիկայութիւն է» և նման բացաղանջութիւններ: Բայց վարչութեան նախագահը մնաց անդրաւելի:

Տեսահաստած բանւորները դիմեցին գաւառական կուսակոմիտէի քարտուղար ընկ. Բանահանին: Նոյն օրը ժամը 3-ին գաւակոմում տեղի ունեցաւ դրօժարանի վարչութեան և գաւակոմի միացեալ ժողովը, որի որոշումը բանւորներից պահանջ գաղտնի:

Յարջօրը օրը նորից բանւորների ժողով դումարեց, իրեն շարունակութիւն առաջին ժողովը: Երկրայ էին ընկ. Բանահանը, Գոլթուսին, Չուրխաների կենտր. վարչութիւնից ընկ. Վարդուշը և մի քանի ուրիշ կուսակոմիտէներ: Բանահանը սկսեց համոզել բանւորներին. թէ՛ պէտք է ենթարկւել, որովհետեւ տրւած որոշումը շատ ճիշտ է և համապատասխան է լեւիներան գծին. նրանք, որոնք չեն համաձայնի, ընկնում են աջ օպորտիւնիստների դիրքը: Բանւորների կողմից խօսեց 16 տարեկան մի որբուհի, որ շատ խիստ յարձակումներ դրածուց. «Մենք շատ ենք կերակրւել ձեր դատարկ խօսքերով, որոնք ամբողջութեամբ խաբեքայութիւն են»: Այս յանդուպ խօսքերը բուռն գայրալի առաջ բերին Չոլերի մէջ. ժողովը վերածուեց զբոսի. ամէն կողմից գոռում-գոչում, աղբուկ-միտր, խանաչիտութիւն, գանդապան տեսակ բացաղանջութիւններ կառավարութեան և կոմկոմի դէմ: Միւրմտեց ոստիկանութիւնը և սկսեց ուժով դահլիճից հեռացնել որբերին: Պօստիներին ձերբակալեցին: Ժողովը խանգարեց: Վճիռը ի կատար ածեց ոստիկանութեան աջակցութեամբ:

Ջեմիլ

Բ Ա Գ Ո Ւ Ի Ծ Ր Ջ Ա Ն Ի Ց

Մեզ ծանօթ վստահելի մի անցորդ հետեւեալ տեղեկութիւններն է հարողում Բագրի շրջանից, սեպ-

տեմբերի վերջերին:

«... Վազոնում աղբէջանցի թուրքերի հետ էին ինձ ներկայացրել որպէս մուսուլման, և վստահութեամբ էին վերաբերում: Պատմեցին, որ Բագրի մօտիկ անտաւում երկաթուղին յաճախ կանգնեցում է աւազակների կողմից և կողոպտւում է: կառավարութիւնը ի վիճակի չէ ստացն առնելու:

Կովկասի թուրքերը բարբառին փոխւած չին. նոյնն են ինչ որ և առաջ: Մի կայարանում, թուրք խանութպանից մի ձմերուկ զնեցի: Վազոնի ծանօթ թուրքը մօտենալով յայտնեց խանութպանին, որ ես մուսուլման եմ: Մարդը իսկոյն ձմերուկը ձեռքեցս առաւ, զնայ ամբարը, մի ուրիշ ձմերուկ քրտու և ստան հալեց: Երբ վազոնում ինձ հետ ճամբորդող երրորդայիններին և ուսանիւնը հիւրասիրեցի, նրանք հիայան, այնքան որ հրաշալի էր. իսկ իրենց զնածը նոյն խանութից անպէտք էր և աւելի թանկ: Դէպքը չնչին է, բայց խիստ բնորոշ:

Բագուում կեանքը անհամեմատ աւելի տանելի է Մոսկուայի համեմատութեամբ. հացը բաւական ստատ է, նաև միսը, հագուստեղէնն ու յաբարը: Կայ շարժում, կենդանութիւն: Հայերը դուրս են շարուած իրենց սեփական տներից. նրանցից շատերը մեռել են թշուառութիւնից, ոմանք էլ փողոցներում, յետին աղքատութեան մէջ, անմուշկա՝ արեւածաղիկ, ձմերուկի, դրամի կուտ են ծախում, իսկ նրանց բնակարաններում թուրքեր կամ ուսու շեկիստներ են ապրում: Աղբէջանի հայ դիւղացիութիւնը թշուառ վիճակում է ապրում. տեսայ շատերին՝ մերկ են ու բոխոտ:

Բագուում հանդիպեցի հայերի, որոնք ընտանիքով գաղթել էին Երեանից ու Հայաստանի միւս վայրերից: Ըստ նրանց ասութեան այժմ Բագուում մեծ քանակութեամբ հայեր կան. Երեանում կեանքը աւելի աժան է, բայց դործ և դրամ չկայ, ուստի և գաղթում են դէպի Բագու և ուրիշ կողմեր:

Մահօթներս գարհուրելի բաներ պատմեցին. ընտանեկան բարոյական կեանքը քայքայւած է. նոր սերունդը, չնչին բացառութեամբ, այլատերւած, այլանդակւած է:

Հայերի և թուրքերի յարաբերութիւնը լաւ չէ, իրար հետ լարւած են: Կոմունիստներն էլ, կարծես, ոյժ են տալիս հակաուսուլման. ճիշտ Գալիցիայի պէս: Այժմ առաջնութիւնը թուրքերինն է. հայերը խեղճ են, ամէն սապարէզից զբւած, կարծես, օտար, թշնամի երկրում լինեն...»

Կեանքի բոլոր սապարէզներում այսպէս է. ո՛չ մի ուղղութիւն և արդարութիւն, բացի կեղծիքից և գեղծարարութիւնից: Ձի մնացել և սկզբունքային կոմունիստ. ամենքը շահադիտական նպատակով են աշխատում, աթոռի և պրոսֆիէի մարդիկ են: Շատերը անգրագէտ՝ բարձր պաշտօններ ունեն, չաղ ուճիկներ են ստանում, վայելում են առանձին արտօնութիւններ, իրենց ձեռքը են առել իշխանութեան մեքենան և անխնայ կերպով հարստահարում են խեղճ ժողովուրդին — ահա ձեզ «բանուորա-գիւղացիական իշխանութիւնը», ահա՛ ձեր նաճումները...»

ԽՂՃԻ ԱՅԱՏՈՒԹԻՒՆ

. . . . . 20 Նոյեմբեր.

Այս նամակը ուղարկեմ եմ ներքևի կրօնին և եկեղեցուն Հայաստանում: Մեզ՝ սոցիալիստներին համար այս հարցը շատ պարզ է. կրօնը անհատի մասնաւոր գործ է: Մենք դատուում ենք խղճի ազատութիւն. հաւատացողը կարող է հաւատալ, անհաւատը՝ չհաւատալ: Եւ կարծում ենք, որ այսպիսի ազատութեամբ ժողովրդի մտաւոր մակարդակը բարձրացնելով և վարչափարական քարոզով միայն կարելի է չէզոքացնել կրօնի վնասակար դերը հասարակական կեանքում, իսկ բրտնութիւնն ու հալածանքը, ընդհակառակը, կուժեղացնէ կրօնի բացասական ազդեցութիւնը ժողովրդի մտքի վրա:

Բողեկեկները այլ կերպ են մտածում. նրանք ուզում են բանտով ու չէկայով, բռնութեամբ ու սպանալիքով արմատախիլ անել «կրօնական թոյնը» և, ինչպէս բոլոր սպարէզներում, այստեղ էլ հասնում են հակառակ արդիւնքի: Առնենք, օրինակի համար, «Հայաստանի Անաստածների Միութիւնը» իր «Անաստած» օրգանով. կառավարութիւնը անապիսի փող է ծախսում սրանց վրա, բայց մի յաջողութիւն ունե՞ց: Ո՛չ մի յաջողութիւն: «Միութիւն»-ը ընդհանուր արհամարհանքի առարկայ է և մի քանի խեղճ ու կրակ կոմսոմոնիերից կամ վարձկան մտաւորականներից այն կողմը չի անցնում: Իսկ «Անաստած»-ը այնքան՝ գունդ է, այնպիսի տափակ ու անհամ բաներ է գրում ու փողոցային նկարներ հրատարակում, որ մի քիչ արժանապատուութիւն ունեցող մարդը զգանքով դէն է շարժւում: Մի նմոյշ միայն. այս տարւայ Պէ Ց-ում «Անաստած»-ը «Հակակրօնական-հանրագիտական բառարան» բաժնում է գրում է.

«Աստուածածին. Առանց ամուսնանալու զաւակներ ծնող կին: Այս կանանց թիւը դնալով՝ շատանում է ամբողջ աշխարհում: Աստուածածինները տարածում են ամէն տեսակի վեներական հիւանդութիւնները... Եւրոպայում քիչ կանայք կան, որ աստուածածին չեն»:

«Աստուած... Միբրտաւոր խրտուիլակ, որով կապիտալիստներն իրենց կողոպտուող պաշտպանում են կողոպտուած մասաներից: Մի տեսակ վարքագոյն (ոտոբկան) կապիտալիզմի փողոցում կանգնած»...

Այս ձևերով ուղարկեմ են տղէտ վելուցումը գլխից հանել կրօնական նախապաշարութիւնը. Ի հարկի, գիւղացին անելի ամուր է կալում իր «պղծւած» և «հալածական» հաւատին:

Կամ թէ եկեղեցիների վերաբերմամբ. իբրև թէ ազատ, բայց իսկպալէս բունի կերպով փակուած են եկեղեցիները և տակը բացւում ակումբներ կամ ուրիշ նման հիմնարկութիւններ: Բողեկեկները հաւատացնում են, թէ ժողովուրդը ի՛ր կամքով է անում, իսկ իրականութեան հակառակն է. վերլի հրամանով կամ կենտրոնից եկած գործչի կարգադրութեամբ տեղական «բլիթը» հասաւում է վելուցանելին և ստալինական է եկեղեցին վերածել ակումբի: «Ո՞վ դէմ է, ձեռք բարձրացնի», հարցնում է հաւաքածոներին: Ո՞վ է գիժ րոր ձեռք բարձրացնի, և «միաձայն» որոշում է հան-

ում: Այսպէս է, որ բազմաթիւ եկեղեցիներ փակւեցին. ժողովրդի կրօնամուլութիւնը դրանով վերացա՞ւ: Ի հարկէ, ո՛չ:

Կամ առնենք «Ազատ եկեղեցու» պատմութիւնը: Երջանկալիչատակ Աշոտ Յովհաննիսեանը երբ Հայաստանի դիկտատոր էր, մտածեց, Ռուսաստանի օրինակով, հայոց եկեղեցին ներսից պառակտել՝ «ազատ եկեղեցի» ստեղծելով: Առաջ քաշեցին Բէնիկ վարդապետն պէս գեաղա-գիւղաներ, փող տրուեց, բռնի կերպով իւլեցին գանազան եկեղեցիներ և տրուեցին «բէնիկականներին», հիմնեց «Ազատ Եկեղեցի» թերթը — ասազին աղմուկ, իրարանցում: Հոսանքը եղաւ այն, որ ժողովուրդը աւելի ևս կապուեց լուստորչական եկեղեցու հետ, գաղութներից սկսեցին լաւել բուռն բողոքներ, սուր դժգոհութիւններ տարւ գեաղ և երիտասարդ կոմունիստների շարքերում. ինչպէ՞ս կարելի է կրօնի դէմ կուել և նոր եկեղեցի հիմնել — և կառավարութիւնը փակեց «Ազատ Եկեղեցի» թերթն ու կազմակերպութիւնը ու երեսից ձգեց Բէնիկին, որը այժմ Ֆարաբուն մի կողմ նետած՝ ման է գալիս աշխարհական շորերով:

Ո՛չ «ազատ եկեղեցին» օգնեց, ո՛չ «անաստած»-ը, ոչ էլ չէկան. կրօնական զգացմունքը քանի դնում, սաստիանում է Հայաստանում, երբեմն ստանալով ցուցական ձևեր: Օրինակ, ուխտագնացութիւնը դէպի գանազան սրբավայրերը, կամ մտառը մորթիւլը այնպիսի չափերով է կատարւում, որ առաջ երբեք չէր պատահում: Միայն Նորքի Աստուածածնի պէս մի ուխտատեղի ամէն տարի իր տօնի օրը գրաւում է հազարաւոր բազմութիւններ, այս տարի կար 300-ից աւելի մտառ, մի բան, որ տեսնւած չէր առաջ: Շիրակի Չարխափանի տօնը կատարւում է աւելի մեծ հանդիսաւորութեամբ, չտեսնւած բազմութիւնների ներկայութեամբ: Նոյնը և ուրիշ տեղեր: Որքան բողեկեկան խտութիւններ կրօնի և եկեղեցու դէմ ուժեղանում են, այնքան ժողովրդի կրօնամուլութիւնը աւելանում է: Կրօնն ու եկեղեցին ժողովրդի համար դառնում են, մի տեսակ, զաղաքական գործօններ:

Այս բանը տեսնելով՝ բողեկեկները դէմում են գազանագան միջոցներ: Մինչև վերջին տարիները անդուլ պայքար էին մղում էլմիաժանի դէմ՝ աշխատելով պայթեցնել այդ «անբարոյականութեան օշախը», այժմ՝ մերթ շոյելով, մերթ սպառնալիքով՝ ձգտում են աննել իրենց ազդեցութեան տակ և օգտագործել նրան լիաւորապէս գաղութային զաղաքականութեան համար:

Ես շատ անգամներ եղել եմ էլմիաժանում, որի ամէն անկիւնը ծանօթ է ինձ. անշնչելի միջուրտ և ստեղծւած այժմ այնուից: Վանքի միաբանութիւնը հարեկամ է թէ դարից և թէ ներսից. միմիայն մտդնալ-գալ չկայ՝ վայսենում են: Երջանկատու են լրտեսներով: Միաբանական ժողովներում ազատ խօսելի լինում, որովհետև միաբանների մէջ լրտեսներ կան, որոնք ամէն ինչ մանրամասնորէն յայտնում ան կառաք վարութեան: Եթէ մէկը անդուլութիւն է ունենում ազատ արտայայտելու, հետեւել օրը կանչում բացատրութիւն են պահանջում: Միաբանութեան մէջ որպէս կատաղի լրտես է ճանաչւած Սալիկ վարդ. Գազեանը,

որը ցարական իշխանութեան օրով էլ կտակածելի ընթացք ունէր: Այսպէս թագէ վարդապետը: Իշխանութեան երեսին քաղցր փայտներ է արձակում և Գլորգ եպ. Չկրէքչեանը: Արանք յայտնի են, կան և կատարածելիներ: Մկրտանները կատարածում են միմեանց վրա. կատարածում են պաշտօնեաների վրա: Մխարանների ծառաներին շարունակ կանչում և տեղեկութիւններ են պահանջում, հարցաքննութիւններ լինում, հարկադրում են, որ յարեւր տան, ստան, թէ կ'ընչ է կատարում մխարանների մէջ, ո՞վ է գնում-գալիս, ի՞նչ է խօսում, ի՞նչ է արա կամ նրա կարծեքը...

Անմիջական կատարութեան ճշման տակ էր, որ արևից վերջին կոնզակր գաղութներին: Այդ կոնզակով իջմիածինը հրաւիրում է բոլոր հայերին ճանաչել և հպատակել խորհրդային իշխանութեան: Միեւնոյն ժամանակ, Երևանի կառավարութիւնը աշխատում է իջմիածին միջոցով արտասահմանի լեւեհրում նշանակել իրեն կողմնակից առաջնորդներ և այն, ինչ որ շարժուցեց անել Չօկերի միջոցով, գլուխ բերել եկեղեցականների ձեռքով: Այսպէս, հարաւային Պարոկատանում արդէն կայ բոլշեկիան Միսրոպ եպ. —ը, որ իր թեթևամտութեամբ քայլերով բաւական յիմար գրութեան մէջ է գրել թէ՛ իր թեմը, թէ՛ իջմիածինը է թէ՛ հէնց իրեն: Վերջերս Երևանում խօսուում էր, որ Մխարայը շարունակ «գոնաներ» (մատուցիւններ) և բողոքներ է գրում Ատրպատականի առաջնորդի դէմ: Իր այդ գրութիւնները ուղարկում է փոստով՝ ռալ գիտնուլով, որ Գլուցեղի կողմից կը բացուեն ու կը կարգապահեն: մէկ հարաւում կերպ նապաստակ է ուզում սպանել՝ և՛ իր շարժած Միլիթ-Քանդեանին վարկաբեկել, և չէկայի աչքին լուամարդ կերակ, և չէ մտածում, որ իր այդ տրամար վարձուներով վտանգում է իր թեմը յայտ պարսից կառավարութեան: Կիբը և կաթուղիկոտական աթոռի տեղը բոլորովին կուրացրել են այդ մարդուն...

Այստեղ դարձեալ օրւայ հարց է նաև Ատրպատականի առաջնորդի հեռացման խնդիրը: Կառավարութեանը նորից պահանջել է, որ իջմիածինը թաւրիկից հեռացնէ ներսն արքայ: Միլիթ-Քանդեանին: Իրագնի մարդիկ հաստացնում են, որ Երևանի կառավարութեան այս յամարութիւնը հետևանք է արտաքին սպառնքելի: Անգորայի կառավարութիւնը Մոսկւայի միջոցով պահանջում է, որ Միլիթ-Քանդեանը հեռացի Ատրպատականից, որովհետև —ասում են թիւրքերը— Միլիթ-Քանդեանը հովանաւորում է դաշնակներին, իսկ դաշնակները արգելք են լինում թիւրքալի և Մորհրդային Հայաստանի բարեկամութեան գաղափարին: Այսինքն՝ այժմ է հասկանալ, որ Միլիթ-Քանդեանի և «դաշնակների» ներկայութիւնը խոչընդոտ է հանդիսանում Անգլոսայի դործակալների համաթիւրքական գործունէութեան Ատրպատականում: Եթէ այս լուրը ճիշտ է\*), ապա, սերմին, ի՞նչպիսի անկման է հասել Երևանը, որ իր ձեռքով օգնում է համաթիւրքական ծրագրիներին, որոնք ուղղւած են ամենից առաջ Հայաստանի և հայերի դէմ...

անը, որ իր ձեռքով օգնում է համաթիւրքական ծրագրիներին, որոնք ուղղւած են ամենից առաջ Հայաստանի և հայերի դէմ...

Իջմիածինը ստիպւած՝ մի անգամ էլ կարողուր է Միլիթ-Քանդեանին հրատարակ պաշտօնից: Այդ նպատակով թուրքի է ուղարկում նորընծայ եպիսկոպոս Արսէն Ղալչեանը, որը ժողովրդին ու պարսից կառավարութեան ուղղած կոնզակները ձեռքին՝ շուտով հասնելու է թաւրից և կատարելու առաջնորդական նոր ընտրութիւն Միլիթ-Քանդեանի տեղը: Առհասարակ, խօսք ու գրոց շատ կայ Ղալչեանի առաջնութեան շուրջ: Ասում են, որ նա աշխատելու է իրեն ընտրել տալ Ատրպատականի առաջնորդ: Ասում են, որ Պարոկատանի մեկնելուց առաջ՝ անցնելու է Թիֆլիս ու Մոսկւա՝ ստանալու համար խորհրդային իշխանութեան համապատասխան հրահանգներ: Ասում են՝ թաւրից գնալուց առաջ պետի գնալ թէ՛ հրան՝ խորհրդակցելու համար Միսրոպ եպ. —ի և բոլշեկի ներկայացուցիչների հետ: Ասում են, որ նա աւելի շուտ կառավարութեան ներկայացուցիչ է և գալիս է յատուկ յանձնարարութիւններով: Մի խօսքով, դուք այդտեղ արտասահմանում, աւելի լաւ կ'իմանաք այդ անկը:

Հետաքրքրական է և մի ուրիշ երևոյթ. մեր վարիչները այժմ աշխատում են, որ արտասահմանի թեմերի համար առաջնորդներ ուղարկեն խորհրդային սահմաններում սպորդ հոգևորականներին: Առաջնութիւնը տրւում է Պարոկատանին, որովհետև այս երկիրը անմիջական հետաքրքրութիւն է ներկայացնում խորհրդային արտաքին քաղաքականութեան համար: Երկար ժամանակ խօսուում էր և Եւրոպայի առաջնորդութեան մասին, որի համար դրւած էր Գարեգին եպ. Յովսէփեանի թեկնածութիւնը: Երևանը անցապէր շուտից նրան, որովհետև վստահ չէր, թէ նա արտասահմանում կը հետևի իր հրահանգներին, և ինչո՞ւ մարդը ստիպւած եղաւ հրատարակ... «գիտական գրադուներին» պատճառով:

Ահա ձեզ մի քանի գծեր ու փաստեր, թէ խղճի ի՞նչ «պատուութիւն» է տրւում մեր աշխարհում և թէ բոլշեկիները ի՞նչպիսի «հէնցութիւն» են պահում եկեղեցական խնդիրներում: Աւելին՝ դուք դատեցէք:

ԵՐԵՄԱՆՑԻ

ՉԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ  
(Մասնաւոր մամուլից)

28 Հոկտ. Թիֆլիս.

... Սեպտեմբեր 26-ի գիշերը Երևանում եղան մի շարք բանտարկութիւններ: Միտամանակ բանտարկութիւններ կատարեցին Հայաստանի բոլոր գաւառներում և բանտաներին բերին Երևանի Գէպէտն: Երևանից մի մասին տեղափոխեցին Թիֆլիս՝ Մետեխի

\*) Ուրիշ ազգիւրից էլ մեզ յայտնի է, որ քիւրքերի կողմից մեմո պահանջ դրւած է Ատրպատականի եպիսկոպի և, մասնաւորապէս. դաշնակապակներին նկատմամբ: Այսպիսով, բոլշեկի-ֆեմալական «միացեալ ցա-

կատ»-ը, որ 1926ին խորտակեց Հայաստանի անկախութիւնը, շարունակուում է դաւել հայ ժողովրդի դէմ: ԽՄԲ.

րանոր՝ սյուսեղից աքսորելու համար Ռուսաստանի խորքերը և Սիրիը: Բանասերիւածնէրը, առհասարակ, քաղաքական ասպարէզից քաշուած մարդիկ են, ինչպէս նախկին նախարար Ս. Թորոսեանը, իորհրգարանի անդամ Մ. Տէր-Գրիգորեանը և այլն: Դրանից առաջ էլ րանասերիւցին և նոյնպէս աքսորուցին մի շարք նախկին լէւէրներ՝ կար. Յովհաննիսեան և ուրիշներ:

Առհասարակ, վերջին ամիսները Հայաստանից հասնող լուրերը չափազանց անմխիթար են: Հալա-

ծանքները աւելի են սաստկացել. փախչող փախչողի վրա է: Թիֆլիսը լիքն է Հայաստանից հեռացած մտաւորականներով, որոնք անգործ ու սոված՝ փողոցներ են չափում: Հայաստանի գանազան կողմերից, յաճախ ամբողջ ընտանիքներով, շարունակում են հեռանալ: Այստեղ շատերի գրութիւնը անտանելի է. շատերը գնում են Ֆազու, Հիւսիսային Կովկաս և Ռուսաստան:

Գրիլիք շատ կայ, բայց գործ ստեմ, կամ գործ խոստովանիմ...



Մ Ե Ր Ա Լ Բ ՈՒՄ Ը

Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր ժողովը որոշած է կուսակցութեան քառասունմեակի առթիւ «*Րյու ընծայել գաշնակցական մեռած եւ նահատակած գործիչներէ մէկ ալրում*»:

Որպէսզի կարելի լինի Ընդհանուր ժողովի այս որոշումը իրականացնել կարելի կատարելութեամբ, անհրաժեշտ է, որ մեր մարմիններն եւ ընկերներն եւս օր առաջ բերեն իրենց գործն աջակցութիւնը:

Նախնական ծրագրի համաձայն կենթադրի արումին մէջ ամփոփել բոլոր մեռած եւ նահատակած ընկերներու լուսանկարները՝ կենսագրական ամփոփ տեղեկութիւններով: Եթէ ոեւէ ընկերոջ նկարը կարելի չըլլայ գրտնել, արումին մէջ պիտի տրւին միայն կենսագրական տեղեկութիւններ:

Արդ՝ ընկերներէն եւ մարմիններէն կը խնդրենք՝ հաւաքել եւ օր առաջ հասցնել «Իրօշակ»-ի հասցէով:

Ա.— Նահատակ եւ մեռած ընկերներու նկարներ:

Բ.— Նահատակ եւ մեռած ընկերներու մասին կենսագրական տեղեկութիւններ:

Այս աշխատանքը պէտք է կատարել առանց յետաձգելու: Ամէն շրջան պէտք է ջանայ նախ՝ իր շրջանի մեռած ընկերներու նկարներն ու լրիւ ցանկը տալ, ապա՝ ուրիշ շրջանի կամ ընդհանուր գործիչներու մասին տեղեկութիւններ: Փոյթ չէ, թէ միեւնոյն ընկերոջ մասին մէկէ աւելի կենսագրականներ կամ նկարներ ստացին. անոնք կը նպաստեն ձեռնարկի յաջողութեան:

Եթէ գտնւին նկարներ, որոնց տէրերը չհամաձայնին տալ ուղարկելու համար, կարելի է հանել անոնց լուսանկար պատնէներ:



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

ՍՏԱՑԻԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Արամ Դառօնէ, Օրբիի Երգեր, Լիոն, 1930:
- Հ. Աճէմեան, Հայոց Հայրիկ, ա. հատոր, Թաւրիզ, 1929:
- Մկ. Պարսաճեան, Ա. Ահարոնեան, կեանքը և գործը, Փարիզ, 1929:

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեզինէն է Ֆրանսայի, Յունաստանի, Իտալարիայի, Ռումանիայի, Եւրոպական այլ երկիրներէ և Սիւրիայի համար՝ 25 ֆրանսական ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրներէ համար՝ երկու դալար:

Բաժանորդադրուել կարելի է իւրաքանչիւր ամսի սկզբից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1929 — 30 (նմբադրական)	1
Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին (Ն. Հանգոյց)	5
Մոսկուայի երասանգով (Ս. Վրացեան)	10
Սևհարեցի Սաֆօի ինքնակենսագրութիւնը	16
Թիւրքիոյ շուրջ	21
Մեր գոհերը	25
Թղթակցութիւններ	28